

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՌՆԱԿ ԳԵՈՐԳԻԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ МЕЖДУНАРОДНЫХ ОТНОШЕНИЙ

АРНАК САРГСЯН

ВОПРОСЫ ПОЛИТИЧЕСКОГО
УЧАСТИЯ НА ЭТАПЕ
ДЕМОКРАТИЧЕСКОЙ
КОНСОЛИДАЦИИ

ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ
2022

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF INTERNATIONAL RELATIONS

ARNAK SARGSYAN

ISSUES OF POLITICAL
PARTICIPATION IN THE PHASE OF
DEMOCRATIC CONSOLIDATION

YEREVAN
YSU PRESS
2022

ՀՏԴ 321.7
ԳՄԴ 66.031.1
Ս 259

*Հրատարակության և երաշխավորել
ԵՊՀ միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի գիտական խորհուրդը:*

Գրախոսներ՝

քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Ս. Ալեքսանյան
քաղաքական գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Փ. Ենգոյան
քաղաքական գիտ. թեկնածու Կ. Գ. Խոջայան

Սարգսյան Առնակ

Ս 259 Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում / Ա. Սարգսյան.- Եր.: ԵՊՀ. 2022.- 194 էջ:

«Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները ժողովրդավարական համախմբման փուլում» մենագրության մեջ ուսումնասիրելով քաղաքական մասնակցության ոչ կոնվենցիոնալ տեսակները, հիմնավորվել է հասարակության արդիականացման փուլում դրանց կիրառման ոչ միայն նպատակահարմարությունն ու արդյունավետությունը, այլև անհրաժեշտությունը ժողովրդավարության ինստիտուցիոնալ համախմբումը իրականացնելու համար: Աշխատանքում ուսումնասիրվել են քաղաքական մասնակցության տեսահայեցակարգային մոտեցումները քաղաքական մտքի պատմության տարբեր շրջաններում, դիտարկվել է քաղաքական մասնակցության տեսակիրառական նշանակությունը արդիականացման փուլում, վեր են հանվել ժողովրդավարության անցման հիմնական օրինաչափությունները և ժողովրդավարության համախմբման գործում մասնակցային մշակույթի դերակատարությունը: Այս համատեքստում քաղաքական մասնակցության հիմնախնդիրը հիմնավորվել է որպես ժողովրդավարական համախմբման կարևոր նախադրյալ:

Գիրքը կարող է օգտակար լինել բուհերի ուսանողների, քաղաքական մասնակցության հիմնահարցով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 321.7
ԳՄԴ 66.031.1

ISBN 978-5-8084-2566-8

© ԵՊՀ հրատ., 2022
© Սարգսյան Ա., 2022

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	7
ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ	19
1.1. Քաղաքական մասնակցության հիմնախնդիրը արդի քաղաքագիտության դիսկուրսում	19
1.2. Քաղաքական մասնակցության ձևերը ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության կայացման իրողություններում	32
1.3. Քաղաքական մասնակցությունը որպես ժողովրդաիշխանության դրսևորման առանցքային նախապայման	51
1.4. Քաղաքական իշխանության լեգիտիմության հիմնահարցը մասնակցության ինստիտուցիոնալացման պայմաններում	76
ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾՈՆ ՀՀ-ՈՒՄ ...	85
2.1. Ընտրական գործընթացի դրսևորման առանձնահատկություններն ու ընթացակարգերը ՀՀ-ում	85
2.2. Մասնակցության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները քաղաքացիական հասարակության մեջ	114
ԳԼՈՒԽ 3. ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ	126
3.1. Երիտասարդության մասնակցության հիմնախնդիրները ՀՀ-ում ժամանակակից երիտասարդական քաղաքականության իրականացման պայմաններում	126

3.1.1. Երիտասարդության քաղաքական ներգրավվածության հիմնական գործոնները ՀՀ-ում.....	144
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	170
РЕЗЮМЕ	176
SUMMARY.....	179
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	182

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական մասնակցությունը ժողովրդավարական հասարակարգի և քաղաքացիական հասարակության կայացման կարևորագույն գրավականն է: Առանց հասարակական-քաղաքական կյանքին քաղաքացիների ներգրավվածության՝ հնարավոր չէ ժողովրդավարական կառավարման համակարգում արդյունավետ գործունեություն իրականացնել: Հասարակարգերի վարչաձևերը տարբերվում են քաղաքական որոշումների կայացման գործընթացին քաղաքացիների ներգրավվածությամբ: Այլ վարչաձևերից ժողովրդավարականի անցումը պայմանավորված է ինչպես իշխանության տարանջատման սկզբունքով, մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորությամբ, ընդդիմության ինստիտուտի առկայությամբ, հասարակական-քաղաքական բազմակարծությամբ, բազմակուսակցական համակարգով և այլ առանձնահատկություններով, այնպես էլ մասնակցային մշակույթի դրսևորման տարբեր հայեցակետերով:

Քաղաքացիների կամարտահայտման ձևը ժողովրդավարական հասարակարգի գործառնության առանցքային սկզբունքն է, որի միջոցով տեղի է ունենում հասարակական-քաղաքական կյանքին քաղաքացիների մասնակցությունը, որը, ի դեպ, միանշանակ չէ: Այսինքն՝ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին հիմնականում դրսևորվում է ընտրություններին մասնակցությամբ, սակայն ժողովրդավարական հասարակարգերում հանդիսանալով քաղաքական մասնակցության ապահովման գործընթաց՝ այն ամբողջությամբ չի արտահայտում քաղաքացիների մասնակցությունը: Նշենք՝ ինչպես նախկինում, այնպես էլ հիմա քվեարկությունը քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու միջոց է, բայց հասարակության փոխակերպման արդյունքում հետզհետե ընդլայնվում

են նաև ոչ կոնվենցիոնալ մասնակցային գործողությունները, որոնք վկայում են հասարակության քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակի մասին: Մասնավորապես, ներկայացնելով և համեմատելով տարբեր տեսաբանների մեկնաբանությունները քաղաքական մասնակցության վերաբերյալ՝ մատնանշել ենք, որ ժողովրդավարական համախմբման փուլում գնալով ավելի է արդիական դարձել քաղաքացիների մասնակցության նոր ձևերի ներդրման և կիրառման անհրաժեշտությունը հասարակական-քաղաքական կյանքում: Հետևաբար ժողովրդավարական հասարակարգի և քաղաքացիական հասարակության դրսևորման համար առավել քան կարևոր է նորմատիվա-իրավական և գործառնական ընթացակարգերով մասնակցային գործընթացի կանոնակարգումը:

Ի հավելումն վերոշարադրյալի՝ նշենք, որ համաշխարհայնացման պայմաններում առանց քաղաքացիների՝ իրենց իրավունքների ընկալման և իրացման հնարավոր չէ պատկերացնել ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացումը: Յուրաքանչյուր ոք հասարակական հարաբերությունների ցանկացած ոլորտում պետք է արտահայտի իր համոզմունքները և հանդիսանա դրանք կրողը: Գիտակցված մասնակցային գործընթացը արդի հասարակարգի ձևավորման և կայացման ուղենիշն է, երբ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն է դառնում պետության քաղաքացին, իսկ պետական պաշտոնատար անձինք իրենց գործողություններով հաշվետու են նրա առաջ:

Նորանկախ ՀՀ-ում քաղաքական համակարգի փոխակերպման գործընթացը սկիզբ դրեց ժողովրդավարության անցման գործընթացին, որը հանգեցրեց հասարակական-քաղաքական կյանքի արմատական վերափոխմանը: Իսկ այդպիսի փոխակերպումները հետապնդում են քաղաքացիական հասարակության

ձևավորման անհրաժեշտություն: Որդեգրելով ժողովրդավարացման ուղին՝ ՀՀ-ում ներդրվեցին իրավական և սոցիալական պետության կառուցման ընթացակարգերը: Մասնավորապես, նոր պայմաններում քաղաքական որոշումների ընդունման գործընթացը պահանջում էր այնպիսի մասնակցային մշակույթի ձևավորում, որը կհամապատասխաներ ժողովրդավարության սկզբունքներին և կնպաստեր ժողովրդաշխանության իրացմանը: Հետևաբար ժողովրդավարական համախմբման փուլում ՀՀ քաղաքական համակարգի կայունացման, մասնակցային գործընթացի ինստիտուցիոնալացման տեսանկյունից արդիական են քաղաքական մասնակցության կառուցակարգերի ներդրումը, դրանց ինստիտուցիոնալ ամրագրումն ու հասարակության քաղաքացիական գիտակցության մեջ մասնակցային մշակույթի արժևորումը, հատկապես հասարակության շարժիչ ուժի՝ երիտասարդության, հասարակության քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում և որոշումների կայացման գործընթացներում ներգրավվածությունը՝ որպես համախմբված ժողովրդավարության իրականացման կարևոր նախադրյալներ:

Մեր աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել «Քաղաքական մասնակցություն» հասկացությունը, բացահայտել քաղաքական մասնակցության դրսևորման առանձնահատկությունները, ուղենշել ժողովրդավարական համախմբման փուլում ՀՀ-ում քաղաքական մասնակցության հիմնախնդիրները: Այդ հիմնախնդիրների վերլուծությունը հնարավորություն կտա ձևավորել քաղաքական մասնակցության մշակույթի կայացման ընթացակարգերը և վերհանել քաղաքական համակարգի ժողովրդավարական համախմբման փուլում քաղաքական մասնակցության ձևերի դրսևորումները ՀՀ-ում:

Աշխատանքում առաջադրվում են ուսումնասիրության հետևյալ **խնդիրները**.

- Բացահայտել քաղաքական մասնակցության հիմնախնդրի ուսումնասիրման տեսական հիմքերը հասարակական-քաղաքական մտքի և հայեցակարգերի շրջանակներում:
- Վերհանել քաղաքական մասնակցության չափորոշիչներ, որոնց կիրարկումը կհանդիսանա ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման սկզբունք:
- Դիտարկել հասարակական-քաղաքական կյանքին մասնակցության և չմասնակցության պատճառները:
- Բացահայտել քաղաքական մասնակցության դրսևորման առանձնահատկություններն ու հիմնավորել հասարակական-քաղաքական կյանքում դրանց ներդրման անհրաժեշտությունը:
- Առանձնացնել մասնակցության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները քաղաքացիական հասարակության մեջ:
- Ուսումնասիրել ժողովրդավարական համախմբման տեսությունը, ժողովրդավարական զարգացման հեռանկարների ուղենշման համար բացահայտել վերջինիս հիմնական գործոնների էությունն ու ընդհանրությունը:
- Վերլուծել ընտրական գործընթացը, իսկ վերջինիս իրավաչափ իրականացումը ներկայացնել որպես ժողովրդավարական ինստիտուտների կազմավորման կարևոր սկզբունք:
- Դիտարկել երիտասարդության մասնակցության հիմնախնդիրները հասարակական-քաղաքական կյանքում:
- Վերհանել ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման և ժողովրդավարական համախմբման համատեքստում մասնակցության ինստիտուցիոնալացման ու մասնակցային մշակույթի զարգացման և ամրապնդման

գործոնները՝ որպես համախմբված ժողովրդավարության հաստատման կարևոր նախադրյալներ:

Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը: Սույն աշխատանքի շրջանակներում ներառվող հիմնախնդիրների հետազոտությունը ոլորտի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետների գործունեության տիրույթում է: Քաղաքական մասնակցության հիմնախնդիրները դեռևս անտիկ ժամանակներից եղել են տարբեր տեսաբանների և մտածողների ուշադրության կենտրոնում: Միշտ եղել է այն հարցադրումը, թե ով պետք է ղեկավարի պետությունը: Այդ խնդրի վերաբերյալ առանձին մտքեր առկա էին դեռևս անտիկ շրջանի մեծ փիլիսոփաներ և քաղաքական մտածողներ Պլատոնի¹, Արիստոտելի² և ուրիշների աշխատություններում, իսկ հետագայում քաղաքական մասնակցության մեկնաբանման ընդգրկուն մոտեցումներ առաջ քաշվեցին Լ. Միլբրեթի և Մ. Գոելի³, Վ. Լամի⁴, Հ. Մաքլիլուսկիի⁵, Ս. Հանթինգթոնի և Ջ. Նելսոնի⁶, Գ. Ալմոնդի⁷, Ռ. Դալի⁸, Ս. Վերբայի և Ն. Նայի⁹,

¹ Տե՛ս **Платон**, Собрание сочинений, т. 4, М., 1994:

² Տե՛ս **Аристотель**, Сочинения, т. 4, М., 1983:

³ Տե՛ս **Milbrath L., Goel M.**, Political Participation: How and why do people get involved in politics?, 2nd edition, Washington, D.C., University Press of America, 1977:

⁴ Տե՛ս **Lam W.**, Alternative understanding of political participation: challenging of the myth of political indifference in Hong Kong, International Journal of Public Administration, 2003, vol. 26, <https://www.tandfonline.com/doi/abs/10.1081/PAD-120019232>:

⁵ Տե՛ս **McClosky H.**, Political Participation, in David L. Sills (ed), International Encyclopedia of the Social Sciences, Vol. 12, New York: Macmillan Co. & Free Press, 1968:

⁶ Տե՛ս **Huntington S., Nelson J.**, No Easy choice: Political participation in developing countries, Harvard University press, 1976:

⁷ Տե՛ս **Almond G., Powell G.**, Comparative politics: A developmental approach, pub: Little, Brown and Company, 1966:

⁸ Տե՛ս **Даль Р.**, Демократия и ее критики, М., “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), 2003:

⁹ Տե՛ս **Verba S., Nie N.**, Participation in America: Political Democracy and Social Equality, New York: Harper & Row, 1972.

Ջ. Թեորելի¹⁰ և ուրիշների կողմից, որոնք առաջ էին քաշել ինչպես քաղաքական մասնակցության իրականացման չափորոշիչները, գործառնական առանձնահատկությունները, այնպես էլ քաղաքական մասնակցության այլ ձևերի իրավաչափ կիրառումը:

Նշենք, որ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած փոխակերպումների արդյունքում ընդլայնվել է քաղաքական մասնակցության սահմանման տիրույթը՝ համապատասխանեցնելով ժողովրդավարացման չափանիշներին: Հետևաբար սույն աշխատանքը քաղաքական մասնակցության ուղղվածության ուսումնասիրությունն է, որտեղ դիտարկվում են ոչ միայն մասնակցային մշակույթի կայացման ընթացակարգերը, այլև վերջինիս լույսի ներքո ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարական անցումից համախմբում իրականացնելու օրինաչափությունները:

Այսպես, արագ փոփոխվող աշխարհում բնականաբար փոխվում են քաղաքական դաշտի իրավական և ոչ իրավական կազմակերպչական մեխանիզմները, և այդ փոփոխությունները հաշվի են առնում քաղաքագիտության մեջ քաղաքական մասնակցության հասկացության և բովանդակային մեկնաբանության նորարարական տարբերակների անհրաժեշտությունը: Ըստ այսմ՝ հասարակության արդիականացման գործընթացը նպաստեց ինչպես հասարակական-քաղաքական կյանքում մասնակցության որոշ ձևերի ի հայտ գալուն և զարգացմանը, որոնք ներկայումս հասարակական-քաղաքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված գործողություններում ավելի շատ են տարածված, այնպես էլ վերջիններիս խորը ուսումնասիրությանը, որոնց վե-

<https://scholar.harvard.edu/verba/publications?page=1>,

<https://www.press.uchicago.edu/ucp/books/book/chicago/P/bo3637096.html>:

¹⁰ Տե՛ս **Teorell J., Torcal M., Montero J.**, Political Participation: Mapping the Terrain. In J. W. van Deth, Montero J., Westholm A. (Eds.), *Citizenship and involvement in European democracies: A comparative analysis*, London & New York, 2007:

րաբերյալ գիտական հրապարակումները դեռևս սակավաթիվ են հայրենական քաղաքագիտության մեջ¹¹:

Քաղաքական մասնակցության հիմնախնդիրներին նվիրված ուսումնասիրությունները հատկապես լայն թափ են առնում արևմտյան քաղաքագիտական դպրոցի՝ ժողովրդավարական կառավարման տեսության տարբեր ներկայացուցիչների կողմից: Հարկ է նշել, որ կարևոր են ժողովրդավարական համախմբման տեսության ուսումնասիրությունը, ի մասնավորի ժողովրդավարական համախմբման հիմնական գործոնների էության ու ընդհանրության վերլուծությունը, ինչպես նաև այդ գործընթացի կրկնվող մոդելների բացահայտումը ժողովրդավարական զարգացման հեռանկարների ուղենշման համար:

Վերոհիշյալ հիմնահարցերին Դ. Ռոստոուն անդրադարձել է «Ժողովրդավարացման անցում. դինամիկ մոդելի փորձ» հոդվածում¹²: «Ժողովրդավարության համախմբում» հասկացությունը՝ որպես կատեգորիալ գիտաբան, 1986 թ. քննարկել են Գ. Օ'Ռոնելլը և Ֆ. Շմիտերը իրենց «Անցումը վարչահրամայական կառավարումից»¹³ աշխատության մեջ, որտեղ առավելագույնս ներկայացված է անցումնագիտական մոտեցումը: Նրանք նշել են, որ անցումը տեղի է ունենում որոշակի վարչահրամայական կարգից

¹¹ St' u **Norris P.**, *Democratic phoenix: Reinventing political activism*, Cambridge University Press, 2002: **Ekman J., Amna E.**, "Political participation and civic engagement: Towards a new typology", *Human Affairs* 22 (3), January 2009, <https://doi.org/10.2478/s13374-012-0024-1>, **Talo C., Mannarini T.**, *Measuring participation: Development and validation the participatory behaviors scale*, *Social Indicators Research* 123 (3), September 2015: **Жиро Т.**, *Политология*, пер. с полского, Харьков, изд. Гуманитарного центра, 2006:

¹² St' u **Растой Д.**, *Переходы к демократии: попытка динамической модели*, Полис, 1996, № 5:

¹³ St' u **O'Donnell G., Schmitter Ph.**, *Transitions from authoritarian rule: Tentative conclusions about uncertain democracies*, John Hopkins University Press, 1986: **Шмидтер Ф.**, *Угрозы и дилеммы демократии*, <http://www.politnauka.org/library/dem/schmitter.php>:

դեպի անորոշ «ինչ-որ բանի»: Այն կարող է կապված լինել ինչպես ժողովրդավարության հաստատման, այնպես էլ նոր և, հնարավոր է, առավել կոշտ վարչահրամայական կառավարման ձևի վերականգնման հետ: Չնայած կերպափոխման այդքան անորոշ հետևանքների մասին պատկերացմանը՝ Գ. Օ'Դոնելը և Ֆ. Շմիտերն առաջին հերթին կարևորել են ժողովրդավարական անցման հեռանկարը:

Լեզիտիմության հիմնահարցը՝ որպես համախմբման կարևոր հատկանիշ, ուսումնասիրել են Լ. Դայմոնդը¹⁴, Խ. Լինցը և Ա. Ստեֆանը¹⁵, համաձայն որոնց՝ բոլոր քաղաքական դերակատարները ինչպես ընտրանու, այնպես էլ զանգվածների մակարդակով հավատում են, որ իրենց հասարակության համար ժողովրդավարական վարչակարգը ավելի լավն է, քան ցանկացած այլ իրատեսական այլընտրանք, որն իրենք կարող են երևակայել:

Հատկանշական է, որ «Երրորդ ալիք» գրքում Ս. Հանթինգթոնն առանձին գլուխ է նվիրել արդեն ձևավորված ժողովրդավարական վարչակարգի ամրապնդման խնդիրներին և ժողովրդավարական համախմբմանը¹⁶:

Տ. Կարլը և Ֆ. Շմիտերը, «Ժողովրդավարացում. հասկացություններ, դրույթներ, վարկածներ» հոդվածում կարևորելով անցման ուղիների ընտրության հարցը, առանձնացնում են չորս հիմնական կատեգորիաներ՝ «պակտ», «բարեփոխում», «պարտադրում» և «հեղափոխություն»¹⁷:

¹⁴ Տե՛ս **Դայմոնդ Լ.**, Прошла ли “третья волна” демократизации?, “Политические исследования” (“Полис”), 1999, № 1:

¹⁵ Տե՛ս **Linz J., Stepan A.**, Problems of democratic transitions and consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, Johns Hopkins University Press, 1996: **Linz J., Stepan A.**, Toward consolidated democracies, Journal of Democracy 7 (2) (April), 1996:

¹⁶ Տե՛ս **Хантингтон С.**, Третья волна: Демократизация в конце XX века, РОССПЭН, М., 2003:

¹⁷ Տե՛ս **Карл Т. П., Шмиттер Ф.**, Демократизация: концепты, постулаты, гипотезы, (Размышления по поводу применимости транзитологической парадигмы при изучении посткоммунистических трансформаций), Полис, 2004, № 4:

Թեմային նվիրված ուսումնասիրությունները հատկապես խորությամբ իրականացվում են նաև Ռուսաստանում քաղաքական մտքի տեսության ներկայացուցիչների կողմից, որոնց շնորհիվ տարիների ընթացքում անցումնաբանական հետազոտությունների ոլորտում տեսական և գործնական հսկայական նյութ է հավաքվել՝ թույլ տալով մասնագետներին հանգամանորեն ուսումնասիրել անցումային գործընթացները, մասնավորապես՝ կառուցել միջմշակութային վերլուծություններ կատարելու մոդելներ: Ներկայումս անցումնաբանական հարացույցը մնում է մակրոքաղաքական վերափոխումների ուսումնասիրության մեթոդաբանական մոտեցումների աղբյուրներից մեկը: Մինևույն ժամանակ քաղաքական զարգացման համաշխարհային միտումները թելադրում են ոլորտի բացատրման գիտական գործիքակազմի նոր պահանջներ, որոնք այժմ համաշխարհային քաղաքականության մեջ առավել հաճախ են արծարծում «ազատական» և «վարչահրամայական» քաղաքական նախագծերի մրցակցության գաղափարը¹⁸:

Ա. Պշևորսկին «Ժողովրդավարություն և շուկա: Քաղաքական և տնտեսական բարեփոխումներ Արևելյան Եվրոպայում և Լատինական Ամերիկայում» հոդվածում¹⁹ համախմբման հիմնական գործոն է համարել քաղաքական զարգացման ընթացքը, ինչպես նաև նրան բնորոշ բարեփոխումները. նա ուշադրություն է դարձրել ոչ միայն քաղաքական ընտրանու, այլև հասարակության գիտակցության, քաղաքակրթվածության մակարդակին:

¹⁸ St' u **Кулагин В. М.**, Соревнование “либерального” и “авторитарного” проектов в контексте глобализации, Современные глобальные проблемы мировой политики, под ред. Лебедевой М., Аспект-Пресс, М., 2009:

¹⁹ St' u **Пшеворский А.**, Демократия и рынок: Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке, пер с англ. / под. ред. проф. Бажанова В., “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), М., 2000:

Լ. Մտորգունովը բացատրել է ժողովրդավարության համախմբման հետազոտության մեջ ձևավորված կառուցվածքային, անցումագիտական, ինստիտուցիոնալ մոտեցումները²⁰:

Քաղաքական մասնակցության հիմնախնդիրների ուսումնասիրության շրջանակում, գնահատելով երիտասարդ քաղաքացու սոցիալականացման հիմնախնդիրը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում իրականացվող քաղաքագիտական հետազոտություններում թեմատիկային առնչվող գիտական աշխատությունները սակավաթիվ են, անդրադարձել ենք այդ խնդրի ուսումնասիրության առանձին կողմերին: Վեր ենք հանել երիտասարդական քաղաքականության նպատակի իրագործումն ու նրա ստեղծագործ ներուժը՝ ի շահ հասարակության օգտագործելու, սոցիալ-քաղաքական, իրավական, հոգևոր-մշակութային պայմաններ և երաշխիքներ ստեղծելու օրինաչափությունները: Ուստի հիմնախնդրի գիտական մշակվածության մասին խոսելիս հարկ ենք համարում նշել, որ դրան հանգամանակից անդրադարձել են արտասահմանյան մի շարք մասնագետներ: Հիշատակելի են Դ. Օուենի²¹, Ռ. Դալտոնի²² և այլոց աշխատանքները, որոնցում, ըստ վերոհիշյալ տեսաբանների, երիտասարդության քաղաքական սոցիալականացումը կարող է տեղի ունենալ երկու՝ քաղաքական և քաղաքացիական մասնակցության ճանապարհով:

²⁰ Տե՛ս **Сморгунов Л.**, Сравнительная политология: Учебник для бузов, стандарт третьего поколения, СПб, Питер, 2012:

²¹ Տե՛ս **Owen D.**, Political Socialization in the Twenty-first Century. Paper presented for presentation at “The Future of Civic Education in the 21st Century” conference cosponsored by the Center for Civic Education, James Madison’s Montpelier, September 21-26, 2008:

²² Տե՛ս **Dalton J. Russell**, Citizenship Norms and the Expansion of Political Participation, *Political Studies* 56 (1) (March), 2008, pp. 76-98, <https://doi.org/10.1111%2Fj.1467-9248.2007.00718.x>.

Մեթոդական տեսանկյունից հետազոտության ընթացքում օգտագործել ենք քաղաքագիտության ընդհանուր և առանձնահատուկ մեթոդներն ու եղանակները: Գիտական հետազոտության ժամանակ ի մասնավորի կիրառել ենք պատմական, համեմատական, համակարգային մեթոդները, ինչպես նաև որպես մեթոդաբանական ուղղություն՝ վերլուծության իրականացումը: Պատմական մեթոդի միջոցով բացահայտել ենք քաղաքական մասնակցություն հասկացության տարբեր մոտեցումները քաղաքական մտքի պատմության շրջանակներում: Համեմատական մեթոդի օգնությամբ տեղի է ունեցել հասարակական-քաղաքական կյանքում քաղաքական մասնակցության տարբեր ձևերի գործառնական առանձնահատկությունների կամ տարբերությունների բացահայտումը: Համակարգային մեթոդը նպաստել է ՀՀ-ում քաղաքական մասնակցության հիմնախնդիրները համալիր ամբողջության մեջ դիտարկելուն: Ըստ այսմ՝ ուսումնասիրել ենք քաղաքական և քաղաքացիական մասնակցության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները քաղաքացիական հասարակության մեջ, ինչպիսիք են՝ պետության և քաղաքացիական հասարակության սուբյեկտների երկխոսությունը, նրանց համագործակցությունը, հասարակություն-պետական հատվածի համագործակցային և փոխպայմանավորված գործունեությունը, վերհանել երիտասարդության մասնակցության հիմնախնդիրները ՀՀ-ում, որոնք հնարավորություն կտան բարձրացնել երիտասարդության ներգրավվածությունը հասարակական-քաղաքական կյանքում: Քաղաքական մասնակցության հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ ժամանակակից հասարակական-քաղաքական գործընթացների վրա վճռորոշ ազդեցություն ունի երիտասարդության ներուժը ինչպես հասարակության փոխվստահության, այնպես էլ պետական արդյունավետ քաղաքականություն իրականացնելու՝ պետական ապարատում արհեստավարժ կադրերի համալրման տեսանկյունից:

Որպես մեթոդաբանական ուղղություն՝ վերլուծությունը նպաստել է ՀՀ տեղական ինքնակառավարման և խորհրդարանական ընտրական մասնակցության ուսումնասիրությանը և ներկայացրել ընտրական մասնակցության մեջ գիտակցության մակարդակի բարձրացման հիմնական գործոնները: Ընտրական գործընթացը՝ որպես քաղաքական մասնակցության տարատեսակ, ՀՀ-ում վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ ընտրողի վարքը պայմանավորված է մի շարք գործոններով, ինչպես ընտրական իրավունքի սկզբունքներով, այնպես էլ սոցիալական կարգավիճակով, ընտրողների մոտիվացիայով, քաղաքական սոցիալականացման և քաղաքական հասունության մակարդակով:

Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ մենագրության տեսական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ արդի հասարակական-քաղաքական փոխակերպումների, ժողովրդավարացման և ժողովրդավարական համախմբման փուլում նորովի է արժևորվում մասնակցության հիմնախնդիրը, քաղաքական մասնակցության տարբեր ձևերի դրսևորումները: Հետևաբար աշխատանքի առանցքային դրույթները կարող են կիրառվել գիտական գործունեության ոլորտներում:

Գործնական կիրառելիության տեսանկյունից մենագրության արդյունքները կարող են նպաստել հասարակական-քաղաքական պրակտիկայում քաղաքական մասնակցության գնահատման ծրագրերի, մասնակցային գործողությունների ուղեցույց մշակելու, ՀՀ-ում ժողովրդավարացման գործընթացի արդյունքում մասնակցության հիմնախնդիրների ուղենշման և դրանց արդյունավետության բարձրացման, ինչպես նաև վերոհիշյալ հիմնահարցով զբաղվող հետազոտողների և ուսումնասիրողների համար:

ԳԼՈՒԽ 1
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1.1. Քաղաքական մասնակցության հիմնախնդիրը արդի քաղաքագիտության դիսկուրսում

Քաղաքական կյանքին մարդկանց մասնակցությանը ուշադրություն են դարձրել դեռևս վաղ քաղաքակրթության շրջանում, երբ հասարակական կյանքի կազմակերպման հիմնահարցը քաղաքագիտության ուսումնասիրության տիրույթում էր: Աթենքի հռչակավոր քաղաքական գործիչ և օրենսդիր Սոլոնը իր օրենսդրական գործունեության ընթացքում ձգտում էր գործնականում կիրառել չափի և արդարության սկզբունքները: Այս առումով էլ հիմնվում էր հետևյալ երկու կարևոր դրույթների վրա. իշխանությունը պետք է վստահել արժանի և պետական գործերին իրազեկ քաղաքացիներին, և ժողովուրդը ինքը պետք է տնօրինի իր ճակատագիրը²³: Այսինքն՝ ղեկավարման գործը պետք է ստանձնեն կրթություն, կառավարման որոշակի փորձ ունեցող անձինք, իսկ ժողովուրդը, օրենքները գերակա համարելով, պետք է իրացնի իր ազատ կամարտահայտման սկզբունքը:

Հույն փիլիսոփաներ և քաղաքական մտածողներ Հերակլիտեսը և Դեմոկրիտեսը մասնակցության վերաբերյալ ևս արտահայտել են իրենց մտտեցումները: Հերակլիտեսը կառավարման ազնվապետական ձևի կողմնակից էր: Նա նշել է. «Օրենքը հենց մեկի կամքին ենթարկվելն է»: Սակայն մեկի կամքը կարող է

²³ Տե՛ս **Միրումյան Կ.**, Քաղաքական ուսմունքների պատմություն, ուս. ձեռնարկ բուհերի համար, Ե., 2006, էջ 24:

օրենք դառնալ այն դեպքում, երբ արտահայտում է հասարակության կամքը: Ի տարբերություն Հերակլիտեսի՝ Դեմոկրիտեսը ժողովրդավարությունը դիտում էր որպես ազատ կամքի արտահայտում, որը գործնականում տեղի է ունենում համակարծության միջոցով: Ուստի որքան շատ մարդիկ ակտիվորեն մասնակցեն համատեղ գործողություններին, այնքան ավելի արագ ձեռք կբերվի համախոհություն²⁴:

Սուկրատեսը ևս դեմ չէր ժողովրդավարությանը, այլ բացասաբար էր վերաբերվում վիճակահանությամբ ընտրված անձանց՝ ծաղրելով «մեծագույն նվաճում» համարվող աթենական ժողովրդավարությանը, որը բաղկացած էր կոշկակարներից, դարբիններից, հողագործներից, առևտրականներից և ուրիշներից²⁵: Պլատոնը գտնում էր, որ ոչ թե ամբոխը, այլ լավագույնները՝ ընտրյալները, պետք է ղեկավարեն պետությունը²⁶: Արիստոտելը, հակադրվելով Պլատոնին, նշում էր, որ յուրաքանչյուր ոք, ով օժտված է ինելամտությամբ, վճռականությամբ և փիլիսոփայի հմտությամբ, կարող է մասնակցել հասարակության կառավարմանը: Ըստ Արիստոտելի՝ քաղաքականությունը պետք է ստեղծի այն, ինչ անհրաժեշտ է «լավ կյանք» ունենալու, համընդհանուրի բարօրություն ապահովելու, հասարակության մեջ հակասությունները կարգավորելու համար: Նրա կարծիքով՝ քաղաքականությունը մարդկանց միջև շփման յուրահատուկ ձև է, որն ապահովում է առանձին մարդկանց փոխհարաբերությունը պետու-

²⁴ Տե՛ս **Սարգսյան Ա.**, Քաղաքական մասնակցության հայեցակարգերը քաղաքական ուսմունքների պատմության շրջանակներում, ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., 2020, էջ 16:

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 16-17:

²⁶ Տե՛ս **Платон**, Собрание сочинений, т. 4, М., 1994, էջ 716:

թյան և ամբողջ հասարակության հետ²⁷: Ըստ Արիստոտելի՝ մարդը ունի իշխելու և ենթարկելու պահանջումներ²⁸:

Քաղաքականությունն ուսումնասիրում է հասարակության քաղաքական կյանքը: Այն համարվում է «պետության կառավարման արվեստ», որը ձգտում է իր ազդեցությունը տարածել պետական քաղաքականության ոլորտում և վերահսկել կառավարության գործունեությունը: Քաղաքականությունը իշխանության ձգտելու և այն նվաճելու գործընթաց է, որն իրագործվում է միայն մասնակցության պայմաններում: Անդրադառնալով քաղաքական մասնակցության ժամանակակից դրսևորումներին՝ այն կարելի է ներկայացնել որպես առանձին քաղաքացիների գործողություններ, որոնցով վերջիններս ցանկանում են ներագրել կառավարության վրա և մասնակցել քաղաքականությանը: Լ. Միլբրեթը և Մ. Գոյելը կարծում են, որ այս մեթոդական մոտեցումը ներառում է արարողակարգային և առարկայական գործունեություն²⁹: Ըստ այսմ՝ ընդունված են քաղաքական մասնակցության երկու հասկացության ձևեր՝ նկատի ունենալով ներգրավված դերակատարների և նրանց գործողությունների տեսակները:

Ըստ Վ. Լամի՝ քաղաքական մասնակցությունը պետք է ընկալվի որպես գործողությունների այնպիսի ամբողջություն, որոնք ներառում են ինչպես պահանջներ ներկայացնելու, այնպես էլ կառավարությանը աջակցություն ցուցաբերելու օրինական և տարերային գործողություններ³⁰:

²⁷ Տե՛ս **Արիստոտել**, Сочинения, т. 4, М., 1983, էջ 6-7:

²⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:

²⁹ Տե՛ս **Milbrath L., Goel M.**, Political Participation: How and why do people get involved in politics?, 2nd edition, Washington, D.C., University Press of America, 1977, 223 p, (հղումը տե՛ս **Bergstrom L.**, Political participation, Karlstad University, 2006, էջ 3):

³⁰ Տե՛ս **Lam W. M.**, Alternative understanding of political participation: challenging of the myth of political indifference in Hong Kong, International Journal of Public

Քաղաքական մասնակցությունը չի կարելի դիտարկել միայն կառավարության գործունեության վերահսկման համատեքստում: Հարկ է նշել, որ հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցած փոխակերպումների հետևանքով ընդլայնվել է քաղաքական մասնակցության բնորոշման տիրույթը՝ համապատասխանեցնելով ժողովրդավարացման չափանիշներին: Ըստ այսմ՝ հասարակության արդիականացման գործընթացը նպաստել է հասարակական-քաղաքական կյանքում մասնակցության որոշ ձևերի ի հայտ գալուն և զարգացմանը, որոնք ներկայումս հասարակական-քաղաքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված գործողություններում ավելի շատ են տարածված: Հետևաբար, քաղաքական մասնակցությունը պետք է ավելի լայն տեսանկյունից դիտարկել, այսինքն՝ կառավարության ձևավորման կոնվենցիոնալ գործընթացից (քարոզչություն, քվեարկություն, տեղեկատվության հասանելիություն, քննարկումներ և բանավեճեր, հավաքների մասնակցություն, ֆինանսական օժանդակություն և քաղաքական ներկայացուցիչների հետ հաղորդակցում) մինչև իսկ ոչ կոնվենցիոնալ տեսակների ամբողջությունը (քաղաքացիական շարժումներ և նախաձեռնություններ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր, ինքնաբուխ հավաքների կազմակերպում և այլն):

Ժամանակակից հասարակություններում քաղաքական և քաղաքացիական ներգրավվածության ձևերի բազմազանությունը հանգեցրեց մասնակցային վարքագծի լայն և բազմազան ռեպրեզենտարների ի հայտ գալուն: Հետևելով և աստիճանաբար վերափոխելով այդ եզրույթը՝ մի շարք գիտնականներ բացահայտել են նշանակալի տեսական տարբերություններ՝ հաշվի առնելով քա-

դաքական և քաղաքացիական ներգրավվածության տարբեր դրսևորումները³¹:

Այդ տեսանկյունից քաղաքական մասնակցության մեկնաբանման ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել մարդկանց վարքագծի վրա: Տեղին է նշել, որ քաղաքական համակարգը և քաղաքական մշակույթը զգալի ազդեցություն ունեն անձի քաղաքական վարքագծի դրսևորման վրա, հետևաբար հասարակական-քաղաքական կյանքին անհատի լիարժեք ինտեգրմանը կարող է նպաստել միայն նշանակալից քաղաքական մասնակցությունը:

Ինչպես նշել է Հ. Մաքկլոսկին, «քաղաքական մասնակցությունը վերաբերում է այն կամավոր գործողություններին, որոնց միջոցով հասարակության անդամները մասնակցում են կառավարողների ընտրությանը և անմիջականորեն կամ անուղղակիորեն իրենց ազդեցությունն են ունենում պետական քաղաքականության ձևավորման գործում»³²:

Ս. Հանթինգթոնը և Ջ. Նելսոնը նշել են. «Մասնակցությունը կարող է լինել անհատական կամ կոլեկտիվ, կազմակերպված կամ ինքնաբուխ, կայուն կամ պարբերաբար, խաղաղ կամ բռնի, օրինական կամ անօրինական, արդյունավետ կամ անարդյունավետ»³³:

³¹ Տե՛ս **Talo C., Mannarini T.**, Measuring participation: Development and validation the participatory behaviors scale, *Social indicators research* 123 (3), September 2015, էջ 799:

³² Տե՛ս **McClosky H.**, Political Participation, in David L. Sills (ed), *International Encyclopedia of the Social Sciences*, Vol. 12, New York: Macmillan Co. & Free Press, 1968, էջ 252:

³³ Տե՛ս **Huntington S., Nelson J.**, No Easy choice, *Political participation in developing countries*, Harvard University press, 1976, էջ 5-6,
<https://ru.scribd.com/doc/21326185/Samuel-P-Huntington-on-political-participation-and-democracy>, հասանելի էր՝ 08.12.18:

Ըստ Գ. Ալմոնդի՝ մասնակցությունը հասարակության անդամների ներգրավվումն է համակարգի որոշումների կայացման գործընթացին³⁴, իսկ ըստ Ռ. Դալի՝ այն ենթադրում է ժողովրդի ներգրավվումը հավաքների և սոցիալական ինքնության դրսևորումը իշխանության հետ փոխհարաբերություններում³⁵: Դ. Մեթյուի և Ջ. Պրոթոյի կարծիքով, քաղաքական մասնակցությունը մի վարքագիծ է, որի միջոցով մարդիկ արտահայտում են իրենց քաղաքական տեսակետները³⁶, իսկ Հ. Բրեդին այն բնութագրել է որպես «քաղաքացիների անհատական գործողություն՝ որոշակի քաղաքական արդյունքների վրա ազդելու նպատակով»³⁷:

Ըստ այդմ՝ որոշ տեսաբաններ կարծում են, որ անհրաժեշտ է ընդունել քաղաքական մասնակցության այլ ձևերի արդարացի կիրառումը ևս, քանի որ քաղաքական դաշտը հասարակության զարգացմանը զուգընթաց փոխակերպման է ենթարկվում: Պ. Նորիսը նշել է, որ ժամանակակից հասարակություններում կարող են առաջանալ քաղաքացիական ներգրավվածության բազմաթիվ ձևեր՝ ավանդական մոդելները լրացնելու համար: Քաղաքական մասնակցությունը զարգացել և փոխակերպվել է տարիների ընթացքում երեք ուղղություններով՝ ըստ գործակալությունների (հավաքական կազմակերպություններ), ռեպրեսենտատիվների (քաղաքական կամարտահայտման գործողություններ) և թիրախներ

³⁴ Տե՛ս **Almond G., Powell G.**, Comparative politics - A Developmental Approach, New Delhi, Amerieds Publishing Company Limited, 1966, էջ 53:

³⁵ Տե՛ս **Даль Р.**, Демократия и ее критики, М., “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), 2003, էջ 30:

³⁶ Տե՛ս **Mathews D., Prothro J.**, Negroes and the New York, Mar court, Brace and World, 1966, էջ 37:

³⁷ **Brady H.**, Political participation, in Robinson J., Shaver P., Wrightsman L., (Eds.), Measures of political attitudes, San Diego: Academic press, 1999, pp. 737-801, (հղումը տե՛ս **Ekman J., Amna E.**, “Political participation and civic engagement: Towards a new typology”, Human Affairs 22 (3), January 2009, <https://doi.org/10.2478/s13374-012-0024-1>, էջ 286):

րի (քաղաքական դերակատարներ, որոնց վրա մասնակիցները ձգտում են ներագդել)³⁸:

Ինչպես նշել է Օ. Պետերսոնը, քաղաքական մասնակցությունը հանդես է գալիս հետևյալ առանձնահատկություններով՝ քվեարկություն, քաղաքական կուսակցություններին անդամակցություն և ակտիվ ներգրավվածություն, քարոզարշավի կազմակերպում, ցույցեր և գործադուլներ, քաղաքացիական անհնազանդություն կամ ընդվզում, հանրագիր (պետիցիա) ստորագրելու իրավունք³⁹:

Հարկ է նշել, որ, դասական քարոզարշավի անցկացումից բացի, համացանցը ևս լրացուցիչ հնարավորություններ է ընձեռում նախընտրական քարոզարշավներ անցկացնելու համար: Վերջինիս միջոցով քաղաքացիները կարող են պատրաստել տեսանյութեր՝ ուղղված համակիր կամ ընդդիմադիր թեկնածուներին: Իսկ ինչ վերաբերում է թեկնածուներին, ապա վերջիններս սոցիալական ցանցերի միջոցով ձեռք են բերում կողմնակիցներ և հավաքագրում կամավորներ, որոնք նպաստում են քարոզարշավի իրականացմանը:

Քաղաքացիական անհնազանդության միջոցով քաղաքացիները նպատակ ունեն վերացնել հասարակության մեջ ամեն տեսակ ոչ իրավաչափ գործունեություն: Ինչպես նշել է Հ. Արենդտը, քաղաքացիական անհնազանդությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ քաղաքացիների մի զգալի հատված գալիս է այն գիտակցության, որ փոփոխությունների իրականացման նորմալ մեթոդներն անարդյունավետ են, իսկ քաղաքացիների բողոքները չեն արժանանում ուշադրության: Կամ էլ հակառակը՝ երբ կառա-

³⁸ St´u **Norris P.**, *Democratic Phoenix: Reinventing Political Activism*, Cambridge University Press, 2002, էջ 2:

³⁹ **Petersson O., Hermansson J., Micheletti M., Teorell J., Westholm A.**, *Demokrati och medborgarskap* Demokratirådets rapport Stockholm: SNS, 1998 (հղումը տե՛ս **Bergstrom L.**, նշվ. աշխ., էջ 7-8):

վարությունը ցանկանում է բարեփոխումներ իրականացնել և պատրաստ է դրան, սակայն նրա՝ այդ գործողությունները կատարելու մեխանիզմներն ունեն լեգիտիմության և սահմանադրականության խնդիր⁴⁰:

Քաղաքացիական անհնազանդությունը անհրաժեշտ է նաև տարբերել իրավախախտումներից: Ժողովրդավարական հասարակարգերում քաղաքացիական անհնազանդությունը չի համարվում հանցագործություն: Բացի այդ, առավել կարևոր է նաև քաղաքացիական անհնազանդության համար պատասխանատվության տեսակները և գործողությունների շրջանակը բնորոշելը: Եթե քաղաքացիական անհնազանդություն ցուցաբերած քաղաքացին պատժվում է օրենքով, ապա դա կիրառվում է ոչ թե քաղաքացիական անհնազանդություն դրսևորելու համար, այլ այն գործողության, որը իրավականորեն սահմանված է որպես խախտում, օրինակ, այլոց կամ պետական գույքին վնաս հասցնելը, ինչպես նաև հակապետական, հակասահմանադրական գործողությունները: Հարկ է նշել, որ հիմնականում հանցագործություն կատարած անձինք ամեն կերպ ձգտում են, որ չբացահայտվի իրենց կողմից կատարած արարքը, իսկ քաղաքացիական անհնազանդ անձինք հակառակը՝ իրենց գործողությունները չեն թաքցնում հասարակությունից և հիմնականում պատրաստ են տեղեկացնել, բացատրել կատարվածը: Այդ քաղաքացիները նաև պատրաստակամ են կրել պատիժը՝ այդպիսով ցույց տալով, որ իրենք տարբերվում են սովորական իրավախախտներից և չեն վախենում իրենց գործած արարքների համար: Սա նույնն է, ինչ ոչ ուժգին հարկադրանքը, որը հենվում է միևնույն տեխնիկայի և տեսության վրա, որը ոչ պարտադիր ուժի կիրառում է: Այն ունի

⁴⁰ **Arendt H.**, “Civil disobedience”. In crises of the republic, New York: Mariner Books, 1972, pp. 51–102, (հղումը տե՛ս **Жиро Т.**, Политология, пер. с полского, Харьков, изд. Гуманитарного центра, 2006, էջ 119):

մեկ այլ առանձնահատկություն. այն հակասում է գործող օրենքին կամ ուժի մեջ մտած օրենքի միջոցով պետության գործողությանը, իսկ օրենքն այն է, որը ապահովում է բողոքողի իրավասության շրջանակը: Հետևաբար քաղաքացիական անհնազանդությունը քաղաքացիական ոչ բռնությամբ դիմադրություն է կամ հարկադրանք⁴¹:

Քաղաքացիական անհնազանդությունը դրսևորվում է հետևյալ հատկանիշներով.

1. Հիմնականում պայմանավորված է գործող կառավարման համակարգի թերություններով, իսկ կիրառվող գործողությունների նպատակը քաղաքացիների սահմանադրական իրավունքներին և ազատությունների համար պայքարն է:

2. Քաղաքացիական անհնազանդությունը տեղի է ունենում, որպեսզի ուշադրություն սևեռվի անարդարության վրա, փոխվեն գոյություն ունեցող պայմանները:

3. Այն բռնություն չէ, բայց վերջինիս դրսևորմանը մոտ է:

4. Այն նաև հաղորդակցության եղանակ է, որի միջոցով ոչ միայն ապահովվում է հանրային ընկալումը, այլև փոփոխություններ իրականացնելու եղանակները:

5. Այն կիրառվում է նաև նրանց կողմից, ովքեր, ըստ էության, իշխանությունից դուրս են և հակասություններ ունեն վերջինիս հետ⁴²:

Քաղաքացիների՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ դիմում (բողոք), պահանջներ ներկայացնելու իրավունքը պետության քաղաքական կյանքին մասնակցելու ակտիվ ձև է և միաժամանակ խախտված իրավունքները վերականգ-

⁴¹ Տե՛ս **Freeman H.**, The Right of Protest and Civil Disobedience, Indiana Law Journal: Vol. 41: Iss. 2, Article 3, 1966, էջ 231-232:

<https://www.repository.law.indiana.edu/cgi/viewcontent.cgi?article=3628&context=ilj>, հասանելի էր՝ 21.03.2019:

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 231-232:

ներու եղանակ: Այդ ճանապարհով քաղաքացիներն անհատապես կամ համատեղ ակտիվորեն միջամտում և մասնակցում են հանրային նշանակության խնդիրների լուծմանը: Այդ իրավունքի առկայությունը միաժամանակ ենթադրում է, որ յուրաքանչյուր ոք ունի անհատապես կամ այլոց հետ մեկտեղ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք⁴³:

Քաղաքական մասնակցությունը ազդում է նաև սոցիալական ծառայությունների և ռեսուրսների բաշխման վրա: Մարդիկ կարող են քվեարկել այն ներկայացուցիչների օգտին, որոնց քաղաքականությունն ուղղված է սոցիալական տարբեր ծրագրերում քաղաքացիներին ընդգրկելուն: Վերջիններս կարող են մասնակցել այն կազմակերպությունների գործունեությանը, որոնք աշխատում են ուղղակիորեն ներազդել պետական պաշտոնյաների կողմից իրականացվող քաղաքականության վրա, ինչպես նաև կարող են հասարակական քննարկումների միջոցով կառավարությանը ներկայացնել իրենց շահերը, պահանջումները և նախասիրությունները: Այդպիսի քաղաքական գործունեությունը կարող է օգնել պետական պաշտոնյաներին և ինստիտուտներին՝ պահպանելու կապը հասարակական հատվածի հետ համագործակցության և ակտիվ երկխոսության միջոցով: Միաժամանակ նրանք կարող են ազդել քաղաքական դերակատարների գործունեության վրա և փոխել վարվող քաղաքականության կուրսը՝ համապատասխանեցնելով հասարակության ձգտումներին և սպասելիքներին:

Նշենք, որ քաղաքական գործընթացներում քաղաքացիների ներգրավվածությունը հիմնականում կենտրոնացած է ընտրա-

⁴³ Տե՛ս ՀՀ սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 53:

կան մասնակցության վրա: Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս քվեարկությունը համարվում է քաղաքական համակարգում որպես քաղաքացու ձայնը լսելի դարձնելու հիմնական միջոց, և քվեարկության մասնակցությունը ժողովրդավարական երկրներում ներկայացվել է որպես քաղաքացիական գիտակցության ամենատարածված դրսևորում: Ընտրություններին քաղաքացիների մասնակցությունը պայմանավորված է ոչ միայն իրավական և կառուցվածքային ընթացակարգերով, այլև ընտրության տեսակով և քարոզարշավի ընթացքում նրանց գիտակցությամբ ու ոգևորությամբ: Ուստի ժողովրդավարական երկրներում սովորաբար մարդիկ մասնակցում են ոչ միայն համապետական և տեղական ընտրություններին, այլև երբեմն իրենց տեսակետն արտահայտում են հանրաքվեի միջոցով: Վերջինս ժողովրդավարության մոդելին բնորոշ իրավական կամարտահայտման ձև է:

1970-ական թթ. Ս. Վերբան և Ն. Նայր, ելնելով քաղաքական առաջնորդների ընտրությունից և նրանց քաղաքական գործունեությունից, առանձնացրել են քաղաքական մասնակցության չորս տեսակ, որոնց կիրարկումը կհանդիսանա ժողովրդավարական հասարակարգերի արդարացի կայացման սկզբունք.

1. քարոզչություն,

2. քվեարկություն,

3. համայնքային գործունեություն. ներառում է տեղական կամ համայնքային մարմիններին, կազմակերպություններին անդամակցությունը: Քաղաքացիները, համայնքային ծառայությունների հետ կապված հարցերի շուրջ համագործակցելով տեղական կազմակերպությունների, խորհուրդների հետ, նվիրաբերում են գումար կամ կամավոր հիմունքներով ներգրավվում են համայնքի զարգացման ծրագրերին⁴⁴:

⁴⁴ Տե՛ս **Talo C., Mannarini T.**, նշվ. աշխ., էջ 812:

4. Պետական պաշտոնյայի հետ համագործակցություն՝ անձնական նպատակին հասնելու համար⁴⁵:

Ջ. Թեորելը և այլք առաջարկում են քաղաքական մասնակցության ստորև ներկայացված չափորոշիչները.

1. Ընտրական մասնակցությունը առաջնային կարևորություն ունի:

2. Մասնավոր հատվածի մասնակցությունը ներառում է նվիրատվություն, բարեգործություն:

3. Կուսակցական գործունեություն՝ անդամագրվել, քաղաքական ակտիվություն դրսևորել, կատարել կամավոր աշխատանք կամ ֆինանսական աջակցություն ցուցաբերել տվյալ կուսակցությանը:

4. Բողոքի գործողություն, որը դրսևորվում է երթերով, ցույցերով, գործադուլներով և այլն:

5. Միասնական ակտիվություն, որը ուղղված է քաղաքական գործիչներին, քաղաքացիական ծառայողներին, տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչներին համախմբելուն և նրանց գործունեությունը կանոնակարգելուն⁴⁶:

Այսպիսով, քաղաքական մասնակցությունը ժողովրդավարական պետության կայացման և քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ մեխանիզմն է և քաղաքականության սուբյեկտների գործունեությունը՝ վարքագծի տարբեր դրսևորումներով: Քաղաքացիների կամարտահայտման ձևը ժողովրդավարական հասարակարգի գործառնության առանցքային սկզբունքն

⁴⁵ Տե՛ս **Verba S., Nie N.**, Participation in America: Political democracy and social equality. New York: Harper & Row, 1972, [https://www.press.uchicago.edu/ucp/books-book/chicago/P/bo3637096.html](https://www.press.uchicago.edu/ucp/books/book/chicago/P/bo3637096.html) հասանելի էր՝ 10.12.2018:

⁴⁶ Տե՛ս **Teorell J., Torcal M., Montero J.**, Political Participation: Mapping the Terrain. In J. W. van Deth, J. Montero, A. Westholm (Eds.), Citizenship and involvement in European Democracies: A comparative analysis, London & New York, 2007, էջ 334-339:

է, որի միջոցով էլ տեղի է ունենում հասարակական-քաղաքական կյանքին քաղաքացիների մասնակցությունը, որը, ի դեպ, միանշանակ չէ: Այսինքն՝ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին հիմնականում դրսևորվում է ընտրություններին մասնակցությամբ, սակայն ժողովրդավարական հասարակարգերում լինելով քաղաքական մասնակցության ապահովման գործընթաց՝ այն ամբողջությամբ չի արտահայտում քաղաքացիների մասնակցությունը: Ուստի հասարակության փոխակերպման շնորհիվ հետզհետե ավելի են տարածվում նաև ոչ կոնվենցիոնալ մասնակցային գործողությունները, որոնք հիմնականում վկայում են հասարակության քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակի մասին: Արդի դարաշրջանում ոչ կոնվենցիոնալ մասնակցային գործողությունները ժողովրդավարական քաղաքական համակարգերի կայուն գործառնության հիմքն են, քանի որ վերջիններիս միջոցով են ապահովվում քաղաքացիների ազատ կամարտահայտման և սեփական կյանքը տնօրինելու սկզբունքները: Ինչպես կոնվենցիոնալ, այնպես էլ ոչ կոնվենցիոնալ գործողությունները միայն ինստիտուցիոնալ օրենսդրական նորմերի ամրագրման և կիրառման միջոցով կարող են արդյունավետ գործառնել՝ զերծ ամեն տեսակ ոչ իրավաչափ, բռնի արարքներից:

1.2. Քաղաքական մասնակցության ձևերը ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության կայացման իրողություններում

Քաղաքական մասնակցությունը՝ որպես ժողովրդավարական պետության ձևավորման և դրսևորման առանձնահատուկ ոլորտ, հանդես է գալիս քաղաքականության սուբյեկտների վարքագծի բնորոշմամբ, որը ազդում է հասարակական-քաղաքական կյանքի մասնակցության վրա:

Քաղաքական գիտակցության ներքո հասկացվում են մարդկանց կողմից տարբեր դրսևորումներ, որոնք արտահայտում են քաղաքական իշխանության մեխանիզմների գործառնությունն ու քաղաքական հարաբերությունների ոլորտում մարդկանց ու սոցիալական հանրությունների ուղղորդող վարքը⁴⁷: Հետևաբար քաղաքականության ցանկացած սուբյեկտ սեփական գաղափարախոսությունը ձևավորելու կարիք ունի, որը կուղղորդի մարդկանց վարքը քաղաքական հարաբերությունների ոլորտում, կձևավորի քաղաքական կամքը, կմոբիլիզացնի նրանց ակտիվությունը, կնպաստի խմբերի սոցիալական ինտեգրմանը, որոնք ներգրավված են քաղաքական գործողություններում⁴⁸:

Մեծ կարևորություն ունի այն համգամանքը, որ հասարակական-քաղաքական կյանքին ներգրավվելով՝ յուրաքանչյուր ոք ունենա մասնակցության մշակույթի որոշակի գիտելիքներ և հոգեբանական պատրաստվածություն: Համաշխարհայնացման պայմաններում առանց քաղաքացիների՝ իրենց իրավունքների ընկալման և իրացման հնարավոր չէ պատկերացնել ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացումը: Յուրաքանչյուր

⁴⁷ Տե՛ս **Ենգոյան Ա.**, «Գաղափարախոսություն» հասկացության քաղաքագիտական մեկնաբանությունը, Ե., 2014, էջ 17:

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 18:

որ հասարակական հարաբերությունների ցանկացած ոլորտում պետք է արտահայտի իր համոզմունքները և հանդիսանա դրանք կրողը: Գիտակցված մասնակցային գործընթացը արդի հասարակարգի ձևավորման և կայացման ուղենիշն է, երբ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն է դառնում պետության քաղաքացին, իսկ պետական պաշտոնատար անձինք իրենց գործողություններով հաշվետու են նրանց առաջ:

Մինչ պետությունների ժողովրդավարորեն կառավարմանը, դրսևորվել է քաղաքական մասնակցության պահպանողական ուղղությունը, համաձայն որի՝ քաղաքական կյանքում ժողովրդի մասնակցության ընդլայնումը պետական ապարատի կայունության և արդյունավետ գործունեություն ծավալելու վտանգ է պարունակում: Իսկ քաղաքականությունը՝ որպես հասարակության շահերի և պահանջմունքների իրացման գործընթաց, կարևոր է, որ նվազեցնի վերջինիս նկատմամբ հասարակության հետաքրքրության շրջանակը և ապահովի, որ քաղաքական որոշումները կայացնեն առավել փորձառու և տեղեկացված անհատները: Մինչդեռ ազատական մոտեցումը անմիջականորեն առնչվում է ժողովրդավարական կառավարմանը, որի դեպքում քաղաքացիների ներգրավվածությունը որոշումների ընդունման գործընթացին հանդիսանում է լեգիտիմ քաղաքական իշխանության ձևավորման և քաղաքական դերակատարների և տարբեր կուսակցությունների մրցակցության ապահովման լավագույն ձև:

Քաղաքական գործընթացներում մարդկանց ներգրավվածությունը միանշանակ չէ: Այսպես, Ջ. Էկմանը և Ե. Էմանն նշում են, որ հասարակության մի մասը ակտիվ մասնակցում է քաղաքական կյանքին, նրանք առավելագույն չափով հետաքրքրված են քաղաքականության մեջ տեղի ունեցող գործընթացներով, իսկ հասարակության մյուս մասը առանձնապես հետաքրքրված չէ

քաղաքական իրադարձություններով: Ումանք էլ ո՛չ ակտիվ, ո՛չ պասիվ մասնակցություն («չեզոք» մասնակցություն) են ունենում քաղաքական կյանքին⁴⁹:

20-րդ դարի վերջին տասնամյակից սկսած՝ բազմաթիվ երկրներ նոր մեխանիզմներ էին մշակում հասարակության զարգացման նախաձեռնություններում և կառավարման գործընթացներում քաղաքացիների ներգրավվածությունը ուղղակի և արդյունավետ դարձնելու համար՝ սկսած նոր, ապակենտրոնացված ինստիտուտներ ստեղծելուց մինչև մասնակցային և խորհրդատվական գործընթացների բազմաթիվ ընթացակարգերի կիրառումը: Ընդհանուր առմամբ, քաղաքական զարգացմանն ուղղված նախաձեռնությունները հաջողված են, եթե դրանք իրականացվում են քաղաքացիների ներգրավվածությամբ և ակտիվ մասնակցությամբ: Մասնակցային գործընթացը կանոնակարգող քաղաքականությունը առավել արդյունավետ է, իսկ իրականացվող ծրագրերը՝ հաջողված, երբ նպատակաուղղված է համընդհանուրի կարիքների բավարարմանը:

Քաղաքական մասնակցության և կառավարման արդյունավետության միջև փոխհարաբերությունների ինստիտուցիոնալ ամրագրումը և կառավարման գործընթացներում քաղաքացիական ներգրավվածության հնարավորությունները (քաղաքական իրավունքները, քաղաքականության վրա ազդեցությունը, շահերի արտահայտման հնարավորությունները և այլն) ազդում են կառավարման արդյունավետության վրա: Քաղաքական մասնակցության աստիճանը և ընտրված կառավարման արդյունավետության ցուցանիշները (կառավարության արդյունավետությունը, կոռուպցիայի վերահսկողությունը և կառավարման ին-

⁴⁹ St' u **Talo C., Mannarini T.**, Measuring participation: Development and validation the participatory behaviors scale, Social indicators research 123 (3), September 2015, էջ 808:

դեքսը) ցույց են տալիս ուժեղ և կայուն փոխհարաբերությունների բնույթը: Հասուն կ ուշադրություն է դարձվում քաղաքական մասնակցության և կառավարման արդյունավետության հարաբերություններին՝ տնտեսական զարգացման և համակարգի հաշվետվողականության տեսանկյունից: Տարբեր երկրներում քաղաքական մասնակցության իրավունքների և դրսևորման հնարավորությունների չափը էականորեն կապված է կառավարության արդյունավետության, կոռուպցիայի դեմ պայքարի և հատկապես զարգացող և փոխակերպող երկրների կառավարման արդյունավետության հետ: 1989 թ. սկսված քաղաքական փոփոխությամբ հիմք դրվեց նախկին կոմունիստական հասարակարգերի բազմաթիվ նոր հնարավորություններին, որոնք մինչ օրս հիմնականում կայացման փուլում են: Մարդիկ սկսեցին ձևավորել նոր քաղաքական կուսակցություններ և շարժումներ, զբաղվել հասարակական-քաղաքական խնդիրների լուծմամբ, ձևավորել քաղաքացիական հասարակություն: Չնայած նախնական էյֆորիայի և քաղաքականության նկատմամբ հսկայական հանրային հետաքրքրությանը՝ ավանդական ազատական ժողովրդավարություններում աստիճանաբար սկսվեց ամրապնդվել քաղաքական վերնախավի և կառույցների արդյունավետության հանդեպ վստահության զգացումը, վստահության և հավատարմության մեծացումը քաղաքական կուսակցությունների նկատմամբ: Վերոհիշյալ միտումները, բնականաբար, չկարողացան անմասն մնալ ոչ միայն գիտնականների ուշադրությունից, այլև քաղաքական առաջնորդների, լրագրողների և ուրիշների կողմից: «Նոր ժողովրդավարություններում» քննարկման ամենատարածված թեմաներից մեկը քաղաքական մասնակցության հարցն էր: Քաղաքացիների մասնակցությունը և հնարավորությունների վերհանումը քաղաքական որոշումների կայացման գործընթացում համարվում էր որպես վերոհիշյալ խնդիրների մեծ մասի լուծման

միջոց: Այն որևէ կերպ չի բխում ձախողված և հիմնականում վերևների անարդյունավետ քաղաքական որոշումների ընդունման տեսանկյունից, կամ էլ ներկայացուցչական համակարգի օրինականությունը նվազեցնելու խնդիրն է դրված: Ավելին, համաժողովրդական մասնակցության կոչը հետագայում էլ ավելի մեծացրեց պետական կառավարման բարեփոխումները (ապակենտրոնացում) և հանրային ոլորտի ընդլայնմամբ (շուկայական մրցակցություն, ազատ տնտեսական հարաբերություններ և այլն) ազգային պետության, ինչպես նաև միջազգային կառույցների կողմից մասնակցային պլանավորման և այլ ձևերի (Համաշխարհային բանկ և զարգացման գործողություններ) աճող հետաքրքրությունը⁵⁰:

Կառավարման նոր ձևերը պետք է ընկալվեն որպես համընդհանուր շահերի այլընտրանքային դրսևորում, որոնք լրացնում են կառավարման ավանդական, ինստիտուցիոնալ ձևերն ու մեթոդները: Ներկայումս կառավարումը հիմնականում վերաբերում է սոցիալական համակարգերի, հանրային-մասնավոր հարաբերությունների համադրմանը, իշխանության նկատմամբ վստահության ավելացմանը: Պետությունը վերաբերող դիրքորոշումները և նրա դերը կառավարման համակարգում ինչ-որ չափով որոշում են կառավարման չափման մոտեցումները: Այսպես կոչված հին կառավարման համակարգը կառավարման ավելի ավանդական ձևի դրսևորումն է: Պետությունը և նրա քաղաքական-ինստիտուցիոնալ կարողությունները գտնվում են հասարակության հետաքրքրության կենտրոնում (պետական-կենտրոնական մոտեցում): Ի հակադրություն՝ կառավարման նոր ձևը կառավարման ժամանակակից գաղափարն է, որը կենտրոնանում է հիմնականում հասարակության դերի (հասարակության կենտ-

⁵⁰ St' u **Nekola M.**, Political participation and governance effectiveness: does participation matter?, January 2006, Charles University in Prague, էջ 1:

րոնական մոտեցում) և համընդհանուր շահերի ու պահանջ-մունքների բավարարման (դրական մոտեցում) կամ պետության կենտրոնական դերի հակազդեցության և սահմանափակման ընթացակարգերին (բացասական մոտեցում)⁵¹:

Եթե քաղաքական համակարգը ավելի բաց և մրցակցային է, ուստի նրա ինստիտուցիոնալ միջավայրը ավելի շատ հնարավորություն է տալիս մասնակցության համար, ավելի հմուտ քաղաքական դերակատարներ են մուտք գործում քաղաքական աստիճանահարթակ և արդյունավետ կառավարում իրականացնում: Նմանատիպ քաղաքական համակարգերի շրջանակներում կառավարությունը արդյունավետ կերպով աշխատում է մարդկանց շահերն ու պահանջմունքները բավարարվում են, և հանրային ծառայությունների որակը բարձրանում է: Աստիճանաբար անցնում ես ավելի արդյունավետ և անկախ պետական կառավարման՝ իրավասու և փորձառու պետական ծառայողների, վստահելի կառավարության և քիչ կոռումպացված քաղաքական գործիչների և պաշտոնատար անձանց հետ: Հետաքրքրական է այն կարևոր դերակատարումը, որը քաղաքական մասնակցությունն իրականացնում է հասարակարգերի վերափոխման գործընթացում: Նույնիսկ բարդ պայմաններում գտնվող երկրներում կարող է ժողովրդավարական արդյունավետ կառավարում իրականացվել, եթե ավելի լայն և բաց հնարավորություններ են ապահովվում հանրության մասնակցության համար: Այնուամենայնիվ, քաղաքական մասնակցության ամրապնդումը և բարձրացումը ոչ բոլոր երկրների համար է և ոչ բոլոր իրավիճակներում: Տարբերվող պայմաններ և ազգային առանձնահատկություններ ունեցող հասարակարգերը պետք է ընտրեն այն լուծումներն ու ռազմավարությունները, որոնք համապատասխանում են իրենց քաղա-

⁵¹ Տե՛ս նույն տեղում, էջ 2:

քական մշակույթին: Միայն այդ դեպքում վերջիններս կարող են ձևավորել և կայացնել ժողովրդավարական ինստիտուտները և ամրապնդել մրցունակությունը⁵²:

Քաղաքական մասնակցությունը դիտարկում է հասարակության անդամների ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում՝ անհատական, խմբային, ազգային-էթնիկական, կրոնական և այլ հիմքերով, մարդկանց ներգրավվածությունը քաղաքական կյանքին, անմիջական մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման և դրանց իրականացման գործընթացներին՝ ելնելով համընդհանուր շահերից, պահանջմունքներից ու նպատակներից⁵³:

«Քաղաքացիական ներգրավվածության» և «Մասնակցության» մասին խոսելիս պետք է նշել, որ դրանք հաճախ կիրառվում են որպես փոխադարձաբար փոխարինելի հասկացություններ, այսինքն՝ գրեթե նույնացվում են: Ըստ այդմ, կարծում ենք, որ դժվար է հստակ տարանջատում կատարել տվյալ հասկացությունների բովանդակության միջև: Նշենք, որ «մասնակցություն» հասկացությունը դիտարկվում է որպես «քաղաքացիական ներգրավվածություն» ըմբռնման մի մաս, դրա առավել ինտենսիվ և համակարգված դրսևորում: Հասարակության զարգացման նախաձեռնությունների՝ քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության քաղաքականության կենսագործման ընթացքում արդիական է դրանց իրագործելիության և փաստացի դրսևորումների խնդիրը: Քաղաքացիական մասնակցությունը համարվում է որպես մասնակցության իրական չափանիշ, քանի որ քաղաքացիական մասնակցության նպատակն է պարզել մաս-

⁵² Տե՛ս նույն տեղում, էջ 10:

⁵³ Տե՛ս **Շափաղաթյան Հ. Ն.**, Քաղաքական սոցիալականացում, ԵՊՀ, Ե., 2016, էջ 87:

նակցային գործընթացում հարցվողների իրական պատրաստակամությունը⁵⁴:

Ըստ Ռ. Ադլերի և Ջ. Գոգինի՝ քաղաքացիական ներգրավվածությունը որպես համագործակցության կամ համատեղ գործողությունների կոլեկտիվ ամբողջություն, հանդես է գալիս հանրային ոլորտում պայմանների բարելավման համար⁵⁵:

Հարկ է նշել, որ, որպես կանոն, քաղաքական մասնակցության ձևերը երկուսն են՝ ակտիվ և պասիվ: Այսպես, պասիվի դեպքում մարդիկ պասիվ մասնակցություն են ունենում. տեղեկություններ կամ խորհրդատվություն են ստանում: Մարդիկ մասնակցում են գործընթացին, բայց նրանց և քաղաքական սուբյեկտների միջև փոխադարձ կապ և հետաքրքրություն քաղաքական գործընթացների նկատմամբ չկա: Հակառակ դրսևորումն է գործում ակտիվ քաղաքական մասնակցության դեպքում, երբ ժողովուրդը հասարակական-քաղաքական կյանքին ակտիվորեն է մասնակցում, սատարում կամ հարկ եղած դեպքում իր դժգոհությունն է արտահայտում քաղաքական կուրսի նկատմամբ⁵⁶: Մասնակցության մեկ այլ տեսակ է՝ մասնակցություն հանուն նյութական խթանների: Մասնակցության այդ ձևը գործում է, երբ մարդիկ սոցիալապես անապահով են: Ըստ այսմ՝ գործում է ժողովրդին խնդրելու կամ պարտադրելու սկզբունքը՝ մասնակցել հանրահավաքներին, նախընտրական քարոզարշավին: Այս դեպքում մասնակցային գործընթացին ներգրավված դերակատարները հասարակությանը նյութական աջակցություն են տրամադ-

⁵⁴ Տե՛ս **Թադևոսյան Գ., Չալոյան Ա., Ղազարյան Ռ.**, Քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության ինստիտուցիոնալացման հեռանկարները զարգացման ծրագրերի համատեքստում (հայաստանյան փորձի վերլուծություն), Ե., 2008, էջ 12-13:

⁵⁵ Տե՛ս **Adler R. P., Goggin J.**, What do we mean by “Civic Engagement”?, *Journal of Transformative Education* 3 (3), 2005, էջ 238:

⁵⁶ Տե՛ս **Talo C., Mannarini T.**, նշվ. աշխ., էջ 808:

րում, լուծում կենսական նշանակություն ունեցող մի շարք խնդիրներ, և մարդիկ մասնակցում են հանուն նյութական խթանների:

Քաղաքական մասնակցությունը արտահայտվում է երկու հիմնական ձևերով.

1. անմիջական,
2. ներկայացուցչական:

Անմիջական մասնակցության ձևերն են՝ ընտրությունները, հանրաքվեները, հանրահավաքները, երթերը, ցույցերը, բոյկոտները, որոնց միջոցով առավելագույնս դրսևորվում է քաղաքացիների կամարտահայտման սկզբունքը՝ որպես ժողովրդաիշխանության իրացման և քաղաքացիական հասարակության ինստիտուտների փոխգործակցության երաշխիք:

Ներկայացուցչական մասնակցության ժամանակ ժողովուրդն ընտրում է իր ներկայացուցիչներին՝ պատգամավորներ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պաշտոնատար անձանց՝ լիազորելով նրանց քաղաքական իշխանություն իրականացնել՝ ներկայացնելով իրենց շահերն ու պահանջ-մունքները:

Հարկ է նշել, որ ժողովրդավարական կառավարման համակարգը իրագործվում է, երբ քաղաքացիները ակտիվ ներգրավվում են հասարակության քաղաքական կյանքին: Այսինքն՝ ժողովրդավարական կառավարման համակարգում յուրաքանչյուր քաղաքացի ձայն ունի պետության կառավարման գործընթացում:

Քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը ժողովրդավարության և հզոր քաղաքացիական հասարակության կայացման հիմնական սկզբունքներից մեկն է: Վերոհիշյալով քաղաքացիները ոչ միայն հանդիսանում են իրենց քաղաքացիական և քաղաքական իրավունքների կրողը, այլև վե-

րահսկում են պետական կառավարման համակարգի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ամրագրում է, որ «յուրաքանչյուր ոք ունի անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք: Կառավարության, իշխանության գործունեության հիմքում պետք է լինի ժողովրդի կամքը⁵⁷»: Հետևաբար քաղաքացիների կամքի արտահայտման իրացումը ժողովրդավարական հասարակարգի ինստիտուտների գոյության և հետագա զարգացման հիմքն է:

Նկարագրելով քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության հասկացությունները՝ փորձենք տալ դրանց սահմանումները:

«Քաղաքացիական ներգրավվածություն» հասկացությամբ մեկնաբանվում է առանձին քաղաքացիների մասնակցությունը հանրային կյանքին, որը տեղի է ունենում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, քաղաքացիների հոծ զանգվածի, պետության տարաբնույթ ինստիտուտների ու բիզնես հաստատությունների միջև ուղղակի և անուղղակի փոխազդեցությունների միջոցով՝ հասարակական-քաղաքական գործընթացներում որոշումների կայացման վրա ազդեցություն ունենալու կամ համընդհանուր նպատակներ հետապնդելու դեպքում: Դա մի գործընթաց է, որը համախմբում է քաղաքացիներին կամ նրանց կողմից վստահված ներկայացուցիչներին՝ «ազդելու, ձևավորելու և վերահսկելու հանրային խնդիրները և հասարակու-

⁵⁷ Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 10.12.1948 թ., հոդված 21:

թյան զարգացման նախաձեռնությունները, ռեսուրսների միջոցով դրանց իրականացումը⁵⁸»:

Այսպիսով, մասնակցությունը հասարակության զարգացմանը կամ կառավարության ձևավորմանը ուղղված մոտեցում է, որի համաձայն՝ քաղաքականության առանցքային դերակատարները ներգրավված են հիմնախնդիրների և ոլորտային գերակայությունների սահմանման գործընթացում՝ նշանակալիորեն վերահսկելով ծրագրերի պլանավորումը և իրականացումը:

Ինչպես նշվել է բրիտանական INTRAC ուսուցողական և հետազոտական կենտրոնի՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Միջազգային Զարգացման Նախարարություն (այսուհետ՝ ՄՁՆ) ներկայացված հաշվետվությունում, մասնակցությունը դիտարկվում է որպես լայն հասկացություն, որը տարբեր մեկնաբանությունների է ենթարկվում: Նպատակ չունենալով միասնական հստակ սահմանում տալ այդ հասկացությանը՝ վերոհիշյալ հաշվետվության մեջ նշվել է, որ այն տեխնիկական կամ գիտական հասկացություն չէ: Ուստի այն դիտարկվում է որպես գործնական քաղաքականության կազմակերպման և մոտիվացման սկզբունք⁵⁹:

Այսպես, մասնակցությանը վերաբերող՝ ՄՁՆ գրառումներում ներկայացվում է մասնակցության չորս առանցքային տարր.

1. տեղեկատվություն,
2. խորհրդատվություն,

⁵⁸ St' u Enabling environments for Civic engagement in PSRP countries (ARVIN), Social development notes, № 82, March 2003, էջ 1: <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/11319/279920PAPER0sdn82.pdf?sequence=1&isAllo wed=y> հասանելի էր՝ 20.04.2017:

⁵⁹ The Participatory Approaches Learning Study (PALS) Overview Report (International NGO Training and Research Centre), For the Department of International Development, UK, October 1999, (հղումը տե՛ս **Թադևոսյան Գ., Չալոյան Ա., Ղազարյան Դ.**, նշվ. աշխ., էջ 20-21):

3. գործընկերային հարաբերություն,
4. վերահսկողություն⁶⁰:

Մասնակցությունը կարող է տարաբնույթ լինել: Այն կարող է դրսևորվել.

- Տարբեր ոլորտներում (հասարակական-քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլն):
- Տարբեր ձևերով՝ ուղղակի, անուղղակի:
- Տարբեր կերպով՝ ըստ իր կազմակերպվածության աստիճանի. ինչպես սանկցիաներով, այնպես էլ կազմակերպված՝ քաղաքացիական հասարակության սուբյեկտների գործառնությամբ:
- Տարբեր խորությամբ. այսինքն՝ սովորաբար հասկացվում է մասնակցության այն աստիճանը, որով քաղաքացիական հասարակության սուբյեկտները հնարավորություն ունեն ներթափանցելու կառավարության դաշտ և մասնակցելու որոշումների կայացման բուն գործընթացին:
- Ըստ տարբեր ընդգրկվածության. սա նշանակում է մասնակցության գործընթացում բազմաբնույթ խմբերի ներառում, ինչպես նաև մասնակցության շրջանակի ընդլայնում՝ ոչ նմանատիպ խմբերի ընդգրկման միջոցով կառավարող ընտրախավին իրենց բնութագրիչներով փոխարինելով:
- Իր ազդեցության մասշտաբով՝ քաղաքականության զարգացման ծրագրերի ներկայացման և իրագործման շրջանակներում:
- Միտված լինելով որոշակի օբյեկտի (ըստ որևէ հատկանիշի՝ առանձնացված գործունեության ոլորտ, որին առնչվում է տվյալ մասնակցային գործողությունը), առար-

⁶⁰ Տե՛ս նույն տեղում:

կայի (խնդիր, որի բացահայտմանն ու լուծմանն է նպատակամղված տվյալ մասնակցային գործողությունը):

- Որոշակի սուբյեկտների միջոցով⁶¹:

Մասնակցության մեխանիզմները, ամրագրվելով օրենքներում, պարտադրում են կառավարությանը կամ վերջինիս առանձին կառույցներին, հասարակության դերակատարներին ներգրավել հանրային քաղաքականության այս կամ այն գործընթացին: Ընդհանուր առմամբ, մասնակցությունը դառնում է անիմաստ, քանի դեռ իշխանության սուբյեկտները չեն թույլատրում մյուսներին մասնակցել որոշումների կայացման, ռեսուրսների կառավարման և վերահսկման գործընթացներին:

Քաղաքացիական մասնակցությունը՝ որպես կամավոր գործողության դրսևորում, օգնում է համակարծիք (և ոչ միայն) հայացքներ ձևավորել և ամրապնդել ժողովրդավարական կառավարման համակարգը: Հասարակական-քաղաքական գործընթացներում քաղաքացիների մասնակցությունը հանգեցնում է առավել արդյունավետ կառավարմանը և տարբեր ծրագրերի իրականացմանը՝ տեղական փորձն ու ձեռքբերումները դարձնելով ծրագրերի ընտրության, նախագծման և իրականացման մաս:

«Քաղաքացիական ներգրավվածություն» և «մասնակցություն» հասկացությունների հարաբերակցության մասին խոսելիս թերևս անհրաժեշտ է հաշվի առնել, որ քաղաքացիական ներգրավվածության սահմանումը ավելի լայն է, քան մասնակցությունը, ավելին՝ մասնակցությունը քաղաքացիական ներգրավվածության առավել ակտիվ դրսևորումն է: Մասնակցությունը գործողությունների այնպիսի պայմանների գործադրումն է, որոնք կարող են նպաստել ակտիվացնելու հասարակության այն

⁶¹ Տե՛ս **Milbrath, L. W.**, “Political participation.” In *the handbook of political behavior* ed. by Samuel L.Long, Springer, Boston, MA, 1981, էջ 197-200, https://doi.org/10.1007/978-1-4684-3878-9_4:

հատվածը, որը հասարակական-քաղաքական կյանքի ներգրավման հարցում և պետական ապարատի գործունեության վերահսկման առումով պակաս դերակատարում ունի⁶²:

Քաղաքացիների մասնակցության աստիճանը ընդլայնելու առումով կարևոր նշանակություն ունեն նաև հասարակական կազմակերպությունները: Հասարակական կազմակերպություններին անդամագրվելով՝ քաղաքացիները ինտեգրվում և ակտիվ մասնակցում են հասարակական կյանքին:

Խոսելով քաղաքական մասնակցության մասին՝ մենք չենք կարող չանդրադառնալ հաշմանդամներին: Նրանք կարծես օտարված լինեն հասարակությունից, և նրանց մասնակցության աստիճանը բավականին ցածր է: Մեր հանրապետության շատ հաշմանդամների համար առաջնային խնդիր է իրենց իրավունքների ոչ միայն իմացությունը, այլև իրագործման երաշխավորությունը և դրանցից օգտվելու հնարավորությունը:

Ներկայումս մի շարք ՀԿ-ներ զբաղված են նրանց օրինական իրավունքների պաշտպանությամբ և ամրագրմամբ: Հետևապես ժողովրդաիշխանության կառավարման պայմաններում առաջնային է հասարակության բոլոր շերտերի ինտեգրումը և ակտիվ մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին: Ուստի այդ մասնակցությունը պետք է հանգեցնի ընտրական իրավունքի ոչ միայն ակտիվ, այլև պասիվ դրսևորմանը: Նրանք պետք է հնարավորություն ունենան մասնակցելու քաղաքական որոշումների կայացման գործընթացին՝ ներգրավվելով իշխանության ճյուղերի գործունեությանը:

Հարկ է նշել, որ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական կյանքին կախված է տիրող իրավիճակից, քաղաքական համակարգի բնույթից, ինչպես նաև մարդու քաղաքական

⁶² Տե՛ս նույն տեղում, էջ 20-21:

հետաքրքրության շրջանակներից: Վերջին հաշվով, մարդն ինքն է ձևավորում քաղաքական իշխանություն՝ սեփական քաղաքական գործունեության և հասարակության մեջ իր վարքագծի միջոցով:

Քաղաքական մասնակցության վրա առանցքային դերակատարում ունի հասարակության մեջ քաղաքական մշակույթի դրսևորման մակարդակը, որն արտահայտվում է ժողովրդավարության նորմերի և ինստիտուտների ներդրման և ընկալման մեջ: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ հասարակության քաղաքացիական գիտակցության մեջ որքան խորն են ժողովրդավարական արժեքների և նորմերի ըմբռնումը, այնքան բարձր է քաղաքական մասնակցության մակարդակը: Եվ հակառակը՝ որքան ժողովրդավարական հասարակարգում ցածր է մարդու իրավունքների և ազատությունների նշանակությունը, այնքան բնակչության զգալի մասի մոտ արտահայտվում է հակակրանք և օտարում հասարակական-քաղաքական կյանքից: Իսկ մյուս կողմից, հակառակը՝ քաղաքացիների երկարատև օտարումը և հասարակական-քաղաքական կյանքին չմասնակցությունը հանգեցնում է շահերի ներկայացման և պահանջմունքների բավարարման անկարողություն, հավատի և վստահության կորուստ:

Քաղաքական մասնակցության մեջ անձի ներգրավման պատճառները կարող են տարբեր լինել: Ուստի նշենք այն հիմնական պատճառները, որոնց դեպքում քաղաքացիները չեն մասնակցում հասարակական-քաղաքական կյանքին.

- Նրանք չեն հավատում մասնակցության արդյունքին: Հաճախ քաղաքացիներին թվում է, որ ամեն ինչ արդեն որոշված է, և իրենց ձայնը (ընտրական իրավունք, հանրաքվե) կամ մասնակցության այլ ձևերին ներգրավվումը որոշիչ չէ: Այդ մարդիկ կորցնում են իրենց հավատը սեփական հնարավորությունների նկատմամբ և կարծում են, որ

իրենց մասնակցությամբ ոչինչ չի կարող փոխվել քաղաքականության մեջ:

- Հասարակական-քաղաքական կյանքին ներգրավվածությունը, տարաբնույթ հարցերի բարձրաձայնումը այդպես էլ չեն ազդում իրենց անձնական կյանքի բարելավման վրա:
- Այլ հետաքրքրություններ և նախասիրություններ ունեն: Վերջինս սոցիալական ստրատիֆիկացիայի համընդգրկուն դրսևորման արդյունք է: Բնակչության մի մասը այժմ է ընկնում քաղաքական և քաղաքացիական մշակույթի ցածր գիտակցությամբ, իսկ մյուսը՝ հակառակը. սոցիալապես ապահովված խավի համար վերոհիշյալ գործընթացը երբեմն դառնում է անհետաքրքիր, նրանց ձեռնտու է անփոփոխ կառավարման համակարգի առկայությունը: Այդ իսկ պատճառով էլ նրանք հիմնականում չեն մասնակցում տարաբնույթ քաղաքացիական գործողությունների:
- Չեն վստահում քաղաքական դերակատարներին՝ համարելով նրանց խոստումները անիրագործելի: Նրանք, հիասթափվելով քաղաքական կուսակցությունների և պաշտոնատար անձանց տված կեղծ խոստումներից, քաղաքական էլիտայի վերարտադրվելու մեխանիզմից, ինքնաբերաբար օտարվում են քաղաքականությունից:
- Մի մասն էլ անտարբեր է քաղաքականության և իշխանությունը իրականացնողների գործունեության նկատմամբ:

Ինչպես նշել է Ե. Շեստոպալը, հասարակական-քաղաքական համակարգը կայունացնելու և զարգացնելու համար անհրաժեշտ է այն համալրել նոր կադրերով⁶³:

Հասարակական-քաղաքական կյանքին չմասնակցության պատճառները մասնավորապես բացատրվում են գործող համակարգի անարդյունավետ կամ ոչ հանրօգուտ գործակցությամբ, որն էլ նպաստում է քաղաքացիների մի մասի օտարմանը քաղաքական դաշտից: Այսինքն՝ հասարակության մեջ չկան այնպիսի ուժեր, որոնք ընդունակ կլինեն խթանելու բնակչության ակտիվությանը, վերացնելու անվստահության և անտարբերության տարրերը հասարակական-քաղաքական կյանքում:

Քաղաքական կյանքին չմասնակցելը հիմք չի տալիս բոլոր դեպքերում այն համարել անընդունելի: Չմասնակցության երևույթը բավականին տարածված է մեր ժամանակներում, հատկապես՝ ժողովրդավարական հասարակարգերում: Հարկ է նշել, որ չմասնակցությունը գնահատվում է ոչ միանշանակ: Շատերը այն դիտում են որպես հասարակության կայունությունը խարխլող վտանգ, իշխանության լեգիտիմության նվազման միտում, իսկ ոմանք էլ հակառակ կարծիքին են՝ այն դիտում են քաղաքացիական հասարակության ձևավորման արտահայտություն, ինչպես նաև դա վկայում է ժողովրդի ազատության, հասարակական-քաղաքական կյանքում բազմակարծության (պլյուրալիզմի), քաղաքականության նկատմամբ սեփական վարքի դրսևորման հնարավորություն: Ընդհանրապես հասարակության մեջ մասնակցությունը և չմասնակցությունը՝ մասնակցային գործընթացում քաղաքացիների չներգրավվածությունը, վատ համատեղվող երևույթներ են:

⁶³ См' u **Шестопал Е. Б.**, Политическая психология, М., 2002, էջ 130:

Ասվածից հետևում է, որ ժողովրդավարությունը՝ ժողովրդաիշխանությունը, անհրաժեշտ է, որ խթանի հասարակության յուրաքանչյուր անդամի ակտիվ մասնակցությունը և ներգրավվածությունը հասարակական-քաղաքական կյանքին, քանի որ միայն ակտիվ մասնակցությամբ է հնարավոր ժողովրդի և իշխանության միջև գոյություն ունեցող սահմանագծի վերացումը և ժողովրդավարական կառավարման համակարգի կայացումը: Վերջինս իրագործելու համար անհրաժեշտ է վերականգնել ժողովրդի հավատը և վստահությունը կառավարության գործունեության հանդեպ՝ անցկացնելով ազատ և թափանցիկ ընտրական գործընթաց: Միայն այդ դեպքում է հնարավոր «իշխանությունը պատկանում է ժողովրդին» սահմանադրաիրավական դրույթի ամբողջովին գործառնումը: Հատկապես քաղաքացիների ակտիվ մասնակցությունը հասարակական-քաղաքական կյանքին հանգեցնում է ոչ միայն լեզիտիմ օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորմանը, այլև վերջիններիս գործունեության վերահսկողության և հաշվետվողականության սկզբունքի ապահովմանը, ինչը կերաշխավորի պատվիրակված ներկայացուցչին պահանջներ ներկայացնելը և նրա գործունեությանը հետևողական լինելը: Այս առումով, առավել քան կարևոր է յուրաքանչյուրի մասնակցության կշռադատված կամքի գործադրումը՝ առանց ուրիշների կողմից ճնշման և պարտադրման միջոցների: Անհրաժեշտ է՝ յուրաքանչյուր քաղաքացի իր մեջ արմատավորի այն համոզմունքը, որ ժողովրդավարական հասարակության մեջ, որտեղ գերակա են իրավունքի և օրենքի հավասարության սկզբունքները, ինքն է դրանք կրողն ու իրացնողը:

Արդի դարաշրջանի մասնակցային գործողությունների շարքում իր ուրույն տեղն ունի նաև ցանցային մասնակցությունը, առանց որի մասնակցային գործընթացը լիակատար գործառնել չի կարող: 20-րդ դարավերջին տեղեկատվական հեղափոխությամբ

ցանցային և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ի հայտ գալով՝ սկիզբ դրվեց տեղեկատվական դարաշրջանի մեկնարկին: Ներկայիս տեղեկատվական դարաշրջանում ցանցային տեխնոլոգիաների կիրառումը ոչ միայն թույլ է տալիս որոշակի գործողություններ ավելի հեշտ և արագ իրականացնել, այլև նպաստում քաղաքացիների ձեռնհասության մակարդակի բարձրացմանը: Տեղեկատվական գործառույթի միջոցով հասարակության քաղաքական կյանքի նկատմամբ ժողովրդի հետաքրքրության շրջանակը ավելի է ընդլայնվում, մեծ նշանակություն է տրվում համացանցային աղբյուրների միջոցով նաև հանրային հարաբերությունների տարբեր ոլորտներում առկա ձեռքբերումների ու բացթողումների հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների ապահովմանը: Այսպես, ուղիղ եթերի հաճախակի հեռարձակումը միանշանակ ապահովում է հասարակության հետ անմիջական կապը, որը հավատի և վստահության խորացման գրավական է հանդիսանում:

Ի հավելումն դրան՝ նշենք, որ հաճախակի ուղիղ հեռարձակումը ոչ միայն կապը լսարանի հետ պահելու միջոց է, այլև կարևոր տեղեկատվությունը շատ արագ, առանց կեղծ լուրերի, առանց խմբագրական միջամտությունների տեղ հասցնելու գործոն: Ուստի ժամանակակից հասարակարգերի համար ինչպես կարևոր է ցանցային մասնակցության դրսևորումը, այնպես էլ զերակա է տեղեկատվական անվտանգության ապահովումը: Քանի որ արդի դարաշրջանում «առանց սահմանների աշխարհ» սկզբունքը ավելի է մեծացնում պետությունների համար վտանգը՝ ի հայտ բերելով տեղեկատվական-հաղորդակցային հարթակը սահմանափակող, ազգային անվտանգության սպառնալիք հանդիսացող վտանգներ՝ կիրբերահաբեկչությունը և կիրբերհանցագործությունը, հետևողական պետական վերահսկողության միջոցով հարկավոր է դրանց կանխարգելման և հակազդման միջոցներ ձեռնարկել:

1.3. Քաղաքական մասնակցությունը որպես ժողովրդաիշխանության դրսևորման առանցքային նախապայման

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են ժողովրդավարացման երեք ալիքներ, որոնցից յուրաքանչյուրին հատուկ են իր պատմական պայմանները և առանձնահատկությունները՝ երկրների մի մասում ժողովրդավարության ամրապնդմամբ, իսկ մյուսներում՝ ձախողմամբ: Հարկ է նշել, որ հետագոտողները հստակ չեն առանձնացնում ժողովրդավարացման ալիքների պատմական սահմանները, ինչպես նաև ժողովրդավարության կայացման հաջող և անհաջող փորձերը: Դա բացատրվում է մի շարք հանգամանքներով՝ տարբեր երկրներում ժողովրդավարության սահմանման հայեցակարգային տարբերություններով, ժողովրդավարության զարգացման ցուցիչներով, ժողովրդավարական գործընթացների շարունակականության մասին պատկերացումներով և այլն:

Ըստ Ս. Հանթինգթոնի՝ ժողովրդավարացման առաջին երկար ալիքն սկսվել է 1828 թ. և ավարտվել 1926 թ.: Վերջինիս առաջացմանը նպաստել են ամերիկյան և ֆրանսիական հեղափոխությունները, ԱՄՆ «նահանգ-պետությունների» առաջացումը և բրիտանական դոմինիոնների ժողովրդավարացումը: Այն հանգեցրեց ժողովրդավարական մի շարք պետությունների ի հայտ գալուն, որոնք բնութագրվում են պառլամենտարիզմով, կուսակցական ձևավորված համակարգով և ընտրական իրավունքով: Ալիքին բնորոշ հատկանիշն է ընտրական իրավունքը. իշխանություններն ընտրվում են ազատ և արդար ընտրությունների միջո-

ցով⁶⁴: Ըստ Լ. Դայմոնդի՝ ժողովրդավարացման առաջին հակադարձ ալիքը տեղի է ունեցել 1922-1942 թթ.: Դա պայմանավորված էր ֆաշիզմի առաջացմամբ, ինչպես նաև որոշ երկրներում (օրինակ՝ ԽՍՀՄ)՝ ամբողջատիրական համակարգի ներդրմամբ⁶⁵:

Ժողովրդավարացման երկրորդ ալիքն սկսվել է 1943 թ.՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, և շարունակվել մինչև 1962 թ.⁶⁶: Վերջինիս ձևավորումը պայմանավորված էր ֆաշիզմի տապալմամբ և ուժեղացող հակազաղութատիրական լայնածավալ շարժմամբ: Հատկանշական էր ժողովրդավարական ինստիտուտների ստեղծումը Ֆրանսիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Ավստրիայում և Հարավային Կորեայում: 1950-ական թթ. սկզբին ժողովրդավարության ուղին բռնեց նաև Հունաստանը, և ժողովրդավարական վարչակարգին վերադարձավ Ուրուգվայը: Այնուհետև Նիգերիայից սկսվեց Աֆրիկայի ժողովրդավարացումը: Նշենք, որ ըստ Լ. Դայմոնդի՝ 1961-1975 թթ., իսկ ըստ Ս. Հանթինգթոնի՝ 1958-1975 թթ. տեղի է ունեցել երկրորդ հակադարձ ալիքը: Ակնհայտ է, որ ժողովրդավարացման երկրորդ ալիքն արդեն սպառվել էր, և քաղաքական զարգացումներն ու վարչակարգի փոփոխությունները վարչահրամայական բնույթի էին: Հակադարձ ալիքի ընթացքում գրեթե ողջ Լատինական Ամերիկայում հաստատվեցին վարչահրամայական կարգեր, մասնավորապես Պերուում ընտրությունների արդյունքները փոխելու նպատակով ռազմական միջամտություն կատարվեց: Յուրաքանչյուր հակադարձ ալիք աշխարհում զգալիորեն կրճատեց ժողովրդավարական երկրների թվաքանակը: Նախկին ժողովրդավարական որոշ երկրներ վերադարձան վարչահրամայական

⁶⁴ Տե՛ս **Хантингтон С.**, Третья волна: Демократизация в конце XX века, РОССПЭН, М., 2003, էջ 26-27:

⁶⁵ Տե՛ս **Даймонд Л.**, Прошла ли “третья волна” демократизации?, “Политические исследования” (“Полис”), 1999, № 1, էջ 1:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում:

կարգի: Հակադարձ ալիքները մեծագույն վնաս են հասցնում քաղաքական ազատությանը, մարդու իրավունքներին և խաղաղությանը: Հետևաբար գործընթացների նման շրջադարձի կանխումը պետք է ժողովրդավարական բոլոր երկրների դերակատարների և ինստիտուտների քաղաքական նպատակների իրականացման համար առաջնային տեղ զբաղեցնի:

Ժողովրդավարացման երրորդ ալիքն սկսվել է 1974 թ. Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոնում սկսված «Մեխակների հեղափոխությամբ», որը տապալեց Անտոնիո դի Օլիվեյրա Մալազարի գլխավորած վարչաիրամայական կարգերը: 1980-ական թթ. ժողովրդավարություն հաստատվեց Բրազիլիայում, Չիլիում, Արգենտինայում, Պերուում, Հարավարևելյան Ասիայի և Արևելյան Եվրոպայի որոշ երկրներում (Հունգարիա, Լեհաստան, Չեխոսլովակիա, Բուլղարիա)⁶⁷: Ինչպես նշել է Ֆ. Շմիտերը, մինչ 1974 թվականին Պորտուգալիայում վարչաիրամայական ռեժիմից ժողովրդավարացման անցնելը՝ ժողովրդավարացման երկարատև գործընթացներից հետո (1848-1852 թթ., 1914-1920 թթ., 1945-1956 թթ.), հասարակարգերից եթե ոչ բոլորը, ապա շատերը վերադարձան նույն կարգավիճակին կամ ավելի վատ՝ ոչ ժողովրդավարական վարչակարգերին անցան⁶⁸:

Ժողովրդավարացման երրորդ ալիքի համատեքստում Ս. Հանթինգթոնը մեծ կարևորություն էր տալիս նաև «ձնագնդի» էֆեկտին, որն հատկապես վառ արտահայտվեց Արևելյան Եվրոպայում այն բանից հետո, երբ Խորհրդային Միությունը համակերպվեց Լեհաստանում 1989 թ. օգոստոսին ոչ կոմունիստական կուսակցության ներկայացուցիչների իշխանության գալու փաստի հետ, որից հետո այն տարածվեց նաև Հունգարիայում (1989 թ.

⁶⁷ Տե՛ս **Хантингтон С.**, նշվ. աշխ., էջ 12-13:

⁶⁸ Տե՛ս **Шмиттер Ф.**, Угрозы и дилеммы демократии, <http://www.politnauka.org/library/dem/schmitter.php> հասանելի էր՝ 12.02.2018:

սեպտեմբեր), Արևելյան Գերմանիայում (1989 թ. հոկտեմբեր), Չեխոսլովակիայում և Բուլղարիայում (1989 թ. նոյեմբեր), Ռումինիայում (1989 թ. դեկտեմբեր): Ըստ Մ. Հանթինգթոնի՝ «ձնագնդի» էֆեկտի ավելանալը ազդում է նաև անցման արագության (ռեդուկցիա) վրա. եթե Լեհաստանում ժողովրդավարացումը տևեց տասը տարի, ապա Հունգարիայում՝ տասը ամիս, Արևելյան Գերմանիայում՝ տասը շաբաթ, Չեխոսլովակիայում՝ տասը օր, իսկ Ռումինիայում՝ տասը ժամ⁶⁹:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ ալիքները տեղի չէին ունենա, եթե ժողովրդավարական համախմբումը կայանար: Կարելի է համաձայնել, որ միայն ժողովրդավարական արժեքների արդարացի ներդրումը, դերակատարների լեգիտիմ իշխանության ձևավորումը կարող էին թույլ տալ անցման գործընթացը ավարտին հասցնել և քաղաքական զարգացում ապահովել տվյալ հասարակության մեջ: Բայց քանի դեռ այս ընթացակարգերը չեն իրագործվել, քանի դեռ տեղի են ունենում ժողովրդավարացման հակադարձ ալիքներ, ապա մի շարք երկրներում առավել կոշտ վարչահրամայական կառավարման համակարգ է ձևավորվում: Տեղին է նշել, որ ժողովրդավարացման մի ալիքից մյուսին անցնելը անխուսափելի կլինի:

Անցման վերջին փուլը համարվում է «համախմբված ժողովրդավարությունը»: Սկզբում այս տերմինը օգտագործվել է ժողովրդավարական նոր հասարակությունների կենսագործունեության ապահովումը և ոչ ժողովրդավարական իրավիճակին վերադառնալու անհնարիությունը բնութագրելու համար:

Ժողովրդավարության համախմբումը ժողովրդավարական կառավարման ձևին անցնելու վճռորոշ փուլն է: Այն սկսվում է նախորդ վարչակարգի հետ ունեցած կապերի վճռական խզումից

⁶⁹ Տե՛ս **Хантингтон С.**, նշվ. աշխ., էջ 117-118:

հետո, որը թույլ է տալիս տնտեսական, սոցիալական և մշակութազադափարախոսական հակասությունների և ճգնաժամերի դեպքում պահպանել հնարավորինս կայուն զարգացում: Այս առումով ժողովրդավարական համախմբումը նոր քաղաքական հարաբերությունների հիմնավորման գործընթաց է՝ ոչ միայն դրա արժեքների ու նորմերի սուբյեկտիվ ընդունման, այլև ժողովրդավարական ինստիտուտների հետագա գործառնության հուսալիության իմաստով: Ժողովրդավարության համախմբման հետազոտության մեջ ձևավորվել են մի քանի մոտեցումներ՝ կառուցվածքային, անցումնագիտական, ինստիտուցիոնալ: Ինչպես նշել է ռուս քաղաքագետ Լ. Սմորգունովը, «Համաձայն կառուցվածքային մոտեցման՝ ժողովրդավարական համախմբումը հիմնվում է ժողովրդավարացման գործընթացը որոշող արտաքին պայմանների վրա: Անցումնագիտական մոտեցումը կապված է քաղաքականության մեջ գործող դերակատարների՝ քաղաքական կյանքի ժողովրդավարական ձևեր ընտրելու տեսության հետ: Ինստիտուցիոնալ մոտեցումը բնորոշում է տարբեր ինստիտուցիոնալացված վարչակարգերի դերը ժողովրդավարության ամրապնդման գործընթացում»⁷⁰:

Ժողովրդավարական համախմբման գործընթացը քաղաքական անցումնաբանության ուսումնասիրության կարևորագույն օբյեկտ է հատկապես համեմատական քաղաքագիտության բնագավառում, որտեղ ուսումնասիրվում են անցումային հասարակությունների տարբեր գործընթացներ: Ընդհանուր առմամբ, գրեթե 40 տարի այս հետազոտական հարացույցը չի կորցնում իր արդիականությունը՝ իր վրա սևեռելով գիտական հանրության ուշադրությունը: 1970-ական թթ. սկզբին՝ անցումնաբանական առաջին աշխատանքների ի հայտ գալուց հետո, գիտական աշխա-

⁷⁰ См' u **Сморгунов Л.**, Сравнительная политология: Учебник для бузов, стандарт третьего поколения, СПб, Питер, 2012, էջ 226:

տությունների հոսքն այս ոլորտում աճել է՝ 1990-ական թթ. սկզբին հասնելով զագաթնակետին: Այդ տարիներին տեսական և գործնական հսկայական նյութ է հավաքվել՝ թույլ տալով մասնագետներին հանգամանորեն ուսումնասիրել անցումային գործընթացները, մասնավորապես՝ կառուցել միջմշակութային վերլուծություններ կատարելու մոդելներ: Այսօր անցումաբանական հարացույցը մնում է մակրոտնտեսական վերափոխումների ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցումների աղբյուրներից մեկը: Միննույն ժամանակ քաղաքական զարգացման համաշխարհային միտումները թելադրում են ոլորտի բացատրման գիտական գործիքակազմի նոր պահանջներ, որոնք այժմ համաշխարհային քաղաքականության մեջ առավել հաճախ են արձարծում «ազատական» և «վարչահրամայական» քաղաքական նախագծերի մրցակցության գաղափարը⁷¹:

Ակնհայտ է, որ «ժողովրդավարացման երրորդ ալիքը» (Ս. Հանթինգթոն)⁷² և «պատմության վերջը» (Ֆ. Ֆուկույամա)⁷³ հասկացությունները կորցրել են իրենց արդիականությունը: Ֆուկույաման պնդել է, որ աշխարհում արևմտյան տեսակի ազատական ժողովրդավարության տարածումը վկայում է քաղաքակրթության զարգացման վերջնակետի և կառավարության վերջնական ձևի կազմավորման մասին: Համաշխարհային պատերազմները, ցեղասպանությունները և ամբողջատիրական համակարգերի գոյությունը խաթարեցին հասարակարգերի զարգացման նկատմամբ ժողովրդի հավատը, ուստի ազատական ժողովրդավարական համակարգի մենաշնորհը աշխարհում չունի այլընտրանք: Ազատական ժողովրդավարության պայմաններում

⁷¹ Տե՛ս **Кулагин В. М.**, Соревнование “либерального” и “авторитарного” проектов в контексте глобализации, Современные глобальные проблемы мировой политики, под ред. Лебедевой М., Аспект-Пресс, М., 2009, էջ 220:

⁷² Տե՛ս **Хантингтон С.**, *և՛ Վ. աշխ.*:

⁷³ Տե՛ս **Fukuyama F.**, *The end of history and the last man*, Penguin books, 1992:

որն է պետության նյութական և տեխնիկական բարգավաճման ցանկությունն ու ձգտումը ստիպում են նրան ընդունել արդիականացման խաղի կանոնները, հետևաբար՝ արևմտյան տիպի ներմուծումը⁷⁴:

Այսպես, եթե ազատականության բաղադրիչը կենսագործունեության բոլոր ոլորտներում որոշակի տիպի ինստիտուտների ձևավորման համար անհրաժեշտ պայմաններ է ապահովում, ապա ժողովրդավարության բաղադրիչը պետք է ապահովի դրանց բնականոն ու լիարժեք գործառնման և փոխազդեցության համար անհրաժեշտ արարողակարգերի, ընթացակարգերի մշակումն ու իրականացումը⁷⁵:

Մեր կարծիքով, կարևոր են ժողովրդավարական համախմբման տեսության ուսումնասիրությունը, ի մասնավորի ժողովրդավարական համախմբման հիմնական գործոնների էության ու ընդհանրության վերլուծությունը, ինչպես նաև այդ գործընթացի կրկնվող մոդելների բացահայտումը ժողովրդավարական զարգացման հեռանկարների ուղենշման համար:

Ա. Պշևորսկին համախմբման հիմնական գործոն է համարել քաղաքական զարգացման ընթացքը, ինչպես նաև նրան բնորոշ բարեփոխումները. նա ուշադրություն է դարձրել ոչ միայն քաղաքական ընտրանու, այլև հասարակության գիտակցության, քաղաքակրթվածության մակարդակին⁷⁶:

Ժողովրդավարական անցման արդյունավետությունը պայմանավորված է նաև ընթացակարգային և կառուցվածքային գործոններով: Համաձայն առաջինի՝ անցման արդյունավետությունը

⁷⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 11:

⁷⁵ Տե՛ս **Պշևորսկի Ա.**, Демократия и рынок: Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке, пер. с англ. / под. ред. проф. Бажанова В., “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), М., 2000, էջ 140:

⁷⁶ Տե՛ս նույն տեղում:

պայմանավորված է քաղաքական ընտրանու՝ համընդհանուր ընդունելության արժանացած ընթացակարգերի ընտրության, ընդունվող որոշումների կառուցակարգում հանրային շահի գերակայության ընդգծմամբ: Իսկ երկրորդի ժամանակ անհրաժեշտ է կարևորել հասարակության մեջ առկա միջազգային, սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային այն կառուցակարգերը, որոնք իրատես գործունեություն են ծավալում՝ հանուն ժողովրդավարական արժեքների հաստատման: Ժողովրդավարության ծագումնաբանության ընդհանուր մոդելները կազմելիս անորոշությունները նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է հենվել մերթ կառուցվածքային (առաջին հերթին՝ պետական և ազգագոյացման, սոցիալ-տնտեսական և մշակութաարժեքային), մերթ ընթացակարգային գործոնների, մասնավորապես՝ այն քաղաքական դերակատարների ընտրության և կոնկրետ որոշումների ու գործողությունների վրա, որոնցից կախված է ժողովրդավարացման գործընթացը⁷⁷: Այս համատեքստում Ֆ. Շմիտերը և Թ. Կարլը նշել են, որ անցումնաբանական մոտեցման մեկ այլ գաղափարական նախադրյալ է այն, որ ավտորիտար համակարգի փլուզումից հասարակության զարգացմանը տանող մի շարք ուղիներ կան, ուստի դրանցից միայն մի քանիսն են հանգեցնում ժողովրդավարության կայացմանը: Սա ենթադրում է, որ կոնկրետ ուղու ընտրությունը կախված է փլուզված ոչ ժողովրդավարական ռեժիմից: Այսպիսով, ի տարբերություն արդիականացման տեսության՝ ժողովրդավարական անցումը ոչ միայն առանձին էվոլյուցիոն գործընթաց է, այլև ոչ հարթ և գծային այլընտրանքային ուղիների ամբողջություն: Այդ ուղիները սահմանելիս ամերիկյան անցումագետները հաշվի են առել երկու գործոն՝

⁷⁷ St' u **Talo C., Mannarini T.**, Measuring participation: Development and validation the participatory behaviors scale, Social indicators research 123 (3), September 2015, էջ 811:

ինչպես էլիտաների և զանգվածների ռազմավարությունը, այնպես էլ իշխող խմբերի և նրանց հակառակորդների միջև ուժերի հավասարակշռության պահպանումը: Ըստ այսմ՝ Տ. Կարլը և Ֆ. Շմիտերը, կարևորելով անցման ուղիների ընտրության հարցը, առանձնացնում են չորս հիմնական կատեգորիաներ՝ «պակտ», «բարեփոխում», «պարտադրում» և «հեղափոխություն»⁷⁸:

Հեղափոխությունը հասարակության ներքին ուժերի, գերիշխող արժեքների և այդ հասարակության քաղաքական ինստիտուտների, սոցիալական կառուցվածքի, կառավարության գործունեության և քաղաքական վերնախավի փոփոխության հետևանքով առաջացած արագ, հիմնարար և երբեմն բռնի կերպով տեղի ունեցող գործողություն է: Ուստի հեղափոխությունները պետք է տարբերել ապստամբություններից, կոտորածներից, հեղաշրջումներից և անկախության համար մղվող պատերազմներից: Հեղաշրջումը՝ որպես այդպիսին, փոխում է միայն առաջնորդությունը, այսինքն՝ ղեկավարման կառույցները և քաղաքական ինստիտուտները, բայց ոչ սոցիալական կառուցվածքի և արժեքների ամբողջությունը: Այն, որ պարզապես մեկնաբանվում է «հեղափոխություն», այլ հեղինակներ նաև նշում են որպես մեծ հեղափոխություններ կամ սոցիալական հեղափոխություններ: Ակնառու օրինակներից են ֆրանսիական, չինական, մեքսիկական, ռուսական և կուբայական հեղափոխությունները: Նշենք, որ հեղափոխությունները հազվադեպ են տեղի ունենում: Շատ հասարակություններ երբեք չեն ունեցել հեղափոխություն: Ինչպես նշել է Կ. Ֆրիդրիխն, հեղափոխությունները բառի իրական իմաստով հանդիսանում են «արևմտյան մշակույթի առանձնահատկություն»։ անցյալի մեծ քաղաքակրթությունները Եգիպտոսում, Բա-

⁷⁸ Տե՛ս **Карл Т., Шмиттер Ф.**, Демократизация: концепты, постулаты, гипотезы, (Размышления по поводу применимости транзитологической парадигмы при изучении посткоммунистических трансформаций), Полис, 2004, № 4, էջ 13:

բելոնում, Պարսկաստանում, Հունաստանում, Հռոմում, Չինաստանում, Հնդկաստանում, արաբական աշխարհը ճանաչում էին ապստամբությունները և դինաստիաների փոփոխությունները, բայց այդ ամենը «չէիր հիշեցնում» Արևմուտքի «մեծ հեղափոխությունները»: Հին կայսրությունների դինաստիաների աճը և անկումը, ինչպես նաև հունական քաղաքներում օլիգարխիայի և այլընտրանքային ժողովրդավարության հաստատումը քաղաքական բռնությունների օրինակներ են, այլ ոչ՝ սոցիալական հեղափոխություններ: Ավելի կոնկրետ, հեղափոխությունները բնորոշ են արդիականացման ժամանակաշրջաններին, որոնք ավանդական հասարակության արդիականացման ուղիներից են, որոնք նույնքան անձանոթ էին ավանդական հասարակություններին, որքան արևմտյան հասարակարգերում՝ ավանդական արժեհամակարգը: Հետևաբար հեղափոխությունը արդիականացման վերջնական արտահայտությունն է, համոզվածությունը, որ մարդկային ուժն է վերափոխել իր միջավայրը, և որ նա ոչ միայն կարող է, այլև իրավունք ունի դա անել⁷⁹:

Հեղափոխությունը, ինչպես արդեն նշվեց, քաղաքական ինստիտուտներից դուրս քաղաքական գործողության լայնածավալ, արագ և բուռն դրսևորում է: Դրա պատճառները, հետևաբար, գտնվում են քաղաքական ինստիտուտների և սոցիալական ուժերի փոխհարաբերություններում: Այս տեսանկյունից բնորոշվում են հեղափոխության երկու նախադրյալներ. առաջին՝ քաղաքական ինստիտուտների և նոր քաղաքական ուժերի կառավարման ոլորտում անկարողությունը, երկրորդ՝ հասարակական ուժերի՝ քաղաքականությանը մասնակցելու ցանկության բացակայու-

⁷⁹ St' u **Хантингтон С.**, Политический порядок в меняющихся обществах, пер. с английского Рокитянского В., Прогресс-Традиция, М., 2004, Глава 5, http://yanko-lib.ru/books/politologiya/huntington-polit_poryadok-ru-a.htm#_Тoc182821800, հասանելի էր՝ 20.06.2019:

թյունը: Վերջերս հեղափոխությունների պատճառները բնորոշողներից շատերը կենտրոնացած էին հիմնականում սոցիալական և հոգեբանական արմատներին: Միննույն ժամանակ քիչ էին հաշվի առնվել քաղաքական և ինստիտուցիոնալ գործոնները, որոնցով էլ հեղափոխության հավանականությունը պայմանավորված էր: Հեղափոխությունները քիչ հավանական են այն քաղաքական համակարգերում, որոնցում կա իշխանության տարածման հնարավորություններ և համակարգում քաղաքական գործունեության սահմանները ընդլայնելու միտում: Այսինքն՝ ժամանակակից տիպի քաղաքական համակարգերում քիչ հավանական է հեղափոխությունների տեղի ունենալը այն պարզ պատճառով, որ նրանք պարունակում են ընթացակարգեր՝ քաղաքական կյանքին մասնակցության ձգտող նոր սոցիալական խմբերի և էլիտաների ներգրավման համար: Մեծ հեղափոխությունները տեղի են ունեցել կամ ավանդական միապետություններում՝ կենտրոնացման բարձր մակարդակով (Ֆրանսիա, Չինաստան, Ռուսաստան), կամ ռազմական գերիշխանության ներքո՝ ոչ բավարար լայն սոցիալական բազայի հիման վրա (Մեքսիկա, Բոլիվիա, Գվատեմալա, Կուբա), կամ գաղութային ռեժիմների ներքո (Վիետնամ, Ալժիր⁸⁰):

Թերևս ակնհայտ է, որ լայնածավալ հեղափոխություններ տեղի չեն ունենում ժողովրդավարական քաղաքական համակարգերում: Բայց սա չի ենթադրում, որ ժողովրդավարական հասարակարգերը ապահովագրված են հեղափոխություններից: Հետևաբար, այնքանով, որքանով սոցիալ-տնտեսական արդիականացումը արագանում է, հեղափոխության հավանականությունը մեծանում է: Հետազոտողները հաճախ փորձում են տարբերակել «մեծ» կամ սոցիալական և տնտեսական հեղափոխու-

⁸⁰ St' u **ХАНТИНГТОН С.**, նշվ. աշխ.:

թյունները, որոնք, միննույն է, բնութագրվում են որպես «գուտ» քաղաքական: Իրականում, սակայն, մեծ հեղափոխությունների ամենակարևոր արդյունքները կամ քաղաքական դաշտում են, կամ ուղղակիորեն կապված են դրա հետ: Հեղափոխությունը ներառում է հին քաղաքական ինստիտուտների ոչնչացում, նոր խմբերի մոբիլիզացումը քաղաքականության մեջ, քաղաքական դաշտի վերափոխումը, նոր քաղաքական արժեքների ընդունումը և քաղաքական լեգիտիմության հաստատումը, իշխանության վերափոխումը նոր, լեգիտիմ վերնախավով և ավելի ուժեղ քաղաքական ինստիտուտների ձևավորմամբ: Բոլոր հեղափոխությունները բխում են արդիականացման գործընթացից՝ զանգվածների քաղաքական գործունեության սահմանները ընդլայնելու իմաստով: Որոշ հեղափոխություններ իրենց հետ նաև քաղաքական զարգացում են բերում քաղաքական կարգի նոր ձևեր ներդնելու տեսանկյունից: Հեղափոխության անմիջական տնտեսական արդյունքները գրեթե ամբողջովին բացասական են: Բոլիվիայի հեղափոխությունը չի ուղեկցվել մեծ արյունահեղությամբ, բայց հանգեցրել է տնտեսական անկման: Կուբայում բռնությունը մեծ չէր, սակայն նրա տնտեսական հետևանքները բավականին ծանր էին: Հասարակության համար երկար տարիներ կամ նույնիսկ տասնամյակներ են հարկավոր՝ հեղափոխության հետևանքով անկման իրավիճակում գտնվող տնտեսական զարգացման մակարդակը կայունացնելու և բարելավելու համար: Ավելին՝ տնտեսական աճի տեմպերը գրեթե միշտ պայմանավորված են քաղաքական նոր ինստիտուտների ձևավորմամբ: Նշենք, որ մի տասնամյակ տևեց, մինչև բոլշևիկները հաստատեցին իրենց կառավարման ձևը, որպեսզի Խորհրդային Միությունում հնարավոր դառնան արդյունաբերականացման նվաճումները: Իսկ Մեքսիկայում տնտեսության արագ աճը սկսվեց միայն 1940-ականներին, երբ հեղափոխության հետևանքով ձևավորված քաղաքական

կառույցները ձեռք բերեցին կայունություն և ինստիտուցիոնալ ամրագրում⁸¹:

Ի հավելումն վերոհիշյալի՝ կարող ենք նշել, որ ժողովրդավարության անցման ամենաարդյունավետ ուղին համարվում է պակտային համաձայնությունը, որի պարագայում քաղաքական էլիտայի իշխանական և ընդդիմադիր թևերի միջև կնքվում են բազմակողմ համաձայնագրեր, համատեղ մշակվում են ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման նոր կանոններ և ընթացակարգեր: Այս առումով, ինչպես նշել է Ա. Պշտրսկին, առավել վտանգավոր է այն, որ քաղաքական դաշտի հիմնական խաղացողների միջև առկա «էլիտաների պակտը» վերածվի «կարտելային համաձայնության»: Վերջինս սահմանափակում է մրցակցությունը, լրացուցիչ արգելքներ է սահմանում այլ քաղաքական ուժերի առողջ մրցակցություն իրականացնելու համար, որոնք դուրս են մնում այդ «կարտելային համաձայնություններից», իսկ քաղաքական իշխանության ռեսուրսները յուրայինների միջև բաշխում⁸²:

«Կարտելային համաձայնության» դեպքում ժողովրդավարությունը վերածվում է ՓԲԸ-ի (փակ բաժնետիրական ընկերության), որտեղ ինչպես իշխանական, այնպես էլ ընդդիմադիր դերերը օլիգոպոլիկ համաձայնությունների միջոցով բաշխվում են մի քանի «փայտերերի» միջև՝ բացառելով «օտարների» մուտքը մեծ քաղաքականություն: Եթե իշխանությունը չի ձևավորվում ընտրությունների միջոցով ու երկարաժամկետ կտրվածքով չի փոխվում,

⁸¹ Տե՛ս **Хантингтон С.**, նշվ. աշխ.:

⁸² Տե՛ս **Пшеворски А.**, Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке, РОССПЭН, М., 2000, էջ 134:

ապա ընտրական գործընթացը վերածվում է իշխանության փոխանցման պարզ ակտի⁸³:

Այդ առումով հատկապես արժեքավոր են Ա. Պշտրսկու դիտարկումները: Ուսումնասիրելով Լատինական Ամերիկայում ու Արևելյան Եվրոպայում «ժողովրդավարական տենդի» տարածման պատճառներն ու գործոնները՝ նա պնդում է, որ հատկապես կայուն են այն ժողովրդավարական քաղաքական համակարգերը, որոնք բնականոն ձևով, առանց բռնության ու հարկադրանքի ապահովում են քաղաքական բոլոր ուժերի համաձայնեցված գործունեությունը: Իսկ որպեսզի համաձայնությունը կայանա, ժողովրդավարական համակարգում պետք է ներդրվի սոցիալ-քաղաքական ինստիտուտների այնպիսի ամբողջություն, որտեղ բոլոր քաղաքական ուժերը արդար մրցակցության պայմաններում «ընտրողների ուղեղները նվաճելու» հավասար հնարավորություններ կստանան: Սակայն միաժամանակ նշում է. «Յուրաքանչյուր ավտորիտար կառավարումից ժողովրդավարականին անցնելու առանցքային պահը շեմի հաղթահարումն է, որից հետո ոչ ոք չի կարող միջամտել ու հետ շրջել սահմանված կանոնները պահպանող գործընթացը»: Ըստ քաղաքագետի՝ ժողովրդավարական պետության ճանապարհին ամենավճռորոշ քայլը իշխանության փոխանցումն է մարդկանց խմբից սահմանված կանոններին: Ա. Պշտրսկու մատնանշած «շեմի հաղթահարումն» ու «սահմանված կանոններին» իշխանության փոխանցումը հնարավոր է ժողովրդավարության համախմբման պարագայում, որը շատ հե-

⁸³ Տե՛ս **Գալստյան Խ.**, Քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», Ե., 2016, № 3 (21), էջ 63:

տագոտողներ համարում են ժողովրդավարական անցման վերջնական փուլը⁸⁴:

Թ. Կարլի և Ֆ. Շմիտերի դասակարգումից ելնելով՝ առանձնացրել ենք ժողովրդավարական անցման անորոշությունից դուրս գալու ներքոհիշյալ չորս հնարավոր սցենարները, որոնք կարող են կիրարկվել՝ ելնելով անցման առանցքային դերակատարների ռազմավարությունից և ուժերի հարաբերակցությունից.

1. «Բոլորի պատերազմ բոլորի դեմ», երբ անցման դերակատարներից մեկը չունի հստակ հակակշիռ, ապա ուժային ռազմավարությունն ընդունակ է առաջացնել քաղաքացիական պատերազմ:

2. «Հաղթողը ստանում է ամեն ինչ» սկզբունքով, երբ բախումը թույլ է տալիս դերակատարներից մեկին մրցակիցների նկատմամբ հասնել լիակատար գերազանցության և դառնալ իրադրության լիիրավ տերը:

3. «Ընտրանիների միություն», երբ դերակատարներից մեկի գերակայության դեպքում անորոշությունից դուրս գալու ելք կարող է դառնալ քաղաքական գործընթացի մասնակիցների բացահայտ կամ ոչ բացահայտ (լատենտ) համաձայնությունը՝ խաղի ընդհանուր կանոնների և նորմերի վերաբերյալ:

4. «Կանոններով պատերազմ», որի դեպքում քաղաքական պայքարն ու մրցակցությունը «բոլորի պատերազմը բոլորի դեմ» իրավիճակից փոխվում են, և անցման դերակատարները ուժային բախման ժամանակ պարտություն կրելու անորոշ հարաբերակ-

⁸⁴ **Пшеворски А.**, Демократия и рынок. Политические и экономические реформы в Восточной Европе и Латинской Америке, РОССПЭН, М., 2000, (հղումը տե՛ս **Գալստյան Խ.**, Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը ժողովրդավարության անցման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Ե., 2016, № 1 (19), էջ 32-33):

ցության դեպքում կարող են որպես պայքարի միջոց օգտագործել ժողովրդավարական և իրավական ինստիտուտները⁸⁵:

Հետևաբար նշենք, որ Ռ. Դալը ժողովրդավարության («պոլիարխիայի») կայացման համար առանձնացնում է ներքոհիշյալ նախապայմանները.

1. Կառավարության որոշումների նկատմամբ վերահսկողությունը սահմանադրությունը դնում է ընտրովի պաշտոններ զբաղեցնող անձանց վրա:

2. Այդ պաշտոնատար անձինք պարբերաբար ընտրվում են ազատ, արդար, մրցակցային ընտրություններում՝ զերծ ամեն տեսակ անօրինությունից և բռնության կիրառումից:

3. Ակտիվ ընտրական իրավունքից կարող է օգտվել չափահաս յուրաքանչյուր ոք, ում նկատմամբ օրենքով սահմանափակումներ չկան:

4. Պասիվ ընտրական իրավունքի չափանիշներին համապատասխանող յուրաքանչյուր ոք, ում նկատմամբ օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ չկան, կարող է հավակնել ընտրովի պաշտոնների:

5. Քաղաքացիներն իրենց տեսակետները ազատորեն արտահայտելու իրավունք ունեն՝ չվախենալով դրանց համար հալածանքների ենթարկվելուց:

6. Յուրաքանչյուր ոք այլընտրանքային տեղեկատվություն ստանալու, տարածելու իրավունք ունի, որը պետք է պաշտպանված լինի օրենքով:

7. Քաղաքացիներն իրավունք ունեն ստեղծելու կամ անդամակցելու տարբեր հասարակական-քաղաքական միավորումներ:

⁸⁵ Տե՛ս **Карл Т., Шмиттер Ф.**, Демократизация: концепты, постулаты, гипотезы, (Размышления по поводу применимости транзитологической парадигмы при изучении посткоммунистических трансформаций), Полис, 2004, № 4, էջ 13:

րի, կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և միևնույն շահեր ունեցող խմբերի⁸⁶:

Ժողովրդավարական համախմբման տեսությունը⁸⁷ ստեղծվել և մշակվել է Դ. Ռոստոուի⁸⁸, Գ. Օ'Ռոնելի, Ֆ. Շմիտերի⁸⁹, Լ. Ուայթհեդի, Ս. Հանթինգթոնի⁹⁰, Տ. Կարլի⁹¹, Ա. Պշևորսկու⁹², Գ. Սորենսենի⁹³, Խ. Լինցի, Ա. Ստեֆանի⁹⁴ և ուրիշների աշխատանքներում:

Այսպես, ժողովրդավարական համախմբման հետազոտողներին կարելի է բաժանել երկու խմբի: Մի խումբը մտահոգված է ժողովրդավարության կայունությամբ և փորձում է խուսափել դե-

⁸⁶ Տե՛ս **Даль Р.**, Демократия и ее критики, М., «Российская политическая энциклопедия» (РОССПЭН), 2003, էջ 358:

⁸⁷ «Ժողովրդավարության համախմբում» հասկացությունը՝ որպես կատեգորիալ գիտաբան, 1986 թ. քննարկել են Գ. Օ'Ռոնելը և Ֆ. Շմիտերը իրենց «Անցումը վարչահրամայական կառավարումից» աշխատության մեջ, որտեղ առավելագույնս ներկայացված է անցումնագիտական մոտեցումը: Նրանք նշել են, որ անցումը տեղի է ունենում որոշակի վարչահրամայական կարգից դեպի անորոշ «ինչ-որ բանի»: Այն կարող է կապված լինել ինչպես ժողովրդավարության հաստատման, այնպես էլ նոր և, հնարավոր է, առավել կոշտ վարչահրամայական կառավարման ձևի վերականգնման հետ: Չնայած կերպափոխման այդքան անորոշ հետևանքների մասին պատկերացմանը՝ Գ. Օ'Ռոնելը և Ֆ. Շմիտերն առաջին հերթին կարևորել են ժողովրդավարական անցման հեռանկարը (Տե՛ս **O'Donnell G., Schmitter Ph.**, Transitions from authoritarian rule: Tentative conclusions about uncertain democracies, John Hopkins University Press, 1986, էջ 11):

⁸⁸ Տե՛ս **Растой Д.**, Переходы к демократии: попытка динамической модели, Полис, 1996, № 5:

⁸⁹ Տե՛ս **O'Donnell G., Schmitter Ph.**, նշվ. աշխ.:

⁹⁰ Տե՛ս **Хантингтон С.**, նշվ. աշխ.:

⁹¹ Տե՛ս **Карл Т., Шмиттер Ф.**, Демократизация: концепты, постулаты, гипотезы, (Размышления по поводу применимости транзитологической парадигмы при изучении посткоммунистических трансформаций), Полис, 2004, № 4:

⁹² Տե՛ս **Пшеворский А.**, նշվ. աշխ.:

⁹³ Տե՛ս **Sorensen G.**, Democracy and Democratization: Processes and prospects in a changing world, San Francisco, Oxford: Westview Press, 1993.

⁹⁴ Տե՛ս **Linz J., Stepan A.**, Problems of democratic transitions and consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, Johns Hopkins University Press, 1996:

այի ոչ ժողովրդավարական ռեժիմ վերադարձից («նեգատիվ» ընկալում), իսկ մյուսը համախմբումը համարում է ազատական կամ առաջադեմ ժողովրդավարություն և հակված է ժողովրդավարական համախմբման «դրական» ձևակերպմանը («պոզիտիվ» ընկալում): Ֆ. Շմիտերը կարծում է, որ փոխակերպման ամբողջական ցիկլի ոչ արդյունավետ իրականացման հետևանքով կարող են առաջանալ «հիբրիդային վարչակարգեր», որոնց բնորոշ են վարչահրամայական և ժողովրդավարական կարգերի մի շարք հատկանիշներ: Առավել հավանական է, որ այդպիսի կարգեր հաստատվեին հետկոմունիստական երկրներում, որոնք վերջնականապես չեն կարողացել ազատվել սոցիալիստական ժառանգությունից⁹⁵: Ըստ Ֆ. Շմիտերի՝ ո՛չ տնտեսական զարգացման մակարդակը, ո՛չ էլ բուրժուազիայի գերիշխանությունը չեն կարող ինքնաբերաբար երաշխավորել ժողովրդավարության առաջացումն ու ամրապնդումը: Այդ վարչակարգը նաև քաղաքակրթության, գրագիտության, կրթական հաջողությունների կամ քաղաքական առանձնահատուկ մշակույթի՝ նվաճված նախորդ մակարդակի ակնհայտ արդյունքը չէ: Սա չի բացառում այն փաստը, որ բարեկեցությունը, հարստության հարաբերականորեն հավասար բաշխումը, միջազգային շուկայում մրցունակ տնտեսությունը, կրթված բնակչությունը, միջին մեծ խավը, ինչպես նաև բազմազանությունն ընդունելու, մրցակցին վստահելու և բախումները փոխզիջմամբ լուծելու պատրաստակամությունն առավելություններ են: Սա նշանակում է, որ ժողովրդավարությունը դեռևս պետք է ընտրվի, մարմնավորվի ու հավերժացվի «գործակալների»՝ իրատես ապրող քաղաքական դերակատարներ-

⁹⁵ Տե՛ս *Карл Т.Л., Шмиттер Ф.*, նշվ. աշխ., էջ 8:

րի կողմից՝ իրենց հատուկ շահերով, հիշողությամբ ու խիզախությամբ⁹⁶:

Համաձայն Ֆ. Շմիտերի և Տ. Կարլի՝ ժամանակակից քաղաքական ժողովրդավարությունը կառավարման այնպիսի ձև է, երբ իշխանությունը պատասխանատու է քաղաքացիների առաջ իր գործողությունների համար, իսկ քաղաքացիներն իրացնում են իրենց շահերն իրենց իսկ ընտրած ներկայացուցիչների միջոցով՝ վերջիններիս մրցակցության և համագործակցության պայմաններում⁹⁷: Այդ համատեքստում ժողովրդավարության համախմբման գործընթացը ներառում է չորս ուղղություն.

1) արագ սահմանափակել, նվազագույնի հասցնել կամ կապակցել գաղափարական ու ինստիտուցիոնալ անհամապատասխանությունները,

2) հաստատել իր ինքնավարությունը հին իշխանությունների, հատկապես զինված ուժերի վրա,

3) համախմբել քաղաքացիական հասարակությունը իր դրսևորման ձևերով,

4) զարգացնել ժողովրդի առջև պատասխանատու, կառավարություն կազմելու ընդունակ, հարաբերականորեն կայուն կուսակցական համակարգ⁹⁸:

Մեր կարծիքով, թեև համախմբման այս ուղղությունները ժողովրդավարացման երրորդ պլիքին հատուկ որոշ ընդհանրություններ ունեն, սակայն դրանք աշխարհում, հատկապես՝ հետկոմունիստական տարածքում, լրացման կարիք ունեն, քանի որ

⁹⁶ Տե՛ս **Шмиттер Ф.**, նշվ. աշխ., <http://www.politnauka.org/library/dem/schmitter.php> հասանելի էր՝ 12.02.2018:

⁹⁷ Տե՛ս **Карл Т.Л., Шмиттер Ф.**, Что есть демократия? <http://www.politnauka.org/library/dem/karl-shmitter.php>, հասանելի էր՝ 10.02.2018:

⁹⁸ Տե՛ս **O'Donnell G., Schmitter Ph., and Whitehead L.** (eds.), Transitions from Authoritarian Rule: Prospects for Democracy, 1986, էջ 89:

այս մոտեցման մեջ հստակ մոդելավորված չեն ժողովրդավարական հետագա շարժումները:

Ուսումնասիրելով 1950-60-ական թթ. Աֆրիկայում և Լատինական Ամերիկայում ընթացող ժողովրդավարության անցման փորձը՝ անցումագետները ստիպված էին խոստովանել, որ այդ երկրները թևակոխել են համախմբման փուլ, որն արտացոլում է նոր ժողովրդավարական վարչակարգերի կայացման գործընթացների անարդյունավետությունը, ուստի անհրաժեշտ է ժողովրդավարական արժեքների ամրապնդման տեսական նոր դրույթներ մշակել: Դրա հետ մեկտեղ՝ տեղի է ունեցել ակնհայտորեն արտահայտված մեթոդաբանական շրջադարձ, որը կապված է 1960-80-ական թթ. ժողովրդավարության անցման պայմանների քննադատության հետ: Հարկ է նկատել, որ ընդհանուր քննադատական տրամադրվածության հետ մեկտեղ՝ քաղաքագետներն ընդունում են նախորդ մոտեցումների ներդրումը ժողովրդավարացման անհրաժեշտ գործոնները բացատրելու հարցում, բայց կարծում են, որ դա բավարար չէ. պետք է որոշել ոչ միայն անհրաժեշտ, այլև բավարար գործոնները, և ոչ միայն ազատականացման տեսքով ժողովրդավարության անցման, այլև ժողովրդավարական համախմբման կայացման համար⁹⁹:

Ս. Հանթինգթոնը, մեկնաբանելով ժողովրդավարական համախմբման (կոնսոլիդացիայի) սահմանումը՝ հիմնված էմպիրիկ տվյալների վրա, մասնակցությունը համարել է առանցքային տարր, ըստ այդմ՝ առանձնացնվում են ներքոհիշյալ չորս սուպեկտները. համընդհանուր ընտրական իրավունք, ազատ, արդար, մրցակցային ընտրություններ, քաղաքական կուսակցու-

⁹⁹ Տե՛ս **Schmitter Ph.**, Interest systems and the consolidation of democracies: Reexamining democracy, essays in honor of Seymour Martin Lipset / Ed. by L. Diamond, Newbury Park, London, 1992, էջ 158-159:

թյունների բազմակարծություն, այլընտրանքային տեղեկատվության հասանելիություն¹⁰⁰:

Հատկանշական է, որ «Երրորդ ալիք» գրքում Ս. Հանթինգթոնը առանձին գլուխ է նվիրում արդեն ձևավորված ժողովրդավարական վարչակարգի ամրապնդման խնդիրներին և ժողովրդավարական համախմբմանը, որին նպաստող գործոններից նա նշում է.

ա) երկրի պատմության մեջ ժողովրդավարական զարգացման (հատկապես երկարատև) փորձի առկայությունը,

բ) տնտեսական զարգացման, արդյունաբերացման ու կրթության համեմատաբար բարձր ցուցանիշները,

գ) միջազգային կապերն ու արտասահմանյան օգնությունը,

դ) ժողովրդավարական անցումն իրականացնելու, ժողովրդավարացման երրորդ ալիքում տվյալ երկրի գտնվելու տևողությունը,

ե) վարչահրամայական կարգից ժողովրդավարականին խաղաղ, փոխհամաձայնեցված անցումը,

զ) քաղաքական ընտրանու և բնակչության հանդուրժողական վերաբերմունքը ժողովրդավարական հասարակությունում առաջացած հիմնախնդիրները լուծելու նկատմամբ¹⁰¹:

Յուրաքանչյուր պետությունում ժողովրդավարացման ալիքները օժտված են եղել անցման գործընթացը իրականացնելու և ավարտին հասցնելու իրենց հատկանիշներով: Համախմբված ժողովրդավարությանը բնորոշ հատկանիշներից են՝ վարչակարգի գանգվածային լեգիտիմացում, ժողովրդավարական արժեքների

¹⁰⁰ Տե՛ս **Huntington S.**, by **Handayani M.**, On political participation and democracy, Department of Political Science Kulliyah of Islamic Revealed Knowledge and Human Science International University Malaysia, Semester 3, 2008-2009., էջ 8, <https://ru.scribd.com/doc/21326185/Samuel-P-Huntington-on-political-participation-and-democracy> հասանելի էր՝ 13.09.18:

¹⁰¹ Տե՛ս **ХАНТИНГТОН С.**, նշվ. աշխ., էջ 48-49:

տարածում, հակահամակարգային գործակալների չեզոքացում, քաղաքական համակարգի՝ զինված ուժերի նկատմամբ վերահսկողության ապահովում, կուսակցական համակարգի կայացում, պետական իշխանության ապակենտրոնացում, դատական համակարգի բարեփոխում, տնտեսության կայունացում և այլն¹⁰²:

Ըստ Լ. Դայմոնդի՝ լեգիտիմությունը համախմբման այնպիսի կարևոր հատկանիշ է, որի դեպքում բոլոր քաղաքական դերակատարները ինչպես ընտրանու, այնպես էլ զանգվածների մակարդակով հավատում են, որ իրենց հասարակության համար ժողովրդավարական վարչակարգը ավելի լավն է, քան ցանկացած այլ իրատեսական այլընտրանք, որն իրենք կարող են երևակայել¹⁰³:

Ճիշտ են Ջ. Լինցը և Ա. Ստեֆանը, որ լեգիտիմությունը ենթադրում են ոչ միայն համակարգի նկատմամբ ինչ-որ մի վերացական վստահություն, այլև որոշակի նորմատիվային պարտավորությունների ու վարքաբանական կառույցների ներառում:

Համաձայն Ջ. Լինցի և Ս. Լիպսեթի՝ լեգիտիմություն նշանակում է համակարգի ունակություն ստեղծել և մարդկանց մեջ պահպանել համոզմունք այն մասին, որ, չնայած բոլոր թերություններին ու վրիպումներին, հասարակության համար գոյություն ունեցող ինստիտուտները հնարավորներից լավագույններն են¹⁰⁴: Հարկ է նշել, որ լեգիտիմությունն արտահայտում է մարդկանց որոշակի աստիճանի վստահությունը իշխանության, նրա գործունեության արդարության, օրինականության նկատմամբ, հավատ, որ նա չի անցնի օրենքի սահմանը և չի ոտնահարի

¹⁰² Տե՛ս **Մարգարով Ա.**, Ժողովրդավարություն և ժողովրդավարացում, «Քաղաքագիտություն» ուս. ձեռնարկ, ԵՊՀ, 2006, էջ 402:

¹⁰³ Տե՛ս **Даймонд Л.**, նշվ. աշխ., էջ 11:

¹⁰⁴ Տե՛ս **Доган М.**, Легитимность режимов и кризис доверия, «Социологические исследования», 1994, № 6, էջ 147, http://ecsocman.hse.ru/data/321/468/1217/018_dogman.pdf, հասանելի էր՝ 14.02.2019:

մարդկանց ազատությունը: Հատկանշական է, որ այս գործընթացում նաև որոշիչ հատկանիշ է քաղաքական մշակույթի կերպավորությունը, որն արտահայտվում է վարքաբանական կառույցներում և ենթադրում է անցում ժողովրդավարության «գործիքային» դրույթներից «սկզբունքայիններին», այսինքն՝ ընդլայնվում է քաղաքական մրցակիցների վստահության և համագործակցության շրջանակը, և ամբողջությամբ իրականանում է համապատասխան սոցիալականացումը՝ որպես ինչպես նպատակային ջանքի արդյունք, այնպես էլ ժողովրդավարական գործելակերպի արգասիք քաղաքականության և քաղաքացիական հասարակության մեջ¹⁰⁵:

Նշենք, որ Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայի, ինչպես նաև Լատինական Ամերիկայի երկրների անցումնաբանական գործընթացներին նվիրված աշխատանքներում Ջ. Լինցը և Ա. Ստեֆանն առաջարկում են ժողովրդավարական համախմբման հանրահայտ հարացույցը, համաձայն որի՝ «համախմբված ժողովրդավարություն» ասելով՝ պետք է հասկանալ քաղաքական այնպիսի վարչակարգ, որում ժողովրդավարությունը՝ որպես ինստիտուտների, կանոնների և կառուցվածքային մղումների բարդ համակարգ, դառնում է «խաղի միակ կանոնը»¹⁰⁶: Ժողովրդավարությանն անցնելու գործընթացի և դրա համախմբման միջև տարբերությունը հանգեցնում է անխուսափելի և բավարար պայմաններ սահմանելու անհրաժեշտության, որոնց առկայության դեպքում կարող է վերջինս սկսվել:

Ի հավելումն դրան՝ Ջ. Լինցն ու Ա. Ստեֆանը երեք այդպիսի պայմաններ են նշում.

¹⁰⁵ Տե՛ս *Даймонд Л.*, նշվ. աշխ., էջ 11:

¹⁰⁶ Տե՛ս *Linzi J., Stepan A.*, Toward consolidated democracies, Journal of Democracy 7(2) (April), 1996, էջ 2, <http://adpm.pbworks.com/f/Democratic+Consolidation-Linz+and+Stepan-1996.pdf>, հասանելի էր 18.09.18:

1. Հասարակության արդիական կազմակերպման պայմաններում ազատ և ընդունված ընտրությունները չեն կարող իրականացվել. հաղթողները չեն կարող լեգիտիմ իշխանություն ձևավորել և իրականացնել, իսկ քաղաքացիները՝ արդյունավետ իրականացնել օրենքի գերիշխանությամբ պաշտպանված իրենց իրավունքները, եթե պետություն գոյություն չունի:

2. Ժողովրդավարությունը չի կարող համախմբված դառնալ, եթե ժողովրդավարական անցումն ավարտված չէ: Այն համարվում է ավարտված, երբ իշխանության բոլոր ճյուղերի (օրենսդիր, գործադիր և դատական) գործունեությունը մեծապես ազատ է զինվորական, կրոնական կառույցներից և վարչափրամայական այլ կարգերից:

3. Ոչ մի վարչակարգ չի կարող ժողովրդավարական կոչվել, քանի դեռ նրա կառավարողները ժողովրդավարական վարչաձևի տարրերին համապատասխան չեն կառավարում, այսինքն՝ գործադիր իշխանությունը չի անտեսում սահմանադրությունը, անձի և փոքրամասնությունների իրավունքները չեն ճնշվում, օրենսդիր իշխանության գործերին այն չի միջամտում և այլն¹⁰⁷:

Այսպիսով, ժողովրդավարական համախմբումը ժամանակակից հասարակարգի զարգացման նախապայմանն է, որի միջոցով հասարակարգը ժողովրդավարական անցումից թևակոխում է արդիականացման փուլ: Ժողովրդավարության անցումից համախմբում իրականացնելիս ոչ միայն կարևոր է, այլև պարտադիր որոշակի նորմեր սահմանելու, ինչպես նաև պայմաններ ներդնելու անհրաժեշտությունը, որոնց առկայության դեպքում միայն կարող է վերջինս սկսվել: Ժողովրդավարական համախմբում իրականացնելու համար ոչ միայն անհրաժեշտ է ընդու-

¹⁰⁷ Տե՛ս **Linz J., Stepan A.**, նշվ. աշխ., էջ 1, <http://adpm.pbworks.com/f/Democratic+Consolidation-Linz+and+Stepan-1996.pdf>, հասանելի էր՝ 18.09.18:

նել և ներդնել նախորդ մոտեցումներն ու արժեքները ժողովրդավարացման անհրաժեշտ գործոնները կայացնելու հարցում, կարծում ենք, որ դա բավարար չէ, այլս պետք է ներդնել անհրաժեշտ նոր գործոններ և ինստիտուտներ, որոնք կնպաստեն ժողովրդավարության անցումից ժողովրդավարական համախմբումը իրականացնելուն: Ժողովրդավարական հասարակարգը իր ներկայացուցչական բնույթով ապահովում է քաղաքակիրթ հասարակության մեջ մրցակցությունն ու համագործակցությունը, որոնց առկայության և գործարկելիության պայմաններում հնարավոր կլինի հասարակության մեջ կայուն զարգացում ապահովել, բարձրացնելով քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում՝ ձևավորել և ամրապնդել քաղաքական մշակույթի կառուցակարգերը: Այս առումով ընտրական իրավունքի սկզբունքներն անխախտ կիրառործվեն, և երկրում տեղի կունենա կառավարող ընտրանու հաջորդական հերթափոխությունը, որի շնորհիվ համակարգը կհամալրվի մասնագիտական մեծ ներուժ և մտավոր բարձր կարողություններ ունեցող անհատներով, որոնք կպահպանեն սահմանադրական կարգը և օրենքի գերակայության սկզբունքը, կհարգեն անձի և ազգային փոքրամասնությունների իրավունքները: Միայն համախմբվածության և կազմակերպվածության միջոցով կարող ենք հասնել իշխանության լեգիտիմացման և հասարակության մեջ տարածել այն համոզմունքը, որ գոյություն ունեցող քաղաքական ինստիտուտները հնարավորներից լավագույնն են:

1.4. Քաղաքական իշխանության լեգիտիմության հիմնահարցը մասնակցության ինստիտուցիոնալացման պայմաններում

Արդի քաղաքական գիտության համար օրակարգային հարց է իշխանության լեգիտիմության հիմնահարցի օրինաչափության բացահայտումը: Այս առումով քաղաքական լեգիտիմության հիմնախնդիրը հանդիսանում է ժողովրդաիշխանության դրսևորման ուղենիշ: Լեգիտիմությունը ներկայացվում է որպես հավատի դրսևորում, որն ուղղված է իշխանությանը: Վերոհիշյալը բխում է քաղաքացիների այն համոզմունքից, որ քաղաքական ինստիտուտների գործունեությունը արդարացված է, և պետական պաշտոնատար անձինք իրենց գործողություններով հաշվետու են ժողովրդի առաջ, իսկ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն էլ դառնում է պետության քաղաքացին: Հետևաբար, ժամանակակից քաղաքական իրողություններով պայմանավորված՝ մասնակցային գործընթացի տարբեր ձևերի տարածումը արդիականացնում է լեգիտիմության հիմնախնդրի ուսումնասիրության ինչպես գիտական, այնպես էլ մեթոդաբանական ասպեկտները:

Իշխանության լեգիտիմության հիմնահարցը՝ որպես պետական արդյունավետ կառավարում իրականացնելու առանցքային գործոն, հանդես է գալիս քաղաքականության սուբյեկտների վարքագծի բնորոշմամբ, որն ազդում է հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում վերջինիս վստահության և հավատի նորմերի վրա: Ըստ այսմ, որպեսզի հասարակության մեջ ապակայունացման գործողությունները չխորանան, և ժողովուրդը չկորցնի վստահությունը պետության վարած քաղաքականության հանդեպ, ապա վերջինիս գործունեությունը պետք է միտված լինի հանրային շահի գերակայության սկզբունքի ապա-

հովմանը: Այս ամենը կարևոր է իշխանության լեգիտիմության ապահովման և պահպանման համար, ուստի ներկայումս իշխանության ձեռքում կենտրոնացված ռեսուրսները ավելի են նվազում կապված գլոբալիզացիայի համատեքստում ապակենտրոնացման միաժամանակյա գործընթացի հետ, ինչի արդյունքում մի շարք ոլորտների վրա իշխանության կողմից ուղղակիորեն ազդեցությունը նվազել է: Այս առումով, հետզհետե սկսեցին ավելի ակտիվ ուղղվածություն ստանալ քաղաքացիական հասարակության ինստիտուտներից մասնավորապես հասարակական կազմակերպությունները: Վերջիններս հանդես են գալիս միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների շրջանակներում, որոնց մեջ գործունեություն ծավալող քաղաքացիներն էլ հիմնականում իրականացնում են բողոքական գործունեություն: Եթե քաղաքական մասնակցությունը դիտարկում ենք որպես քաղաքացիների մասնակցությունը հասարակության քաղաքական կյանքին, ներգրավվածությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացներին, ապա, հակառակ վերջինիս, քաղաքացիական մասնակցությունը կարելի է ներկայացնել որպես քաղաքական մասնակցության՝ իշխանական գործողությունները զսպող մեխանիզմ, որը դրսևորվում է ինչպես ընդդիմադիր գործողություններով, այնպես էլ բողոքի զանազան ակցիաներով¹⁰⁸:

Քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը ժողովրդավարության և կայուն քաղաքացիական հասարակության կայացման հիմնական սկզբունքներից մեկն է: Քաղաքական մասնակցության բնույթի և ուղղվածության վրա էական ազդեցություն ունի հասարակության քաղաքական մշակույթի մակարդակը, որն արտացոլվում է ժողովրդավարական

¹⁰⁸ Տե՛ս **Ekman J., Amna E.**, “Political participation and civic engagement: Towards a new typology”, *Human Affairs* 22 (3), January 2009, էջ 294-298, <https://doi.org/10.2478/s13374-012-0024-1>:

արժեքների և ինստիտուտների ընդունման ու ընկալման մեջ: Վերոհիշյալից կարող ենք ենթադրել, որ հասարակական գիտակցության մեջ որքան բարձր են ժողովրդավարական արժեքները, այնքան բարձր է քաղաքական մասնակցության աստիճանը: Եվ հակառակը, որքան ցածր է ժողովրդավարական իրավունքների և ազատությունների նշանակության աստիճանը, այնքան բնակչության զգալի մասի շրջանում նկատվում է հակակրանք և օտարում քաղաքական կյանքից¹⁰⁹: Ներկայումս հետինդուստրիալ հասարակություններում քաղաքական ակտիվությունը հիմնականում դրսևորվում է սոցիալական շարժումների, համացանց-ակտիվության և անդրազգային քաղաքական ցանցերի միջոցով: Այս փոփոխությունը կարևոր հետևանքներ ունի քաղաքական ակտիվության չափման միտումների հարցում: Ըստ այսմ՝ քաղաքական մասնակցության ավանդական գործողություններից են, ինչպես, օրինակ, կուսակցական անդամությունը, քաղաքացիների մասնակցությունը ընտրություններին, իսկ ինչ վերաբերում է քաղաքացիական ակտիվությանը, ապա այն դրսևորվում է միաժամանակ այլընտրանքային շարժումների վերափոխմամբ, որոնք հանդես են գալիս աջակցության ոչ ֆորմալ ձևերով: Հարկ է նշել, որ քաղաքացիական գործունեությունը չպետք է անկում ապրի հասարակության մեջ, քանի որ քաղաքացիներն են համարվում իշխանությանը զսպող մեխանիզմ: Հատկապես, եթե կառավարությունը իշխանության է եկել հասարակության շնորհիվ լեգիտիմ ճանապարհով, ապա վերջինս պետք է հստակ գիտակցի, որ ունի պարտավորություններ, որոնք պետք է իրականացվեն քաղաքական մասնակցության տարրերի ակնհայտ դրսևորման միջոցով: Ընդ որում, քաղաքական մասնակցությունը

¹⁰⁹ Տե՛ս **Սարգսյան Ա.**, «Ընտրական գործընթացին ներգրավվումը որպես քաղաքական մասնակցության տարատեսակ (ՀՀ օրինակով)», Լրատու, Մեսրոպ Մաշտոց համալսարան, 2018թ., ISSN 1829-4227, էջ 243:

պետք է արտահայտվի ոչ միայն կոնվենցիոնալ տարրերի միջոցով, այլև, եթե հարկ լինի, նաև մասնակցության ոչ կոնվենցիոնալ ձևերով:

Այսպես, քաղաքական մասնակցությունը պետք է ավելի լայն տեսանկյունից դիտարկել, այսինքն՝ կառավարության ձևավորման կոնվենցիոնալ գործընթացից (քաղաքական կուսակցություններին անդամակցություն և ակտիվ ներգրավվածություն, քարոզչություն, քվեարկություն, տեղեկատվության հասանելիություն, քննարկումներ և բանավեճեր, հավաքների մասնակցություն, ֆինանսական օժանդակություն և քաղաքական ներկայացուցիչների հետ հաղորդակցում) մինչև իսկ ոչ կոնվենցիոնալ տեսակների ամբողջությունը (քաղաքացիական շարժումներ և նախաձեռնություններ, հանրահավաքներ, երթեր, ցույցեր և գործադուլներ, ինքնաբուխ հավաքների կազմակերպում, հանրագիր (պետիցիա) ստորագրելու իրավունք և այլն): Ըստ այսմ՝ հասարակության արդիականացման գործընթացը նպաստել է հասարակական-քաղաքական կյանքում մասնակցության որոշ ձևերի ի հայտ գալուն և զարգացմանը, որոնք ներկայումս հասարակական-քաղաքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված գործողություններում ավելի շատ են տարածված¹¹⁰:

Նշենք, որ իշխանության լեգիտիմության էության մեջ որոշիչը քաղաքական գերիշխանության արժեհամակարգային բովանդակությունն է, որը պետական համակարգում արտացոլում է տարբեր տիպերի ընտրանիների վերաբերմունքը մեկը մյուսի նկատմամբ: Հարկադրանքի վրա կառուցված ոչ ժողովրդավարական ռեժիմների պայմաններում լեգիտիմության խնդիրը կարևոր չէ: Սակայն դեռ հին ժամանակներից սկսած՝ փիլիսոփաները

¹¹⁰ Տե՛ս **Սարգսյան Ա.**, Քաղաքական մասնակցության արդի մեկնաբանության խնդրի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019 № 2 (29), էջ 62:

հաստատել են, որ նույնիսկ բռնակալները չեն կարող իրենց իշխանությունը անվերջ կառուցել բռնության վրա. եթե իշխանությունը գուրկ է լեզիտիմությունից, այն վաղ թե ուշ դատապարտված է կործանման¹¹¹:

Լեզիտիմության հստակ տիպաբանություն է ներկայացրել գերմանացի սոցիոլոգ Մ. Վեբերը: Իր տիպաբանության մեջ նա առանձնացնում է լեզիտիմության երեք կատեգորիա՝ ավանդական, խարիզմատիկ, լեզալ-ռացիոնալ: Ավանդական լեզիտիմության հիմքը կազմում է խորը հավատը դեպի հին ավանդույթները և դեկավարողների կարգավիճակի լեզիտիմությունը: Խարիզմատիկ լեզիտիմության աֆֆեկտիվ հիմքը անհատի բացառիկության ընդունումն է մարդկանց կողմից, որոշակիորեն նաև հերոսությունը և օրինակելի բնավորությունը: Ենթարկվելով մարդիկ այնքան չեն գնում անձի հետևից, ինչքան՝ վերջինիս խարիզմայի: Այդպիսի իշխանությունը ինչպես ֆանատային է, այնպես էլ իրավիճակային: Այսինքն՝ պայմանավորված հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում տիրող իրավիճակով՝ լիդերը կարող է շատ արագ կորցնել իր ազդեցությունը: Եթե իշխանության կողմից թույլ տրվեն պետական կառավարման այնպիսի սխալներ, որոնք կբերեն ժողովրդի կողմից հավատի նվազեցմանը, ապա վերջինս էլ իր հերթին կբերի իշխանության լեզիտիմության հստակ անկման: Լեզալ-ռացիոնալ լեզիտիմության շրջանակը բնորոշվում է օրինական կերպով հաստատված կանոնակարգով և հանդիսանում պետական ինստիտուտների և կառույցների նկատմամբ ժողովրդի վստահության հետևանք: Նշենք, որ ներկայացված կատեգորիաներից յուրաքանչյուրը, մասնավորա-

¹¹¹ Տե՛ս **Hudson M.**, Arab politics, “The Search for legitimacy”, New Haven: Yale University press, 1977, էջ 2:

պէս՝ խարիզմատիկ տեսակը, ունի իր թե՛ դրական, թե՛ բացասական կողմերը¹¹²:

Այսպէս, խարիզմատիկ լեզիտիմությունը կառուցվում է իշխանության անհատականացման ֆենոմենի սահմանման վրա, որը երբեմն կարող է ձեռք բերել իր արտահայտության ծայրահեղ ձևերը, ինչպիսիք են՝ անձի պաշտամունքը կամ քաղաքական երկրպագությունը: Որոշ հետազոտողներ այս երևույթին տալիս են «քաղաքական կրոն» եզրույթը: Հարկ է նշել, որ անձի պաշտամունքը, առաջնորդի մեծարումը վերջիվերջո կարող են բերել բռնապետության ռեժիմի հաստատմանը: Սրա վառ օրինակներ են Ա. Հիտլերը, Ի. Ստալինը և այլք, որոնք, լինելով խարիզմատիկ լիդերներ և օգտվելով հասարակության շրջանակներում անձի պաշտամունքից, կարողացան բռնապետական ռեժիմ հաստատել: Պատմության մեջ կարող ենք ներկայացնել սահմանափակ թվով անձանց, որոնք խարիզմատիկ իշխանության կրողներ են եղել, որոնց մեջ գերակա տեղ ունի Մ. Գանդին, Ա. Խոմենեին և այլք¹¹³:

Չկա աշխարհում մի երկիր, որտեղ գոյություն ունեցող իշխանությունը ամբողջությամբ լեզիտիմ լինի բնակչության համար: Երբեք լեզիտիմությունը չի կարող հասնել միահամուռ ճանաչման, քանի որ տարբեր խմբեր ու անհատներ հավասարապէս չեն ճանաչում քաղաքական իշխանության հեղինակությունը:

Լեզիտիմության տեսության համար կարևոր եզրահանգումը հիմնվում է այն փաստի վրա, որ տեսականորեն որքան ցածր է լեզիտիմության մակարդակը, այնքան ուժեղ է հարկադրանքը: Լեզիտիմության ճգնաժամի հիմնապատճառները մատնանշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հարկադրանքի աստիճանի որոշ ցուցանիշներ, ինչպիսիք են քաղաքական իրավունքների և

¹¹² Տե՛ս **Доган М.**, “Легитимность режимов и кризис доверия”, 1994, էջ 147-149:

¹¹³ Տե՛ս **Доган М.**, նշվ. աշխ., էջ 148-149:

ազատությունների սահմանափակումը, ինչպես ելույթների, միավորումների կամ ցույցերի ազատության, կրոնական և իրավական ինստիտուտների ազատության սահմանափակումը, այնպես էլ ռազմական ուժի միջամտությունը քաղաքական գործերին և այլն:

Հարկ է նշել, որ ժողովրդավարական հասարակարգի կազմավորումն ու կայացումը պետք է մղի լուրջ ծրագրերի ու քայլերի՝ ձևավորելու դրական ընկալում ժողովրդավարական քաղաքական հասարակության այն հիմնական ինստիտուտների մասին, ինչպիսիք են՝ քաղաքական կուսակցությունները, ընտրությունները, քաղաքական ղեկավարությունը, միջկուսակցական դաշինքներն ու օրենսդիր մարմինները, որոնց միջոցով հասարակությունը քաղաքականապես ինքնակազմակերպվում է լեգիտիմ կառավարություն ընտրելու և վերջինիս վերահսկելու համար: Ժամանակակից ժողովրդավարության տեսության, հատկապես ժողովրդավարության կայացմանը վերաբերող հարցերի համատեքստում կարևոր է շեշտել ոչ միայն քաղաքացիական և քաղաքական հասարակության տարբերակվածությունը, այլև դրանց փոխլրացնելիությունը: Կայուն քաղաքացիական հասարակությունը, որն ունի քաղաքական այլընտրանքներ առաջացնելու և կառավարությանը վերահսկելու կարողություն, կարող է օժանդակել անցումային վարչակարգերին դիմակայել իրադարձությունների հակառակ ընթացքին, ինչպես նաև արագացնել և ավարտին հասցնել անցումից ժողովրդավարականի գործընթացը¹¹⁴:

Ի հավելումն վերոհիշյալի՝ կարող ենք նշել, որ սահմանադրությամբ, օրենքներով և իրավական այլ ակտերով ամրագրված

¹¹⁴ Տե՛ս **Linz J., Stepan A.**, Toward consolidated democracies, *Journal of Democracy* 7(2) (April), 1996, էջ 5, <http://adpm.pbworks.com/f/Democratic+Consolidation-Linz+and+Stepan-1996.pdf>, հասանելի էր 18.09.18:

նորմերը և ընթացակարգերը կարգավորում են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթները՝ նպաստելով ժողովրդավարական լեգիտիմության ամրապնդմանը, հանրային իշխանության քաղաքացիավարական ընթացակարգերի ձևավորմանը: Այդ հիմնահարցերի համակողմանի քննարկման համար էական նշանակություն ունի սահմանադրաիրավական ժողովրդավարության տեսությունը: Ըստ դրա՝ քաղաքացիակենտրոն (հասարակաբար) կառավարման քաղաքացիավարական վստահությունը և լեգիտիմությունը քաղաքական կապիտալի բաղկացուցիչ տարրեր են: Այս առումով, քաղաքական համակարգի քաղաքացիավարական կայունությունը կախված է դրա լեգիտիմությունից ու արդյունավետությունից: Ըստ ամենայնի, լեգիտիմությունն ու կառավարելու կարողություններն ունեն հավասարազոր նշանակություն, որովհետև լեգիտիմության ճգնաժամն այնպիսի իրավիճակ է, որում քաղաքական ինստիտուտների նկատմամբ անվստահությունը կասկածի տակ է դնում հենց դրանց գոյությունը¹¹⁵: Վերջինիս դրսևորման պատճառ կարող են դառնալ հասարակական հարաբերությունների տարբեր ոլորտներում տարածված կաշառակերությունը, տնտեսական զարգացման ցածր մակարդակը, մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը, քաղաքական կուսակցությունների ու շարժումների արգելումը, իշխանության տապալմանն ուղղված հակասահմանադրական գործողությունները, քրեածին տարրերի ուժեղացումը, միջազգային տարբեր կազմակերպությունների հարցումների ցածր ցուցանիշները, որոնք վկայում են իշխանության նկատմամբ բնակչության անվստահության մասին:

¹¹⁵ Տե՛ս **Aleksanyan A.**, “Trade Unions as an actor of regional citizenship and European social integration of the South Caucasus.” EUCACIS Online Paper 5, 2019, էջ 1-13.

Այս առումով, կարևոր գործոն է նաև պետության կողմից տնտեսական արդյունավետության ապահովումը, որը մեծապես նպաստում է ռեժիմի լեգիտիմության ամրապնդմանը¹¹⁶: Լեգիտիմության և տնտեսական արդյունավետության միջև կապը կարելի է ներկայացնել նաև պատմական օրինակներով: Օրինակ՝ Չիլիում ժողովրդավարության անկումը հիմնականում բացատրվում է տնտեսական ճգնաժամով՝ տարեկան ահռելի չափով գնաճի մակարդակով պայմանավորված: Ուստի լեգիտիմության աստիճանի բարձրացումը կամ նվազումը փոխկապակցված է նաև տնտեսական ոլորտի առաջընթացով կամ անկմամբ¹¹⁷:

Վերոհիշյալից ելնելով՝ եզրակացնենք, որ որևէ իշխանության լեգիտիմության հանգամանքը բնորոշելիս ոչ միայն պետք է հաշվի առնենք այն, որ այդ իշխանությունը լեգիտիմ ճանապարհով է եկել կառավարման, այլև ի նկատի ունենանք, թե արդյոք իշխանության գալուց հետո այն շարունակում է մնալ լեգիտիմ, թե՛ ոչ: Այսինքն՝ իշխանությունը չի կարող լինել լեգիտիմ միայն նրա համար, որ կառավարման է եկել լեգիտիմ հիմքերով: Իսկ լեգիտիմության բարձր մակարդակը ապահովելու համար իշխանությունը պետք է գործի ոչ միայն իրավական ճանապարհներով, այլև, ամենակարևորն է, գործի հնարավորինս համաձայնեցված հասարակության հետ և ի շահ վերջինիս: Նշենք, որ իրավական տեսանկյունից իշխանությունը կարող է հնարավորինս օրինական լինել, սակայն ժողովուրդը կարող է չաջակցել իշխանությանը և հետևաբար չընդունել վերջինիս լեգիտիմությունը:

¹¹⁶ Տե՛ս **Herz J.**, “Legitimacy, can we retrieve it? Comparative Politics 10 (3), 1978, էջ 320, <https://doi.org/10.2307/421707>:

¹¹⁷ Տե՛ս **Valehzuela A.**, The move to a socialist society // The breakdown of democratic regimes. Baltimore: The Johns Hopkins University Press, 1978, էջ 55:

ԳԼՈՒԽ 2
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՄԱԿԱՆ ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ԳՈՐԾՈՆ
ՀՀ-ՈՒՍ

2.1. Ընտրական գործընթացի դրսևորման
առանձնահատկություններն ու ընթացակարգերը ՀՀ-ում

Արդի պայմաններում քաղաքական մասնակցությունը ժողովրդավարական վարչակարգի և քաղաքացիական հասարակության կայացման առանցքային գրավականն է: Քաղաքացիների կամարտահայտման ձևը ժողովրդավարական վարչակարգի գործառնումն է, որի միջոցով տեղի է ունենում քաղաքացիների մասնակցությունը հասարակության քաղաքական կյանքին: Քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին հիմնականում դրսևորվում է ընտրություններին մասնակցությամբ, սակայն ժողովրդավարական վարչակարգերում հանդիսանալով քաղաքական մասնակցության ապահովման գործընթաց՝ այն ամբողջությամբ չի արտահայտում քաղաքացիների մասնակցությունը:

Նշենք, ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, քվեարկությունները քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու միջոց են, բայց հասարակության փոխակերպման արդյունքում հետզհետե ընդլայնվում են նաև ոչ կոնվենցիոնալ մասնակցային գործողությունները, որը հասարակության քաղաքացիական գիտակցության կերպափոխման արդյունք է¹¹⁸: Այսինքն՝ հասարակարգերի արդիականացման փուլում ավանդական մոդելները մեծ նշանակու-

¹¹⁸ Sté u **Siber I.**, Interest in elections and electoral participation, Faculty of Political Science, University of Zegreb, Vol. 41, 2004, № 5, էջ 3:

թյուն են ձեռք բերում քաղաքական մասնակցության նոր ձևեր ներդնելով: Մասնավորապես, քաղաքական մասնակցության ոչ կոնվենցիոնալ տեսակներից լայնորեն տարածված և ներկայումս էլ կիրառելի են քաղաքացիական անհնազանդությունները, բողոքները, հավաքների, ցույցերի կազմակերպումը և կամավոր այլ գործողություններ: Բացի այդ, քաղաքացիները ներգրավվում են նաև սոցիալական, հանրային և այլ խնդիրների լուծմանը միտված տարբեր քաղաքացիական նախաձեռնությունների գործողություններին, որոնք էլ կարող են հետագայում վերածվել քաղաքական նախագծերի¹¹⁹:

Համաշխարհայնացման պայմաններում առանց քաղաքացիների իրենց իրավունքների ընկալման և իրացման հնարավոր չէ պատկերացնել քաղաքացիավարական ժողովրդաիշխանության¹²⁰ կայացումը: Յուրաքանչյուր ոք հասարակական հարաբերությունների ցանկացած ոլորտում պետք է արտահայտի իր համոզմունքները և հանդիսանա դրանք կրողը¹²¹: Գիտակցված մասնակցային գործընթացը քաղաքացիավարական արդի հասարակարգի կայացման ուղենիշն է, երբ հասարակության մեջ առկա խնդիրների լուծման անմիջական հաղորդակիցն է դառնում պետության քաղաքացին, իսկ պետությունն էլ իր գործողություններով հաշվետու է նրանց առաջ¹²²:

Նորանկախ ՀՀ-ում քաղաքական համակարգի փոխակերպման գործընթացը սկիզբ դրեց ժողովրդավարության անցման

¹¹⁹ Տե՛ս **Bergstrom L.**, Political participation: A qualitative study of citizens in Hong Kong, Karlstad University, 2006, էջ 7-8:

¹²⁰ Տե՛ս **Ալեքսանյան Ա.**, Դեմոկրատիայի ցիվիլիարիսիկ չափման մասին // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019, № 2 (29), էջ 52-60:

¹²¹ Տե՛ս **Соколов А.**, Современные институты молодежной политики в Европе: история становления и развития, Вестник международных организаций, 2009, № 1 (23), էջ 84:

¹²² Տե՛ս **Ալեքսանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 52-60:

գործընթացին, որը հանգեցրեց հասարակական-քաղաքական կյանքի արմատական վերափոխմանը: Որդեգրելով ժողովրդավարացման ուղին՝ ՀՀ-ում ներդրվեցին իրավական և սոցիալական պետության կառուցման ընթացակարգերը, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կայացումը: Քաղաքական որոշումների ընդունման գործընթացը պահանջում էր այնպիսի մասնակցային մշակույթի ձևավորում, որը կհամապատասխաներ ժողովրդավարության չափանիշներին և կնպաստեր ժողովրդափախանության իրացմանը:

Ժողովրդավարական քաղաքական կառավարման համակարգի կայացման և քաղաքացիական հասարակության համար առանցքային նշանակություն ունեցող մասնակցային մշակույթի իրագործման համար կարևոր է որոշակի ընթացակարգերի ներդրումը, ինչպես, օրինակ, ժողովրդավարական ընտրությունների կազմակերպումը, լեզիտիմ իշխանության առկայությունը, իշխանություն-ժողովուրդ երկխոսության մշակույթի ամրապնդումը հասարակության մեջ:

Հասարակական-քաղաքական համակարգի մյուս դերակատարների հետ քաղաքացիական հասարակության ինստիտուտների լիակատար փոխգործակցությունն աստիճանաբար հանգեցնում է մասնակցության ինստիտուցիոնալացմանը: Այսինքն՝ ինստիտուտներից յուրաքանչյուրը, համագործակցելով հասարակական համակարգի մյուս տարրերի հետ, ապահովում են քաղաքակիրթ քաղաքացիական հասարակության հատուկ որակներ, որի միջոցով հնարավոր կլինի իրական հիմքերի վրա դնել քաղաքացիական մասնակցության կառուցակարգերը¹²³: Եթե քաղաքական համակարգը ավելի բաց և մրցակցային է, ուստի նրա

¹²³ Տե՛ս **Najam A.**, The four Cs of Government-Third Sector Relations: Cooperation, Confrontation, Complementarity, Cooptation, Sustainable Development Policy Institute (SDPI), Research report series № 25, Pakistan, 2000, էջ 1:

ինստիտուցիոնալ միջավայրն ավելի շատ հնարավորություն է տալիս մասնակցության համար, ավելի հմուտ քաղաքական դերակատարներ են մուտք գործում քաղաքական աստիճանահարթակ և արդյունավետ կառավարում իրականացնում: Նմանատիպ քաղաքական համակարգերի շրջանակներում կառավարությունն արդյունավետ կերպով գործառնում է. մարդկանց շահերն ու պահանջմունքները բավարարվում են, և հանրային ծառայությունների որակը բարձրանում է: Աստիճանաբար անցում է կատարվում ավելի արդյունավետ և անկախ պետական կառավարման՝ իրավասու և փորձառու պետական ծառայողների, վստահելի կառավարության և քաղաքական գործիչների միջոցով¹²⁴: Հետաքրքրական է այն կարևոր դերակատարումը, որ քաղաքական մասնակցությունն իրականացնում է հասարակարգերի վերափոխման գործընթացում: Նույնիսկ սոցիալ-տնտեսական բարդ պայմաններում գտնվող երկրներում կարող է ժողովրդավարական արդյունավետ կառավարում իրականացվել, եթե իրավական բոլոր հնարավորություններն ապահովվում են հանրության մասնակցության համար: Տարբերվող աշխարհաքաղաքական պայմաններ և ազգային առանձնահատկություններ ունեցող հասարակարգերը պետք է ընտրեն այն լուծումներն ու ռազմավարությունները, որոնք համապատասխանում են իրենց քաղաքական մշակույթին: Միայն այդ դեպքում վերջիններս կարող են ձևավորել և կայացնել ժողովրդավարական ինստիտուտները և ամրապնդել մրցունակությունը: Այսպիսով, հասարակության սոցիալականացումը տեղի է ունենում կատարվող փոփոխությունների և ժողովրդավարական ռեժիմների վրա ազդելու հետևանքով¹²⁵: Ըստ

¹²⁴ St' u "Enabling environments for civic engagement in PSRP countries (ARVIN)", Social development notes. № 82, March 2003, էջ 3:

¹²⁵ St' u **Nekola M.**, Political participation and governance effectiveness: Does participation matter?, January 2006, Charles University in Prague, էջ 10:

Գ. Ալմոնդի՝ «քաղաքական սոցիալականացումը ոչ միայն մեզ պատկերացում է տալիս հասարակության մեջ քաղաքական մշակույթի և ենթահամակարգերի կառուցվածքի մասին, այլև բացահայտում է հասարակության սոցիալականացման գործընթացներում այն ուղղությունը, որտեղ որոշակի որակներ և տարրեր են պահպանվում կամ փոփոխվում»¹²⁶:

ՀՀ-ում 2018 թ. ապրիլ-մայիս ամիսներին տեղի ունեցած հավաքներին մասնակցությամբ մեր հասարակությունն արժևորել էր փոփոխությունների հասնելու պայքարի ուղին՝ կազմակերպվածության և միասնականության միջոցով: Իսկ քաղաքակիրթ պետության գոյությունը հետագայում պայմանավորված է սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմամբ, որոնք էլ նվազեցնելու կամ վերացնելու են հասարակության զարգացմանը խոչընդոտող հանգամանքները՝ չհանգեցնելով բնակչության լայն շերտերի դժգոհություններին և քաղաքական դերակատարների հանդեպ վստահության կորստին:

Մինևույն ժամանակ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի գլխավորած կառավարությունը կանգնած է մարտահրավերի առաջ, թե որքանով կհաջողի պահպանել և հետագա ընտրությունների միջոցով ամրագրել իշխանության դիրքերը, պայմանավորված է վերջինիս իրականացվելիք գործունեությունից, որը պետք է ներառի հասարակական-քաղաքական կյանքի յուրաքանչյուր ոլորտի հետևողական ուսումնասիրությունից, մինչև պետական կառավարման ապարատի արդյունավետ վերափոխում: Պետական քաղաքականության արդյունավետության կարևորագույն չափանիշներից է կադրային ճիշտ քաղաքականություն վարելը՝ հիմնվելով մասնագիտական բարձր պատրաստվածության և հմտու-

¹²⁶ Տե՛ս **Almond, G., Coleman J.**, “Introduction: A Functional Approach to Comparative Politics” In: *The Politics of Developing Areas*, Princeton University Press, 2015, էջ 60, <https://doi.org/10.1515/9781400866977-003>:

թյունների վրա: Հետևաբար, հասարակական-քաղաքական համակարգը կայունացնելու և զարգացնելու համար անհրաժեշտ է այն համալրել նոր կադրերով: Քաղաքական ընտրանու հավաքագրումը առանցքային նշանակություն ունի համակարգի կայուն գործառնության և զարգացման տեսանկյունից, քանի որ ինչպիսին ընտրանու որակն է, այնպիսին նրա կառավարումն է¹²⁷: Ուստի ինչպես անհրաժեշտ է համակարգը համալրել պետական մտածողություն ունեցող, հանրային շահը անհատականից վեր դասող անհատներով, այնպես էլ պատասխանատու և բարձր պաշտոնների նշանակել քաղաքական սոցիալականացման որոշակի փուլ անցածներին:

Այսպիսով, համաշխարհայնացման պայմաններում հասարակության զարգացմանը կարող է նպաստել միայն քաղաքական որոշումների ընդունման գործընթացում քաղաքացիների ներգրավվածությունը, առանց որի՝ չի կարող ապահովվել ժողովրդավարական արժեքների և նորմերի ամբողջությունը: ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման պայմաններում մասնակցության ինստիտուցիոնալացման ու մասնակցային մշակույթի զարգացման և ամրապնդման գործոններն են համախմբված ժողովրդավարության հաստատման կարևոր նախադրյալները: Վերջինս ապահովում է հասարակության մեջ քաղաքացիավարական մրցակցությունն ու համագործակցությունը, որոնց առկայության և գործարկելիության պայմաններում միայն հնարավոր կլինի ձևավորել կայուն և զարգացած հասարակություն:

Ուստի ժողովրդավարական հասարակարգի առանձնահատկությունն այն է, երբ քաղաքացիները ակտիվորեն մասնակցում են քաղաքական որոշումների ընդունման գործընթացին:

¹²⁷ St' u **Шестопал Е.**, Политическая психология: Учебник для вузов, М., ИНФРА-М, 2002, էջ 130:

Ինչպես նշել է Ա. Լինքոլնը, «Ժողովրդավարությունը ժողովրդի կառավարումն է, որն իրականացվում է ժողովրդի կողմից, հասնուն ժողովրդի»¹²⁸:

Հարկ է նշել, որ քաղաքացիների ներգրավվածությունը քաղաքական կյանքին կախված է նրանց անհատական վարքագծից, որի վրա մեծ ազդեցություն է թողնում քաղաքական համակարգը և երկրում տիրող իրավիճակը՝ քաղաքական տրամադրվածության և հետաքրքրության շրջանակը: Ի վերջո, հասարակության մեջ յուրաքանչյուրը իր գործունեության միջոցով է ձևավորում քաղաքական մասնակցության միջավայր:

Ինչպես արդեն նշել ենք, քաղաքական մասնակցության վրա առանցքային դերակատարում ունի հասարակության մեջ քաղաքական մշակույթի դրսևորման մակարդակը, որն արտահայտվում է ժողովրդավարության նորմերի և ինստիտուտների ներդրման և ընկալման մեջ: Քաղաքական մշակույթը, արտահայտելով հասարակական-քաղաքական հարաբերություններում յուրաքանչյուրի քաղաքական վարքը, վերջինիս դրսևորման առանձնահատկությունները, անհատի մեջ ձևավորում է որոշակի քաղաքական ինքնություն:

Ներկայումս ակտիվ քաղաքականության մեջ անհատականացման դրսևորման առանձնահատուկ գործոն է քաղաքական ինքնությունը: Ինքնության ձևավորումը կոլեկտիվ գործողությունների անբաժանելի մասն է: Սակայն քաղաքական ինքնությունները՝ հավաքական և անհատական գործողություններում, զգալիորեն տարբերվում են միմյանցից: Քաղաքական ինքնությունը հասկացվում է որպես միասնական հասկացություն, որը հանդես է գալիս պետական ինստիտուտների ամբողջության հա-

¹²⁸ St' u Цитаты о демократии, <http://www.democracy.ru/quotes.php>, հասանելի էր՝ 23.12.18:

մատեքստում (օրինակ՝ քաղաքական կուսակցություններ և միություններ)¹²⁹:

Քաղաքական ինքնությունը ոչ այնքան անհատի ակտիվությանն ու անհատական ընտրությանն է վերաբերում, որքան հասարակության մեջ իր դիրքորոշմանը: Դրա բացատրությունն այն է, որ հասարակության մեջ նման կարգավիճակն ունեցող քաղաքացիները ունեն նույն քաղաքական ինքնությունը: Նրանք ունեն ընդհանուր հետաքրքրություններ և կիսում են նմանատիպ սոցիալ-տնտեսական, քաղաքական շահեր: Այս առումով դասային ինքնությունը լավագույն արտահայտությունն է. գտնվում էք նույն սոցիալական դասում կամ կարգավիճակից ելնելով՝ կապված էք վերջինիս հետ¹³⁰:

Ի հավելումն՝ նշենք, որ հասարակության մեջ քաղաքական մշակույթի կայացվածությունը դրսևորվում է նաև պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ վստահության և հավատի հիման վրա: Քաղաքականությունից ժողովրդի դժգոհությունները և հիասթափությունը իշխանություն-հասարակություն փոխվստահության կորստի հետևանք է, որն իր անմիջական կնիքն է թողնում յուրաքանչյուր ոլորտի զարգացման վրա: Հետևաբար իշխանությունը միայն համընդհանուրի շահին միտված գործունեության միջոցով կարող է պահպանել ձեռք բերված վստահությունը՝ որպես հասարակարգի արդիականացման ցուցիչ: Իսկ ժողովուրդը կշարունակի գիտակցել, որ իշխանության լիիրավ կրողն ու իրացնողն է, որն էլ կհանգեցնի հասարակությունից քաղաքական ապատիայի իսպառ վերացմանը: Բացի այդ, վերջինս նպաստավոր պայմաններ է ձևավորում քաղաքական արքենտիզմի դրսևորման համար. հասարակության մեջ ար-

¹²⁹ Տե՛ս **Micheletti M.**, Individualized collective action, Department of political science, Stockholm University, Aalborg, Denmark, August 14-17, 2002, էջ 10:

¹³⁰ Տե՛ս նույն տեղում:

մատացած դժգոհությունները, սոցիալ-տնտեսական պայմանների վատթարացումը, ավելի ահագնացող գործազրկությունը, որը հանգեցնում էր արտագաղթի, բնակչության շրջանում իշխանության գործունեության նկատմամբ հակակրանք և անվստահություն են առաջացնում:

Նշենք, որ ժողովրդի հիասթափությունը նաև քաղաքական էլիտայի վերարտադրման հետևանք է. մարդիկ իշխանական էլիտայի փոփոխությամբ ցանկանում են հասարակության քաղաքական կյանքը էլիտայի գիղային մոդելից վերափոխել բացի (անտրեպրեներական)՝ համալրելով դրսից նոր կադրերով, որոնց միջոցով հնարավոր կլինի կառուցել պետական ապարատի կառավարման արդյունավետ ընթացակարգեր:

Այսպես, լեհ սոցիոլոգ և քաղաքագետ Ե. Վյատրը հիմք ընդունելով քաղաքական գործընթացներում հասարակության յուրաքանչյուր անդամի ներգրավվումը (քաղաքական հետաքրքրություն, քաղաքական մասնակցություն և չմասնակցություն) առաջ է քաշել ընտրական մասնակցության ներքոհիշյալ տեսակները՝

1. Ակտիվ մասնակիցներ. ընտրական գործընթացը դիտարկում են քաղաքական մասնակցության առանցքային նախապայման և մեծ հետաքրքրություն են ցուցաբերում քաղաքական գործընթացների նկատմամբ:

2. Ձեռնհաս դիտորդներ. այս խմբի քաղաքական վարքագիծը ավելի մոտ է առաջին՝ ակտիվ մասնակիցներին: Ճիշտ է, վերջիններս տեղեկացված են քաղաքական գործընթացների վերաբերյալ, բայց քաղաքական պասիվ մասնակցություն են ցուցաբերում:

3. Ձեռնհաս քննադատներ. աչքի են ընկնում իրենց ակտիվ մասնակցությամբ, բայց դժգոհ են պետության վարած քաղաքական կուրսից՝ մշտապես հանդես գալով քննադատական մոտեցումներով:

4. Պասիվ մասնակիցներ. թեկուզև տեղեկացված են առկա քաղաքական իրողություններին և հետաքրքրված են քաղաքականությամբ, բայց և այնպես չեզոք վերաբերմունք ունեն վերջինիս նկատմամբ:

5. Օտարված քաղաքացիներ. ընդհանրապես չեն հետաքրքրվում քաղաքականությամբ, տեղեկացված չեն քաղաքական որոշումների մասին և չեն մասնակցում քաղաքական կյանքին¹³¹:

Այս առումով նշենք, որ ընտրությունները ժողովրդավարական ինստիտուտների կազմավորման կարևորագույն սկզբունքներից են: Ընտրողի վարքը պայմանավորված է մի շարք գործոններով. ինչպես ընտրական իրավունքի սկզբունքներով, այնպես էլ սոցիալական կարգավիճակով, ընտրողների մոտիվացիայով և քաղաքական սոցիալականացման, քաղաքական հասունության մակարդակով: Ընտրական իրավունքը դրսևորվում է ընտրական մասնակցության երկու ձևերով. ուղղակի՝ ընտրական գործընթացը լեգալ կառուցակարգերով կանոնակարգող եղանակ, անուղղակի՝ ընտրական համակարգը բնորոշող տարբեր գործողությունների միջոցով¹³²: Հետևաբար ընտրական գործընթացի բնույթով կարելի է պատկերացում կազմել քաղաքական համակարգի և վարչակարգի էության և առանձնահատկությունների մասին: Ընտրական գործընթացի հետազոտությունը ենթադրում է մի շարք խնդիրների լուծում՝ կապված ընտրությունների անցկացման ընթացակարգերի, ազատ և արդար ընտրության չափանիշների, քաղաքական համակարգի այլ տարրերի հետ ընտրա-

¹³¹ Տե՛ս **Вяпр Е. Ё.**, Социология политических отношений, М., Прогресс, 1979, էջ 259-260:

¹³² Տե՛ս **Siber I.**, Interest in elections and electoral participation, Faculty of Political Science, University of Zegreb, Vol. XLI, 2004, № 5, էջ 3:

կան համակարգերի փոխգործակցության, արժևորման ու գնահատման հետ¹³³:

Այսպես, քաղաքականության սուբյեկտների ընտրական կամքի ձևավորման մոտեցումները անհրաժեշտ է համալրել և ներդնել ժամանակակից կառուցակարգերով: Այդ է պատճառը, որ ընտրական և հանրաքվեի իրավունքը հասարակության քաղաքական կյանքին քաղաքացիների քաղաքակիրթ մասնակցության և ժողովրդաիշխանության իրականացման կարևոր ընթացակարգերից է: Այն ենթադրում է քաղաքականության սուբյեկտների ներգրավվածության տարբեր ձևեր, որոնք նպաստում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լեգիտիմության հիմքերի ամրապնդմանը¹³⁴:

Եթե ժողովրդավարական քաղաքական վարչակարգի պայմաններում ընտրական գործընթացը կարևոր դերակատարում ունի քաղաքական համակարգի արդյունավետ գործառնության համար, ապա ոչ ժողովրդավարական համակարգերում էական ազդեցություն չունեն հասարակական-քաղաքական կյանքում:

Այսպես, ամբողջատիրական վարչաձևի պայմաններում, որտեղ իշխանությունը կենտրոնացված է, ընդդիմության ինստիտուտը և քաղաքացիների կամարտահայտման սկզբունքը իսպառ բացակայում են, տիրապետող է մեկ միասնական գաղափարախոսությամբ միակուսակցական համակարգի գործունեությունը, իշխանությունը տոտալ վերահսկողություն է իրականացնում հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտների վրա: Իսկ ավտորիտար վարչաձևը գտնվում է ժողովրդավարականի անցման սահմանագծին, որի պայմաններում իշխանության տարանջատման սկզբունքը, մարդու իրավունքների և ազա-

¹³³ Տե՛ս **Merrifield J.**, “The institutional and political factors that influence voter turnout.” *Public Choice* 77, 1993, էջ 657-667, <https://doi.org/10.1007/BF01047865>.

¹³⁴ Տե՛ս **Ալեքսանյան Ա.**, Ցիվիլիարխիկ դեմոկրատիա, Ե., 2005, էջ 68:

տությունների երաշխավորությունը, ընդդիմության առկայությունը ձևական են: Հետևաբար ժողովրդավարական երկրներում ընտրություններն իրապես էական ազդեցություն ունեն հասարակության քաղաքական կյանքում:

Բացի այդ, ընտրությունները լիարժեք կարող են իրականացնել իրենց գործառույթները միայն այն ժամանակ, երբ վերածվում են ժողովրդավարության հիմնարար ինստիտուտի, քաղաքացիների քաղաքական իրավասուբյեկտության իրականացման եղանակի, պետական կարգի սահմանադրական հիմքի: Ըստ Յու. Վեդենեևի՝ ընտրական իրավունքի իրավաբանական և իրավաքաղաքական տեսանկյունների փոխապայմանավորվածությունը նրանում է, որ, եթե ընտրությունները քաղաքական ինստիտուտ և գործընթաց են, ապա ընտրական իրավունքը դրանց իրավաբանական համակարգն է¹³⁵:

Այսպես, ընտրական իրավունքի սկզբունքներն ամրագրված են 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում և այլ փաստաթղթերում: Ընտրական իրավունքի սկզբունքները ներառում են մի շարք կարևոր ընթացակարգեր, որոնց առկայության դեպքում են միայն ընտրությունները ճանաչվում որպես ազատ, արդար և թափանցիկ: Ուստի ազատ և արդար ընտրությունները հանդիսանում են ոչ միայն վարչակարգի՝ ժողովրդավարական արժեքներին համապատասխանության չափանիշ, այլև դրանք քաղաքացիներին իրավական առումով հնարավորություն են ընձեռում թուլացնել կամ վերացնել ավտորիտար կառավարման համակարգը¹³⁶:

¹³⁵ Տե՛ս **Scammon R. M.**, “Electoral Participation.” The *ANNALS* of the American Academy of Political and Social Science 371 (1) (May), 1967, էջ 59-61:

¹³⁶ Տե՛ս **Nevitte N., Canton S.**, The Role of Domestic Observers *Journal of Democracy*, 1997, էջ 47- 61:

Հարկ է նշել, որ արդարությունը ենթադրում է ՁԼՄ-ների, ընտրական հանձնաժողովների և այլ կառույցների կողմից անխտիր բոլոր թեկնածուների նկատմամբ նորմատիվա-իրավական կանոնների անկողմնակալ կիրառում, ինչպես նաև թեկնածուների միջև ռեսուրսների համեմատաբար հավասարաչափ բաշխում: Հետևաբար արդար ընտրություններն ապահովում են իշխանության խաղաղ անցումը քաղաքական մի խմբից մյուսին և նպաստում ներկայացուցչական համակարգի կազմավորմանը: Այդ իսկ պատճառով էլ ընտրություններից հետո բոլոր քաղաքական ուժերի և թեկնածուների համար օրենքով սահմանված կարգով տեղի են ունենում բողոքարկման հնարավորություններ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ընտրությունների արդյունքների վերանայում և կրկնակի քվեարկության կազմակերպում¹³⁷:

Այսպիսով, ընտրություններն անհրաժեշտ է իրականացնել ընտրական իրավունքի ազատության և կամավորության չափանիշների հիման վրա: Այսինքն՝ ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկել որևէ թեկնածուի (կուսակցության) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին¹³⁸: Համաձայն Ռ. Դալի՝ ընտրության ազատությունը, որը բացառում է բռնությունը կամ հարկադրանքը տարբեր թեկնածուների կամ կուսակցության ներկայացուցիչների միջև, ընտրական իրավունքի գործարկման հնարավորությունն է: Բռնությունը կամ հարկադրանքը ենթադրում է ֆորմալ կամ իրական ընտրության բացակայություն: Այսինքն՝ այլընտրանքները բացակայում են, թույլատրված չեն, և գործընթացը հղի է բացասական հետևանքներով¹³⁹: Իսկ ա-

¹³⁷ Տե՛ս **Birch S.**, “Post-Soviet Electoral Practices in Comparative Perspective.” *Europe-Asia Studies* 63 (4), 2011, էջ 710. <http://www.jstor.org/stable/27975573>.

¹³⁸ Տե՛ս նաև ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 4, հասանելի էր՝ 25.05.2016:

¹³⁹ Տե՛ս «Քաղաքագիտություն», ու.ս. ձեռնարկ ՀՀ բուհերի համար, Ե., 2006, էջ 502:

զատության չափանիշը նախադրյալներ է ստեղծում ընտրական գործընթացի՝ ժողովրդավարականին բնորոշ ընթացակարգով իրականացման համար: Բացի այդ, առանց քաղաքական ազատությունները սահմանող նորմերի, դրանց անկողմնակալ կիրառման խնդիրը դառնում է անհիմաստ: Ի վերջո ազատ ընտրությունները բնութագրում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են խոսքի ազատությունը, հավաքների ազատությունը, միավորումների ազատությունը, օրենքի առաջ բոլորի հավասարությունը, համընդհանուր և հավասար ընտրական իրավունքը, ակտիվ ու պասիվ ընտրական իրավունքն իրականացնելու նկատմամբ հետապնդման, սահմանափակման, ճնշման բացակայությունը, քվեարկությանը մասնակցելու հնարավորությունը, սեփական քաղաքական և քաղաքացիական իրավունքների իրականացումը և այլն¹⁴⁰:

Այսպես, յուրաքանչյուր ոք իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք ունի, ներառյալ՝ տեղեկություններ և զաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետության սահմաններից: Ուստի տեղեկատվական դարաշրջանում արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվելու իր կարծիքից կամ փոխելու այն: Իսկ պետությունը պետք է երաշխավորի տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանությունը, անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը¹⁴¹:

Հասարակական-քաղաքական կյանքի մասնակցության կարևորագույն ձևերից է նաև հավաքներին ազատորեն մասնակ-

¹⁴⁰ Տե՛ս **Saikkonen, I. A-L.**, “Electoral Mobilization and Authoritarian Elections: Evidence from Post-Soviet Russia.” *Government and Opposition*, 52(1), 2017, էջ 58-59, <https://doi:10.1017/gov.2015.20>:

¹⁴¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, 06.12.2005, հոդված 27:

ցելու և դրանք կազմակերպելու իրավունքը: Բացօթյա տարածքներում կազմակերպվող հավաքներն օրենքով սահմանված դեպքերում անցկացվում են ողջամիտ ժամկետում ներկայացված իրազեկման հիման վրա: Իսկ ինչ վերաբերում է ինքնաբուխ հավաքներին, ապա այն իրականացնելու համար իրազեկում չի պահանջվում: Նշենք, որ հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հակապետական և հակասահմանադրական գործողությունների և տարաբնույթ հանցագործությունների կանխման, հասարակական կարգի պաշտպանության, առողջության և բարոյականության կամ ուրիշների հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով¹⁴²:

Անդրադատնանք նաև միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքին: Յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ ազատորեն միավորվելու, ներառյալ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք: Հետևաբար ոչ ոք չի կարելի հարկադրել անդամագրվելու որևէ մասնավոր միավորման: Միավորումների ազատությունը կարող է սահմանափակվել կամ արգելվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ միայն դատարանի որոշմամբ՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով¹⁴³:

Տեղին է նշել, որ ժողովրդաիշխանության կարևոր ինստիտուտներից մեկը հանրաքվեն է: Այն իշխանության իրականացման ուղղակի, անմիջական ձև է: Դրա միջոցով ընդունված որո-

¹⁴² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 44:

¹⁴³ Տե՛ս նույն տեղում, հոդված 45:

շումները անբեկանելի են և ենթական չեն վերանայման այլ օրենսդիր կամ վերահսկիչ մարմինների կողմից:

Ընտրական և հանրաքվեի իրավունքը՝ որպես «փոխհամաձայնության առանցքային մեխանիզմ», հնարավորություն է ընձեռում անհատներին և քաղաքացիների տարբեր միավորումներին իրականացնել իրենց ցիվիլիարխիկ կամքը՝ այսպիսով իրենց «անմիջական» կամ «միջնորդավորված» մասնակցությունը բերելով քաղաքական որոշումների նախապատրաստման, ընդունման, իրականացման և վերահսկման փուլերին¹⁴⁴:

Հանրաքվեները լինում են տարբեր տեսակի.

1. սահմանադրական,
2. համազգային,
3. համապետական,

4. տեղական, երբ լուծվում են տեղական նշանակության հարցեր, օրինակ՝ որևէ համայնքում ծագած խնդիր¹⁴⁵:

Այսպես, եթե Ազգային ժողովը մերժում է Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով ներկայացված օրենքի նախագծի ընդունումը, ապա մերժումից հետո՝ վաթսուներեք օրվա ընթացքում, օրենքի նախագծի ընդունման նախաձեռնությանը ընտրական իրավունք ունեցող ևս երեք հարյուր հազար քաղաքացու միանալու դեպքում նախագիծը դրվում է հանրաքվեի, եթե Սահմանադրական դատարանը նախագիծը ճանաչում է Սահմանադրությանը համապատասխանող: Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցների ստորագրությունների վավերականությունը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը¹⁴⁶:

¹⁴⁴ Տե՛ս **Ալեքսանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 68-69:

¹⁴⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 204:

¹⁴⁶ Տե՛ս նույն տեղում, հոդված 204:

Հարկ է նշել, որ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքները կարող են փոփոխվել միայն հանրաքվեով: Իսկ նման փոփոխություն կարող է կատարվել համապատասխան օրենքի ընդունումից առնվազն մեկ տարի հետո: Այսպես, հանրաքվեի չեն կարող դրվել այն օրենքների նախագծերը, որոնք վերաբերում են սահմանադրական օրենքների իրավակարգավորման առարկային, պետական բյուջեին, հարկերին, տուրքերին, այլ պարտադիր վճարներին, համաներմանը, պետության պաշտպանությանը և անվտանգությանը, միջազգային պայմանագրերին, ինչպես նաև «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ հարցերին: Այնուհետև, քաղաքացիական նախաձեռնության կարգով ներկայացված օրենքի նախագծի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը համապատասխանելու մասին որոշումն ընդունվելուց, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից հանրաքվե անցկացնելու մասին որոշումն ընդունվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանրապետության նախագահը նշանակում է հանրաքվե¹⁴⁷:

Փաստորեն, հանրաքվեի դրված ակտն ընդունվում է, եթե դրան կողմ է քվեարկել հանրաքվեի մասնակիցների կեսից ավելին, բայց ոչ պակաս, քան հանրաքվեներին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիների մեկ քառորդը¹⁴⁸: Իսկ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ հանրաքվե չի անցկացվում¹⁴⁹:

Ընտրական գործընթացների և ընտրական իրավունքի փոխհարաբերությունների համատեքստում տարբերակվում են՝ «ընտրական իշխանություն», «ընտրական դեմոկրատիա», «սուբյեկտիվ ընտրական իրավունք», «օբյեկտիվ ընտրական

¹⁴⁷ Տե՛ս նույն տեղում, հոդված 206:

¹⁴⁸ Տե՛ս նույն տեղում, հոդված 207:

¹⁴⁹ Տե՛ս նույն տեղում, հոդված 208:

իրավունք», «ընտրական իրավունքի բովանդակություն», «ընտրական իրավունքի ձև», «ընտրությունների օբյեկտ», «ընտրությունների սուբյեկտ» և այլ հասկացություններ: Այսպես, «սուբյեկտիվ ընտրական իրավունքն» իր մեջ ներառում է երկու իրավական ռեժիմներ, որոնք իրականացվում են ընտրական իրավունքի ակտիվ և պասիվ ձևերով¹⁵⁰:

Ընտրողները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն¹⁵¹: Նշենք, որ ընտրական իրավունքի կարևորագույն սկզբունքներից մեկն էլ համընդհանուրյան սկզբունքն է, որը ենթադրում է, որ ընտրություններին մասնակցելու իրավունք են ձեռք բերում երկրի բոլոր այն քաղաքացիները, որոնց նկատմամբ օրենսդրական սահմանափակումներ չկան: Հետևաբար համընդհանուր ընտրական իրավունք ասելով՝ հասկանում ենք տվյալ հանրության յուրաքանչյուր անդամի հասած քաղաքացիների ակտիվ ընտրական իրավունքի՝ ընտրելու իրավունքի առկայություն: Ակտիվ ընտրական իրավունքը քաղաքացու ընտրելու իրավունքն է: Վերոհիշյալ իրավունքի ձեռքբերման համար գործում են մի քանի սահմանափակումներ: Օրինակ՝ դատարանի որոշմամբ անգործունակ ճանաչված, ազատազրկման դատապարտված և պատիժը կրող անձինք չեն կարող մասնակցել ընտրական գործընթացին: Թեպետ տարբեր ժամանակներում գոյություն են ունեցել ակտիվ ընտրական իրավունքը սահմանափակող մի շարք ցենզեր, օրինակ՝ գույքային, կրթական, սեռային, կրոնական և այլն, սակայն ներկայումս, որպես կանոն, պահպանվում է միայն տարիքային ցենզը, որը պետությունների մեծ մասում տասնութ տարին է:

¹⁵⁰ Տե՛ս **Ալեքսանյան Ա.**, նշվ. աշխ., էջ 69:

¹⁵¹ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 3, 3-րդ կետ, 25.05.2016:

Նշենք, որ ակտիվ ընտրական իրավունքի իրացման համար բավականին երկար գործել է նաև սեռային ցենզը, որը հիմնականում վերաբերել է կանանց: Մինչև 19-րդ դարի կեսերը ընտրական գործընթացին մեծ մասամբ մասնակցում էին որոշակի սոցիալական կարգավիճակ և պաշտոն ունեցող քաղաքացիները, որոնք ավելի շատ էին շահագրգռված մասնակցել և ակտիվ ներգրավվածություն դրսևորել քաղաքական որոշումների ընդունման գործընթացին: Իսկ ինչ վերաբերում է սեռային սահմանափակմանը, ապա այն վերացել է 20-րդ դարի 20-ական թվականներից: Մասնավորապես Շվեյցարիայում այն պահպանվել է մինչև 1971 թ., որից հետո կանայք սկսել են ակտիվ մասնակցություն ունենալ ընտրական գործընթացներում: Հետևաբար, առաջին երկիրը, որտեղ 1893 թ. բոլոր չափահաս կանայք ընտրելու իրավունք են ստացել, Նոր Զելանդիան էր, Մեծ Բրիտանիայում՝ 1928 թ., Ֆրանսիայում՝ 1944 թ., Հունաստանում՝ 1952 թ.: Մինչ այդ կանայք ընտրելու սահմանափակ իրավունք ունեին նաև Շվեդիայում, Մեծ Բրիտանիայում, Ֆինլանդիայում և ԱՄՆ-ի որոշ նահանգներում: Իսկ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ձևավորված մի շարք միջազգային կազմակերպություններ պայքարում էին կանանց՝ տղամարդկանց հետ հավասար ընտրական իրավունք ստանալու համար, և այդ մասնակիցները կոչվում էին սուֆրաժիստներ: Եվ այդ պայքարը հետզհետե հանգեցրեց նրան, որ գրեթե բոլոր արևմտյան երկրներում կանայք ընտրական իրավունք ստացան՝ հանգեցնելով բոլորի քաղաքացիական իրավունքների լիիրավ ամրագրմանը¹⁵²:

Հասարակարգերի ժողովրդավարական անցման փուլում առանց ժողովրդավարական կառավարման չափանիշների արդի-

¹⁵² Տե՛ս Կանանց ընտրական իրավունքի հայկական բանաձևը, <https://chaidhana.org/hy/kanants-entrakan-iravownki-haykakan-banadzewe>, հասանելի էր՝ 16.12.18:

ականացման գործընթացը հնարավոր չէր լինի իրականացնել, որոնցից գլխավորը ընտրական իրավունքի կառուցակարգերի ամրագրումն էր հասարակության մեջ: Այդ իսկ պատճառով էլ ներկայումս կանայք ընտրելու իրավունք ունեն գրեթե բոլոր երկրներում: Իսկ ՀՀ-ում կանայք վերոհիշյալ իրավունքը ունեն 1919-թ.-ից: Բացի այդ, նշենք՝ մինչ ընտրական իրավունքի լիարժեք իրացմանը՝ շատ երկրներում գործել է նաև բարոյականության ցենզը. որոշ երկրներում թմրամոլները, մայրությունից զրկված կանայք կամ դատարանի կողմից ազատագրկման դատապարտված քաղաքացիները ընտրական գործընթացներին մասնակցելու իրավունք չունեին: Ներկայումս ակտիվ ընտրական իրավունքի հիմնական սահմանափակումը տարիքային ցենզն է: Նշենք, որ պասիվ ընտրական իրավունքի՝ ընտրվելու իրավունքի համար ավելի բարձր տարիքային ցենզ է սահմանվում: Մեր օրերում օգտագործվող ցենզերից մեկը նաև տվյալ տարածքում որոշակի ժամանակ բնակվելն է¹⁵³:

Այսպիսով, ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք¹⁵⁴: Իսկ ինչ վերաբերում է օբյեկտիվ ընտրական իրավունքին, ապա այն «սուբյեկտիվ ընտրական իրավունքի աղբյուրն է՝ ներառելով իրավաբանական նորմերի ամբողջությունը, որոնք սահմանում են ընտրական գործընթացի մասնակիցների

¹⁵³ Տե՛ս «Քաղաքագիտություն», նշվ. աշխ., էջ 491-492:

¹⁵⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 48, 4-րդ կետ:

իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը»¹⁵⁵ :

Հավասար ընտրական իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր ընտրողի՝ ընտրությունների արդյունքների վրա ազդելու հավասար հնարավորություն: Հավասարությունը ապահովվում է «մեկ ընտրող, մեկ ձայն» սկզբունքով: Հետևաբար սույն սկզբունքի պահպանումն ապահովում է, որ յուրաքանչյուր քվե ունենա հավասար կշիռ և ազդեցություն, ինչպես նաև ընտրատեղամասերի այնպիսի բաժանում, որ յուրաքանչյուրում լինեն մոտավորապես հավասար թվով ընտրողներ¹⁵⁶:

Իսկ ինչ վերաբերում է քվեարկության գաղտնիությանը, ապա այն ենթադրում է քաղաքացիների կամարտահայտության վրա կողմնակի ազդեցության բացառում: Հետևաբար ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Այդ սկզբունքի պահպանումն ապահովում է քաղաքացու ազատ կամքի դրսևորումը, որն իր ընտրության մեջ կաշկանդված չի լինում որևիցե այլ հանգամանքով¹⁵⁷:

Ուղղակի ընտրական իրավունքը քաղաքացու՝ անմիջականորեն ընտրելու կամ ընտրվելու իրավունքն է: Ազգային ժողովը, տեղական ինքնակառավարման մարմինները, բացառությամբ Երևան, Գյումրի, Վանաձոր համայնքների ղեկավարների, ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից¹⁵⁸:

Այսպես, Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն և իրականացնում է սահմանադրությամբ սահման-

¹⁵⁵ Տե՛ս **Ալեքսանյան Ա.**, նշվ.աշխ., էջ 69:

¹⁵⁶ Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուսումնական ձեռնարկ, էջ 5, տե՛ս <http://res.elections.am/images/doc/TEC-guide2016.pdf>, հասանելի էր՝ 20.11.2017:

¹⁵⁷ Տե՛ս նույն տեղում:

¹⁵⁸ Տե՛ս **ՀՀ ընտրական օրենսգիրք**, հոդված 5, 25.05.2016:

ված այլ գործառույթներ¹⁵⁹: ԱԺ-ն կազմված է առնվազն հարյուր մեկ պատգամավորից, ինչպես նաև ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեղեր են հատկացվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: ԱԺ-ն ընտրվում է համամասնական ընտրակարգով, և ընտրական օրենսգիրքը երաշխավորում է կայուն խորհրդարանական մեծամասնության ձևավորումը: Հարկ է նշել, որ եթե ընտրության արդյունքով կամ քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով կայուն խորհրդարանական մեծամասնություն չի ձևավորվում, ապա կարող է անցկացվել ընտրության երկրորդ փուլ: Իսկ երկրորդ փուլի անցկացման դեպքում թույլատրվում է նոր դաշինքների ձևավորումը: Քաղաքական կոալիցիա կազմելու սահմանափակումները, պայմանները և կարգը սահմանվում են ընտրական օրենսգրքով¹⁶⁰:

Քաղաքական կոալիցիա կազմելու միջոցով խորհրդարանական կայուն մեծամասնության ապահովումն ինքնին ենթադրում է երկխոսության կառուցակարգերի՝ քաղաքական բանակցությունների, խորհրդակցությունների ակտիվ կիրառում, քաղաքական փոխզիջումների հասնելու արվեստ և հմտություններ, որոնց անհնար է հասնել առանց հասարակական-քաղաքական գիտակցության լուրջ փոփոխությունների, առանց հայ հասարակությունում արմատավորված համապատասխան քաղաքական երկխոսության մշակույթի: Բացի այդ, ինչքան էլ կատարյալ լինեն քաղաքական փոխհարաբերությունների կարգավորման ինստիտուցիոնալ-նորմատիվային չափորոշիչները, այնուամենայնիվ, քաղաքագիտական հայտնի իրողություն է, որ մարդը չափումների չի ենթարկվում, հետևաբար անհատի վարքագիծն անհնար է լիովին տեղավորել ինստիտուցիոնալ դաշտում, բացատրել զուտ իրավական-նորմատիվային տեսանկյունից: Այդ իսկ պատճառով

¹⁵⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 88:

¹⁶⁰ Տե՛ս նույն տեղում, հոդված 89:

ՀՀ-ում քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է լինելու նաև զուգահեռաբար ընթացող նոր քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորմամբ¹⁶¹:

Նշենք, որ արտահերթ խորհրդարանական ընտրությունների ընթացքին հետևում են ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա մի շարք դիտորդական առաքելություններ: Դրանց թվում են՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ), ԵԽՆԿ-ն, ԱՊՀ դիտորդական առաքելությունը, ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովը, ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովը, Եվրոպական խորհրդարանը, ՄԻԼԲԱ-ն (Ազատության և ժողովրդավարության նախաձեռնությունների աջակցություն), Ի ԷՆԻ ԷՍ Օ-ն (Ընտրությունները մշտադիտարկող կազմակերպությունների եվրոպական ցանց) և այլն:

Այժմ անդրադառնանք, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրության կարգին: Տեղական ինքնակառավարման մարմիններն են համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, որոնք ընտրվում են հինգ տարի ժամկետով: Ընտրական օրենսգրքով կարող է սահմանվել համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրություն: Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական՝ համայնքի պարտադիր և կամավոր խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև պետության կողմից պատվիրակված: Համայնքի պարտադիր խնդիրները սահմանվում են օրենքով, իսկ կամավոր խնդիրները՝ համայնքի ավագանու որոշումներով¹⁶²:

¹⁶¹ Տե՛ս **Գալստյան Խ.**, Քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի, Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», Ե., 2016, № 3 (21), էջ 66:

¹⁶² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, (փոփոխություններ 06.12.2015), հոդված 182:

Հարկ է նշել, որ Երևանի, Գյումրիի, Վանաձորի ավագանու անդամների մանդատները բաշխվում են այն կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների միջև, որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անձշտությունների թվի գումարի՝ կուսակցության դեպքում՝ վեց, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝ ութ տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ: Եթե կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անձշտությունների թվի գումարի առնվազն վեց (ութ) տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացել են երեքից պակաս կուսակցություն (կուսակցությունների դաշինք), ապա մանդատների բաշխմանը մասնակցում են առավելագույն կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած երեք կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները¹⁶³:

Քաղաքապետի պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երրորդ աշխատանքային օրը, օրենքի ուժով հրավիրվում է ավագանու նիստ, որում որոշվում է քաղաքապետի արտահերթ ընտրության օրը, ընդ որում՝ քաղաքապետի պաշտոնը թափուր մնալուց հետո արտահերթ ընտրությունները անցկացվում են ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում՝ քաղաքապետի ընտրությունների համար սահմանված կարգով¹⁶⁴:

Ըստ այդմ, եթե ավագանու ընտրությունների արդյունքով ընտրություններին մասնակցող կուսակցություններից մեկը ստանում է ավագանու անդամների տեղերի հիսուն տոկոսից ավելին, ապա այդ կուսակցության թեկնածուների ցուցակի առա-

¹⁶³ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 141, 3-րդ կետ, 25.05.2016:

¹⁶⁴ Տե՛ս «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենք, հոդված 46, 1-ին կետ, 26.12.2008:

զին հորիզոնականում գտնվող անձը օրենքի ուժով համարվում է ընտրված քաղաքապետ¹⁶⁵:

Բացի այդ, ընտրական գործընթացը ժողովրդավարության չափանիշներին համապատասխան իրագործելու համար առավել քան կարևոր է այդ գործընթացի փուլերի ճիշտ կազմակերպումը: Ասվածից պարզ է, որ ընտրությունների նշանակումից հետո տեղի է ունենում հերթական փուլերի անցկացումը, մասնավորապես ընտրատարածքների և ընտրատեղամասերի ձևավորումը:

Այսպես, քվեարկությունն անցկացնում է տեղամասային կենտրոնում, որը կազմավորվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ դրա համար կահավորված սենյակում, որի համար պատասխանատու է համայնքի ղեկավարը¹⁶⁶: Ընտրությունների անցկացման նպատակով ձևավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ.

1. Կենտրոնական ընտրական հանձնաժողով,
2. Տարածքային ընտրական հանձնաժողովներ,
3. Տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորությունները իրականացնելիս անկախ են՝ հիմնվելով օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների վրա, ինչպես նաև ապահովում են ընտրողների ընտրական իրավունքի իրացումը և պաշտպանությունը¹⁶⁷:

Ընտրական գործընթացի հաջորդ կարևոր փուլը ընտրողների գրանցումն է, որը ՀՀ-ում իրականացնում է ոստիկանության

¹⁶⁵ Տե՛ս «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ օրենք, հոդված 44, 2-րդ կետ, 26.12.2008:

¹⁶⁶ Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուսումնական ձեռնարկ, էջ 10, տե՛ս <http://res.elections.am/images/doc/TEC-guide2016.pdf>, 20.11.2017:

¹⁶⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 10:

անձնագրային բաժանմունքը: Այսպես, ՀՀ ընտրողների ռեգիստրի հիման վրա՝ ըստ ընտրողների հաշվառման վայրի և ընտրական տեղամասերի հասցեների, կազմվում է համայնքի ընտրողների ցուցակ, որում ընդգրկվում են ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիները: Հետևաբար յուրաքանչյուր ընտրության դեպքում ընտրողը կարող է ընդգրկվել ընտրողների միայն մեկ ցուցակում և միայն մեկ անգամ¹⁶⁸:

Հարկ է նշել, որ թեկնածուները կարող են ինքնառաջադրվել, կարող են առաջադրվել քաղաքացիական նախաձեռնության կողմից, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և դաշինքների կողմից: Թեկնածուների առաջադրումից հետո սկսվում է նախընտրական քարոզչության փուլը, որը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Քվեարկության և դրան նախորդող օրը քարոզչությունը հրապարակային ելույթների և միջոցառումների, ինչպես նաև տպագիր մամուլի, վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող ռադիոընկերությունների և հեռուստաընկերությունների (այդ թվում՝ արբանյակային հեռարձակման ժամանակ) միջոցով արգելվում է:

Այսպես, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը կազմակերպում և վերահսկում է քվեարկության անցկացումը¹⁶⁹: Զինձառայողները, ազգային անվտանգության և ոստիկանության գորքերում ծառայողները տեղամասային կենտրոն մուտք են գործում ոչ շարային կարգով, առանց զենքի և զինա-

¹⁶⁸ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 10, 1-ին և 2-րդ կետեր, 25.05.2016:

¹⁶⁹ Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը՝ ժամը 8:00-ին, հայտարարում է քվեարկության սկիզբը և ժամը 20:00-ին ավարտի մասին:

մթերքի: Սակայն քվեարկության բնականոն ընթացքի վտանգման դեպքում տեղամասային կենտրոն զենքով մուտք գործել կարող են միայն ոստիկանության ծառայողները՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ: Նշենք, որ եթե քվեարկության սենյակում գտնվող ընտրողների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարվում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա հանձնաժողովի նախագահն իրավունք ունի սահմանափակելու քվեարկության սենյակում միաժամանակ գտնվող ընտրողների թիվը, բայց ոչ պակաս, քան տասնհինգ ընտրող՝ ընտրողներին քվեարկության սենյակ թողնելով հերթով: Քվեարկության սենյակում իրավունք ունի միաժամանակ ներկա գտնվելու յուրաքանչյուր զանգվածային լրատվության միջոցը ներկայացնող մեկ լրագրող և մեկ լուսանկարիչ կամ տեսաձայնագրման մեկ օպերատոր: Ընտրության սահմանված ժամից հետո արգելվում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ, և հանձնաժողովը քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս¹⁷⁰: Ընտրության ավարտից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը քվեարկության պարկը, ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, քվեարկության արդյունքների արձանագրության երկու օրինակը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումը քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան տասնչորս ժամվա ընթացքում ներկայացնում են տարածքային ընտրական հանձնաժողով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով¹⁷¹: Այնուհետև կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ յոթերորդ օրը, հիմք ըն-

¹⁷⁰ Տե՛ս ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 65, 25.05.2016:

¹⁷¹ Տե՛ս նույն տեղում, հոդված 71, 9-րդ կետ:

դունելով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները՝ ամփոփում է արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների վերաբերյալ¹⁷²:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրյալը՝ նշենք, որ ընտրական գործընթացի կազմակերպումը, հիմնվելով ընտրական իրավունքի սահմանադրական սկզբունքների ընդունման և կիրառելիության վրա, ժողովրդավարական հասարակարգի կայացման կարևորագույն կառուցակարգերից մեկն է: Առանց ընտրության արդարացի կազմակերպման տվյալ հասարակության զարգացումը հնարավոր չէ իրականացնել, քանի որ ընտրությունների միջոցով է ձևավորվում երկրի կառավարման համակարգը: Հարկավոր է ընտրական գործընթացների մասնակցության մեջ բարձրացնել քաղաքացիների գիտակցության մակարդակը և թույլ չտալ, որ ցածր գիտակցությունը հանգեցնի կենտրոնացված իշխանության ձևավորմանը: Միայն այդ դեպքում կարող ենք պայքարել հասարակության մեջ արմատացած ընտրակեղծիքների և ընտրախախտումների դեմ, որոնք ավելի են խորացնում կոռուպցիոն ռիսկերն ու դրսևորումները, անհատի իրավունքների և ազատությունների սահմանափակումը, զանազան հարցումների ցածր ցուցանիշները տվյալ հասարակությունում: Առանց քաղաքացիների գիտակցության մակարդակի բարձրացման ժողովրդավարական քաղաքական համակարգում հնարա-

¹⁷² Տե՛ս նույն տեղում, հոդված 75, 7-րդ կետ:

վոր չէ իրականացնել ընտրական արդար գործընթաց՝ անկախ ընդունված նորմերից և իրականացվող վերահսկողական մեխանիզմներից: Քանի որ միայն ժողովուրդը կարող է պայքարել ընտրական իրավունքի արդարացի կայացման համար՝ որպես իշխանության իրականացման իրավասուրբեկտ: Բացի այդ, ազատ և արդար ընտրություններ անցկացնելու միջոցով քաղաքական իշխանություն մուտք կգործեն կրթված և մասնագիտական պատրաստվածություն ունեցող ավելի մեծ թվով անհատներ, որոնցով էլ պայմանավորված է պետական ապարատի արդյունավետության բարձրացման և համակարգի հետագա զարգացման խնդիրները: Ընդհանրապես հասարակական համակարգի տարբեր ոլորտների թերզարգացվածության առաջին պայմաններից մեկը վատ դեկավարումն է, որից բխում են հետագա խնդիրներն ու թերությունները, որն էլ աստիճանաբար հանգեցնում է հասարակության մեջ արսենտիզմի դրսևորումներին: Այդ ամենից զերծ մնալու համար պետք է իսպառ վերացնել արսենտիզմն ի հայտ բերող տարրերը, որի արդյունքում հասարակության մեջ քաղաքական ապատիան գերիշխող դիրք է զբաղեցնում: Այն հանգեցնում է քաղաքացիների օտարմանը քաղաքական կյանքից, հիասթափությանը և անվստահությանը քաղաքական ինստիտուտների և իշխանության գործունեության նկատմամբ: Իսկ հավատի կորստի և անվստահության տարրերի դրսևորմանը նպաստում են քաղաքական դերակատարների կեղծ խոստումները, սեփական շահը հասարակականից վեր դասելը, որոնք էլ հանգեցնում են քաղաքացիների համար ընտրությունների արդյունքների ցածր նշանակությանը և պասիվ մասնակցությանը:

2.2. Մասնակցության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները քաղաքացիական հասարակության մեջ

Քաղաքացիական հասարակությունն առանցքային դեր է կատարում ժողովրդավարության, իրավունքի գերակայության ապահովման, որոշումներ կայացնելիս հասարակական տարբեր շերտերի շահերը ներկայացնելու գործընթացներում, որոնք հասարակության կայուն զարգացման կարևոր նախապայմաններ են¹⁷³: Քաղաքացիական հասարակությունը բնութագրվում է որպես պետական կառավարման մարմիններից և շուկայական հարաբերություններից դուրս մի տարածք, որն ստեղծվում է անհատների և կոլեկտիվների, կազմակերպությունների ու ինստիտուտների կողմից՝ հանրային շահը պաշտպանելու համար¹⁷⁴:

«Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը առաջին անգամ օգտագործվել է Եվրոպայում 16-րդ դարում, սակայն որպես հասարակագիտական կատեգորիա՝ հանդես է եկել 18-րդ դարում: Ինչպես նշել է Հեգելը, քաղաքացիական հասարակությունում ամեն ոք ինքն իր համար նպատակ է, իսկ մյուսները՝ նրա համար ոչինչ, սակայն առանց մյուսների նա չի կարող հասնել իր նպատակների իրագործմանը¹⁷⁵: Քաղաքացիական հասարակության

¹⁷³ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ», ՀՀ կառավարության 2014 սեպտեմբերի 25-ի նիստի №40 արձանագրային որոշում. հավելված 1, էջ 1:

¹⁷⁴ Տե՛ս «CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report», Y., 2014, էջ 6, https://www.civicus.org/images/Civicus-Report_August-2014_FFFinal.pdf, հասանելի էր՝ 03.06.18:

¹⁷⁵ Տե՛ս **Гегель Г.**, *Философия права*, М., 1990, էջ 228, http://hegel.rhga.ru/filosof/-fprav/detail.php?ELEMENT_ID=702&ART_NAME=%D0%A4%D0%B8%D0%BB%D0%BE%D1%81%D0%BE%D1%84%D0%B8%D1%8F%20%D0%BF%D1%80%D0%B0%D0%B2%D0%B0, հասանելի էր՝ 15.06.18:

րակության գործառույթյան համար Կանտը կարևորում էր ազատությունը, հավասարությունը, ինքնուրույնությունը¹⁷⁶:

Կ. Մարքսը քաղաքացիական հասարակությունը և պետությունը համեմատում է թշնամի բանակների կամ էլ բարեկամ բանակների հետ: Հակամարտության ընթացքում մեկը դառնում է հաղթող և արձակում մյուսի բանակը: «Վերցրե՛ք արտադրության, ապրանքափոխանակության և սպառման զարգացման որոշակի աստիճան, և դուք կստանաք որոշակի հասարակարգ, ընտանիքի, դասակարգերի որոշակի հանրություն, մի խոսքով՝ որոշակի քաղաքացիական հասարակություն: Վերցրե՛ք քաղաքացիական հասարակություն, և դուք կստանաք որոշակի քաղաքական կարգ, որը քաղաքացիական հասարակության սոսկ դրսևորում է¹⁷⁷», -գրել է Կ. Մարքսը: Իսկ Ա. Գրամշին քաղաքացիական հասարակությունը բնութագրում էր ոչ թե լիբերալ-ժողովրդավարական ընկալմամբ, այսինքն՝ կամավոր կազմակերպությունների և ՀԿ-ների բնագավառ, այլ առաջին հերթին որպես հանրային ոլորտ, որտեղ ընթանում է քաղաքական պայքար ձևավորված գաղափարների և համոզմունքների շուրջ¹⁷⁸:

Հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության կայացման գործում կարևոր նախապայման է օրենքի գերակայության սկզբունքը. ինքնակառավարվող և ինքնադրսևորվող մի հասարակություն, որը ղեկավարվում է օրենքով և ոչ թե մարդկանց կողմից, որոնք կարող են այն իրենց հայեցողությամբ մեկնաբանել, ինչպես նաև օրենքի կիրառման միջոցով ապահովել քաղաքակիրթ հասարակություն, որտեղ մարդը բարձրագույն արժեք է: Այսինքն՝ պետական և ոչ պետական կառույցների գործունեու-

¹⁷⁶ Տե՛ս **Кант И.**, Сочинения в 6-ти томах, т. 5, М., 1965, էջ 465:

¹⁷⁷ Տե՛ս Понятия "Гражданского общества", <http://kulturoznanie.ru/politology/ponyatiegrazhdanskogoobshhest/>, հասանելի էր՝ 03.06.18:

¹⁷⁸ Տե՛ս <http://www.powercube.net/other-forms-of-power/gramsci-anhegemony/> հասանելի էր՝ 10.06.2018:

թյունը պետք է ծառայի հասարակության շահերի և պահանջ-մունքների բավարարմանը՝ ապահովելով մարդու իրավունքների և ազատությունների գերակայությունը: Ըստ այսմ՝ հանրային կառավարման, դրա թափանցիկության ապահովման և զարգացման բնագավառում քաղաքացիական հասարակության դերի կարևորությունն աճում է ամբողջ աշխարհում¹⁷⁹: Այս առումով հանրային կյանքի կազմակերպման և դրսևորման գործընթացներում առանցքային դեր են կատարում կամավորության և ինքնավարության սկզբունքով գործող ոչ կառավարական կազմակերպությունները: Հետևաբար քաղաքացիական հասարակությունը ոչ պետական, շահույթ չհետապնդող հատված է, որի ինստիտուտներից են հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ), արհմիությունները, մասնավոր ՁԼՄ-ները, պետական իշխանության մաս չկազմող կուսակցությունները, բարեգործական և կրոնական կազմակերպությունները, հիմնադրամները, համայնքային խմբերը, իրավաբանական անձանց միությունները, որոնք կարգավորվում են օրենքով, ինչպես նաև ոչ ֆորմալ (իրավաբանական գրանցում չունեցող) խմբերն ու շարժումները¹⁸⁰, որոնք գործում են օրենքի շրջանակներում՝ միավորումների և հավաքների ազատությունների և այլ դրույթների հիման վրա¹⁸¹:

Վերոշարադրյալից ելնելով՝ նշենք, որ քաղաքացիական հասարակության առկայությունը ժողովրդավարական հասարակարգի ձևավորման հիմքն է: Ոչ ժողովրդավարական հասարակարգի պայմաններում քաղաքացիական հասարակությունը չի

¹⁷⁹ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 1:

¹⁸⁰ Տե՛ս “Defining civil society”,

<http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/CSO/0,,contentMDK:20101499~menuPK:244752~pagePK:220503~piPK:220476~theSitePK:228717,00.html>, հասանելի էր՝ 04.04.2018:

¹⁸¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 45, Ե., 2016:

կարող դրսևորվել, քանի որ ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկի՝ քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը և նրանց ներգրավվումը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին տեղի են ունենում միայն քաղաքացիական հասարակության առկայության պարագայում: Ամբողջատիրական վարչակարգի պայմաններում իշխանության կենտրոնացումը մեկ անձի կամ խմբի ձեռքում, մեկ միասնական գաղափարախոսությունը և բազմակարծության մերժումը բացառում են քաղաքացիական հասարակության գոյությունը, չնայած կարող ենք այդ վարչակարգը դիտարկել քաղաքացիական հասարակության ձևավորման և հետագա գործարկման համար անհրաժեշտ ինստիտուտների և զանազան հասարակական միավորումների ստեղծման ու կայացման փուլ: Հարկ է նկատել, որ ամբողջատիրական (օրինակ՝ ԽՍՀՄ) վարչակարգի պայմաններում հասարակական կյանքը վերահսկվում է իշխող վարչակարգի կողմից, և, բնականաբար, մասնակցության դրսևորման մասին խոսելն անիմաստ է. մարդու իրավունքներն ու ազատությունները դեկլարատիվ բնույթի են, հասարակական միավորումների և շարժումների ինքնուրույն գործունեությունն անհնարին է, մրցակցությունն ու ազատ շուկայական հարաբերություններն իսպառ բացակայում են: Բնականաբար, քաղաքական կյանքին մարդկանց մասնակցությունը ժողովրդավարության անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախապայման է: Այնուհանդերձ, մարդկանց ազատությունն ու ինքնուրույնությունը, ինչ-որ գաղափարների շուրջ համախմբվելու և հանրային նշանակության որոշ խնդիրներ լուծելու ունակությունը, ինչպես նաև մասնավոր սեփականության և ազատ շուկայական հարաբերությունների ապահովումը, այն է՝ քաղաքացիական հասարակության գոյությունը, կարող են խթանել հասարակարգի՝ ժողովրդավարականից անցումը համախմբման փուլ:

Խորհրդային միության փլուզումից հետո միջազգային կառույցները ձեռնամուխ եղան քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով ժողովրդավարական հասարակարգը զարգացնելուն՝ հավատալով, որ ուժեղ քաղաքացիական հասարակությունը կնպաստի արդյունավետ կառավարմանը, ինչպես նաև քաղաքացիական մասնակցության և սոցիալական վստահության մեծացմանը: Սա ենթադրում էր աջակցություն ՀԿ-ների գործունեությանը և դրանց թվի ավելացում հետխորհրդային տարածքում, որից բացառություն չէր նաև ՀՀ-ը¹⁸²: Հատկանշական է այն, որ ՀՀ-ում անկախությունից հետո քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ-ների) ձևավորման համար օրենսդրական լուրջ քայլեր իրականացվեցին¹⁸³: Մասնավորապես, 1996 թ. ընդունված «ՀԿ-ների մասին» ՀՀ առաջին օրենքով¹⁸⁴ ուժը կորցրած ճանաչվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հոկտեմբերի 30-ի՝ «Քաղաքացիների միավորումների կանոնադրությունները գրանցելու ժամանակավոր կարգի մասին» հրամանագիրը: Հետագայում ՔՀԿ-ների բնականոն գործունեությունը և կայուն զարգացումը ապահովելու, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, պետական քաղաքականություն մշակելու գործում ՀՀ քաղաքացիների շահերը ներկայացնելու ու քաղաքացիական հասարակության կայացման նպատակով 2008 թ. ստեղծվեց ՀՀ հանրային խորհուրդը, որը խորհրդատվական և ապաքաղաքականացված մարմին է՝ ձևավորված ՀՀ քաղաքացիների, հասարակական միավորումների, Սփյուռքի ներկայացու-

¹⁸² Տե՛ս **Ishkanian A.**, Reclaiming the emancipatory potential of civil society: a critical examination of civil society and democracy building programs in Armenia since 1991, *Armenian review*, 51 (1-4), ISSN 0004-2366, 2009, էջ 9-34:

¹⁸³ Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 1:

¹⁸⁴ Տե՛ս «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, 22.10.1996:

ցիչների կամավոր մասնակցության սկզբունքով: Առանձնապես կարևորելով Հանրային խորհրդի դերը երկրի հանրային կյանքում՝ կատարվեցին փոփոխություններ ՀՀ Ազգային ժողովի և կառավարության կանոնակարգերում, մասնավորապես՝ 2018 թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի» մասին, որով այն իրավունք ստացավ հիշյալ մարմինների գործունեությանը մասնակցելու և դիրքորոշում հայտնելու¹⁸⁵: Ի հավելումն վերոհիշյալի՝ նշենք, որ 2009 թ. ՀՀ կառավարությունը հավանություն տվեց «ՀԿ-ների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագծին (ընդունվել է 16.12.2016 թ.)¹⁸⁶:

Հատկանշական է, որ ՔՀԿ-ները տնտեսական բարեփոխումների և երկարաժամկետ զարգացման համար սոցիալական համաձայնության հասնելու կարևոր դերակատարներ են, որոնք խթանում են պետական կառույցների արդյունավետ կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը (ներառյալ կոռուպցիայի և անհավասարության դեմ պայքարը) և հասարակության մեջ վստահության և հանդուրժողականության մթնոլորտ են ստեղծում¹⁸⁷:

Մեր կարծիքով, այն երկրներում, որտեղ քաղաքացիական հասարակությունը դեռևս զարգացման փուլում է, նրա հետ փոխգործակցող կազմակերպություններից (իրավական, քաղաքական, սոցիալ-մշակութային, տնտեսական և այլն) յուրաքանչյուրի բարեփոխման համար որոշակի ժամանակ է հարկավոր: Այս տեսանկյունից տեղին է դիտարկել «Freedom House» կազմակերպու-

¹⁸⁵ Տե՛ս «ՀԽ մասին» ՀՀ օրենք, 07.03.2018, <http://publiccouncil.am/hy/legal-acts/hասանելի էր՝ 01.04.18>:

¹⁸⁶ Տե՛ս «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, 16.12.2016:

¹⁸⁷ Տե՛ս “Enabling environments for civic engagement in PSRP countries (ARVIN)”, Social development notes. № 82. March 2003, էջ 3: <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/11319/279920PAPER0sdn82.pdf?sequence=1&isAllo wed=y>, հասանելի էր՝ 03.04.2018:

թյան ժողովրդավարության ինդեքսի ուսումնասիրության՝ «Ազգերը անցումային փուլում» զեկույցը, որի միավորները հաշվարկվում են 7 ենթահինդեքսների հիման վրա. *1-ը ցույց է տալիս ժողովրդավարական առաջընթացի ամենաբարձր մակարդակը, իսկ 7-ը՝ ամենացածր.*

- 1) ազգային ժողովրդավարական կառավարում,
- 2) ընտրական գործընթաց,
- 3) քաղաքացիական հասարակություն,
- 4) ԶԼՄ-ների անկախություն,
- 5) տեղական ժողովրդավարական կառավարում,
- 6) դատական համակարգի անկախություն,
- 7) կոռուպցիա:

Այդ ցուցանիշների հիման վրա երկրների քաղաքական վարչակարգերը դասակարգվում են՝ «համախմբված ժողովրդավարություն» (1.00-2.99 միավոր), «կիսահամախմբված ժողովրդավարություն» (3.00-3.99 միավոր), «անցումային կամ հիբրիդային վարչակարգ» (4.00-4.99 միավոր), «կիսահամախմբված ավտորիտար վարչակարգ» (5.00-5.99 միավոր), «համախմբված ավտորիտար վարչակարգ» (6.00-7.00 միավոր) կատեգորիաների¹⁸⁸:

Ասվածից հետևում է, որ պետությունը պետք է շարունակի զարգացնել քաղաքացիական հասարակության նախադրյալներն այնպես, որ քաղաքացիական մասնակցության ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորումն ու հետագա զարգացումը դառնան գերակա: Այսպես, ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը՝ «Իշխանությունը պատկանում է ժողովրդին», քաղաքացիական մասնակցության սահմանադրաիրավական հիմքն է¹⁸⁹: Այս առումով քաղաքացիական մասնակցությունը դեկլարատիվ մակար-

¹⁸⁸ Տե՛ս «Freedom House 2022, Nations in Transit Methodology», <https://freedomhouse.org/report/nations-transit-methodology>, հասանելի էր՝ 23.03.22:

¹⁸⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 45, Ե., 2016:

դակից իրականի վերածելու համար հարկավոր է ստեղծել որոշակի մեխանիզմներ և ընթացակարգեր. մասնավորապես՝ ներգրավվել այդ դաշտը կարգավորող իրավական-կազմակերպչական և օրենսդրական մշակման աշխատանքներին, որոնցից են՝ ՔՀԿ-ների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը, «ՀԿ-ների մասին» օրենքը, լեզիտիմ իշխանության առկայությունը և ժողովրդավարական ընտրությունների անցկացումը, հասարակություն-պետություն երկխոսությունը և համագործակցությունը խթանելու պատրաստակամությունը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ քաղաքացիական մասնակցությունը համարվում է կայուն զարգացմանն ուղղված առանցքային գործոն, որի իրականացումը մեծապես պայմանավորված է քաղաքացիական հասարակության զարգացածությամբ և կայացածությամբ, հետևաբար քաղաքացիական մասնակցության դրսևորման ընթացքում առաջնային են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են՝ պետության և քաղաքացիական հասարակության սուբյեկտների երկխոսությունը, նրանց համագործակցությունը, հասարակական-պետական հատվածի համագործակցային և փոխպայմանավորված գործունեությունը:

Այսպես, ՀԿ-իշխանություն հատվածի սոցիալական արդյունավետ գործընկերությունը նպաստում է նյութական ռեսուրսների արդյունավետ բաշխմանը և օգտագործմանը, հնարավորություն է տալիս ուսումնասիրելու և հաշվի առնելու այս կամ այն խնդրի լուծման վերաբերյալ այլընտրանքային մոտեցումներ:

Քաղաքական զարգացման ճգնաժամերը հաղթահարելու և առկա մարտահրավերներին պատասխանելու համար հանրային կառավարման համակարգում պետք է տեղի ունենա կառավարող ընտրանի-գործարար ընտրանի-արհեստակցական միության (տրիպարտիզմ) ղեկավարների փոխհարաբերությունների նպատակամետ արդիականացում՝ պետություն-քաղաքացիա-

կան հասարակություն-մասնավոր հատված երկխոսության զարգացման միջոցով¹⁹⁰:

Հարկ է նշել, որ պետություն-ՀԿ համագործակցության մոդելի ձևավորումը դեռևս կայացման փուլում է: Այս տեսանկյունից ուշագրավ է Ա. Նաջամի առաջադրած կառավարություն-ՀԿ հարաբերակցության «4C» մոդելը, որի հիմքում ռազմավարական ինստիտուցիոնալ շահերի հայեցակարգն է: Հեղինակն առանձնացնում է 4 հնարավոր հարաբերություններ՝ պայմանավորված այս երկու գործոնները նախընտրած քաղաքական նպատակների ու միջոցների համընկնել-չհամընկնելով:

1. համագործակցություն (*cooperation* – նման նպատակներ, նման միջոցներ),

2. բախում(*confrontation* – տարբերվող նպատակներ, տարբերվող միջոցներ),

3. փոխլրացում (*complementarity* – նման նպատակներ, տարբերվող միջոցներ),

4. կոոպտացիա (*cooptation* – տարբերվող նպատակներ, նման միջոցներ)¹⁹¹:

Ա. Նաջամը ներկա միտումների մասին նշել է, որ կառավարության և ոչ կառավարական ոլորտների միջև փոխգործակցությունը հետզհետե մեծանում է, սակայն դա չի ենթադրում նրանց նպատակների ամբողջովին համընկնում:

Նշենք, որ ՀԿ-ԶԼՄ համագործակցությունը ևս շատ մեծ նշանակություն ունի մասնակցության ինստիտուցիոնալացման գործընթացում, քանի որ հենց ԶԼՄ-ներն են ձևավորում հասարակա-

¹⁹⁰ Տե՛ս **Przeworski A.**, Democracy and the Market: Political and Economic Reforms in Eastern Europe and Latin America (Cambridge, Cambridge University Press), 1991, <https://doi.org/10.1017/CBO9781139172493>:

¹⁹¹ Տե՛ս **Najam A.**, The four Cs of Government-Third Sector Relations: Cooperation, Confrontation, Complementarity, Cooptation, Sustainable Development Policy Institute(SDPI), Research report series № 25, Pakistan, 2000, էջ 1:

կան կարծիք, ապահովում հասարակության իրազեկվածության մակարդակ: ՁԼՄ-ների հետ արդյունավետ համագործակցության ճանապարհին լուրջ խոչընդոտ է լրագրողների մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը: Ավելին, ՁԼՄ-ները կարող են մեղմել հասարակության մեջ ՀԿ-ների նկատմամբ բացասական իմիջը: Իսկ որոշ դոնորներ մտահոգ են, թե ՁԼՄ-ները չեն ընդունում ՀԿ-ների կարևոր դերակատարությունը և նրանց գործունեությունը պատշաճ չեն լուսաբանում: Դոնորների կարծիքով, քանի որ երկիրը փոքր է, տեղեկատվությունը կարող է հեշտությամբ տարածվել հասարակության մեջ ոչ միայն հեռուստատեսությամբ կամ մամուլով, այլև հանրային միջոցառումների միջոցով՝ հրապարակներում, տեղեկատվական թերթիկներ բաժանելով, համացանցով և այլն¹⁹²:

Քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը նպաստող «Չորրորդ իշխանությունը»՝ ՁԼՄ-ները (անվանումը ստացել են՝ նկատի ունենալով պետական իշխանության երեք օղակները՝ օրենսդիր, գործադիր և դատական), հանդիսանում են հասարակական կարծիք, քաղաքացիական գիտակցություն և քաղաքական դիրքորոշում ձևավորելու գործոն: Ինչը չի կարելի նշել ոչ ժողովրդավարական երկրներում, որտեղ տեղեկատվական համակարգը միտված է ապակողմնորոշելու հասարակությանը՝ հիմնականում հանդիսանալով քաղաքական վերնախավի շահերը պաշտպանող և նրանց գործունեությունը լուսաբանող: Հակառակ պատկերն է ժողովրդավարական երկրներում, որտեղ լրատվամիջոցների դերակատարումը հասարակական-քաղաքական իրադարձությունները ժամանակին և անաչառ լուսաբանելն է՝ զերծ մնալով սուբյեկտիվ դիրքորոշումներից և

¹⁹² Տե՛ս «Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը», Ե., 2011, էջ 18, https://transparency.am/files/-publications/NED_publication_arm_3.pdf, հասանելի էր՝ 10.09.18:

այս կամ այն քաղաքական ուժերի ձեռքում չվերածվելով գործիքի, իր վճռորոշ դերակատարությունը ունենա իշխանություններդիմություն փոխգործակցության ապահովման և երկխոսության հաստատման հարցում:

Մակայն մինչ օրս տեղեկատվական դաշտում մի շարք լրատվամիջոցներ շարունակում են ենթարկվել որոշ ուժերի: Այդ անցանկալի իրողությունը պայմանավորված է ՁԼՄ-ների կենսագործունեության համար անհրաժեշտ տնտեսական միջոցների սակավությամբ, որն էլ հանգեցնում է լրատվամիջոցների ոչ պրոֆեսիոնալ և տեղեկատվական հարթակը ապակայունացնող գործունեությանը:

Հասարակական ոլորտի զարգացումը մեծապես կախված է նաև առանձին ՀԿ-ների համագործակցային և գործընկերային հարաբերություններից (ՀԿ-ՀԿ), որը, ընդհանուր առմամբ, ծավալվում է դոնորի կողմից ֆինանսավորված որոշակի ծրագրերի շրջանակում՝ հաճախ հենց նրա պահանջով կամ էլ որևէ ծրագրի շրջանակներում այլ կազմակերպության մասնագետի փորձագիտական աջակցության անհրաժեշտության դեպքում: Հարկ է նշել, որ հայաստանյան ՀԿ-ների համախմբման և համագործակցության հիմնական խոչընդոտ էին ՀԿ հատվածում նյութական միջոցների սակավությունը և այն ձեռք բերելու անառողջ մրցակցությունը: Դա էր պատճառը, որ շատ ՀԿ-ներ մենաշնորհային դիրք ունեին՝ բացառելով մյուսների գործունեությունը: Քանի որ ՀԿ-ները ֆինանսավորվում են արտերկրից, հաճախ է շահարկվում այն տեսակետը, թե դրանց անդամները գործում են դրսի դրամաշնորհներով, ուստի՝ նրանց պատվերով: Այս առումով տեղին է նշել, որ ՀԿ-ներում սովորաբար ներգրավված են համեմատաբար ակտիվ երիտասարդները, և նրանց մեծ մասը հենց դրամաշնորհների միջոցով է լուծում կենսական շատ խնդիրներ, այդ թվում՝ իր զբաղվածությունը՝ ՀԿ-ն համարելով որպես հիմ-

նական աշխատանք: Դա առաջին հայացքից դրական կարելի է համարել, բայց այս պարագայում նրանց քիչ է մտահոգում դրամաշնորհի այն պահանջները, որոնք միշտ չէ, որ կարող են բխել ազգային շահերից: Այսինքն՝ որոշ ՀԿ-ների նկատմամբ անվստահությունը պայմանավորված է նրանց՝ ոչ թե հասարակության շահերը ներկայացնող, այլ իշխանության գործառույթներ իրականացնող կազմակերպություններ լինելու հանգամանքով¹⁹³:

Ի հավելումն վերոշարադրյալի՝ նշենք, որ մի շարք ՀԿ-ների գործունեությունը պայմանավորված է երկու նպատակով՝ դրամաշնորհների միջոցով փող աշխատելու կամ իշխանություններին ծառայելու: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների լիակատար գործակցությունը հասարակական-քաղաքական համակարգի մյուս ինստիտուտների հետ աստիճանաբար կհանգեցնի մասնակցության հիմնախնդիրների ինստիտուցիոնալացմանը: Ուստի պետության և քաղաքացիական հասարակության հետագա զարգացումն ու կայունությունը պայմանավորված է իշխանություն-քաղաքացիական հասարակություն-մասնավոր հատված եռամիասնության համընդգրկուն գործակցությամբ, որի միջոցով հնարավոր կլինի իրական հիմքերի վրա դնել քաղաքացիական մասնակցության դրսևորումը:

¹⁹³ Տե՛ս **Թադևոսյան Գ., Չալոյան Ա., Ղազարյան Դ.**, Քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության ինստիտուցիոնալացման հեռանկարները զարգացման ծրագրերի համատեքստում, Հայաստանյան փորձի վերլուծություն, Ե., 2008, էջ 65:

ԳԼՈՒԽ 3

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ

3.1. Երիտասարդության մասնակցության հիմնախնդիրները ՀՀ-ում ժամանակակից երիտասարդական քաղաքականության իրականացման պայմաններում

Երիտասարդությունը՝ որպես պետության ռազմավարական ներուժ, բացառիկ դերակատարում ունի Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) զարգացման, ազգային դիմագծի պահպանման, անվտանգության ամրապնդման գործում:

Երիտասարդության և պետության միջև հարաբերությունները առավելագույնս կարգավորելու նպատակով որպես պետության ներքին քաղաքականության բաղադրիչ՝ իրականացվում է երիտասարդական պետական քաղաքականություն:

ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 14-ի թիվ 798 որոշմամբ հաստատվեց երիտասարդական պետական քաղաքականության ոլորտներին առնչվող առաջին փաստաթուղթը՝ Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը¹⁹⁴: ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ) սահմանում է այն հիմնական դրույթները, որոնց հիման վրա մշակվում ու իրականացվում է

¹⁹⁴ Տե՛ս «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 թթ. ռազմավարություն», ՀՀ կառավարության 2012 դեկտեմբերի 27-ի № 1693-Ն որոշում, էջ 3:

երիտասարդական պետական քաղաքականությունը ՀՀ-ում¹⁹⁵: Սակայն պետական կառավարման ոլորտում գործնական քայլ է արվել 1995 թ., երբ ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կազմում ձևավորվեց երիտասարդության հարցերի վարչություն, որի գործունեությունը պետք է միտված լիներ երիտասարդության հիմնախնդիրների ինստիտուցիոնալացմանը՝ ՀՀ-ում ներդնելով երիտասարդության զարգացման քաղաքականության կառուցակարգերը: Ըստ այդմ՝ 2002 թ. երիտասարդության հարցերի վարչությունը վերաձևավորվեց երիտասարդական քաղաքականության վարչության: Այդ փոփոխությունը, ըստ էության, արտահայտում էր ոլորտը ներառող հարցերի շրջանակների ընդլայնումը՝ «երիտասարդական հարցերից» դեպի «երիտասարդական քաղաքականություն»: ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության մշակման և իրականացման լիազոր մարմինը 2007 թ. հունիսից ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունն է, որի աշխատակազմ է տեղափոխվել երիտասարդական քաղաքականության վարչությունը¹⁹⁶:

Երիտասարդական ծրագրերի համատեքստում տարաբնույթ միջոցառումների իրականացման նպատակն է բարելավել երիտասարդների կենսապայմանները, բարձրացնել հասարակական-քաղաքական կյանքին նրանց մասնակցության աստիճանը: Իսկ երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության նպատակներից է նաև աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի համատեքստում կառավարության՝ երիտասարդներին առնչվող գործողությունների լայն

¹⁹⁵ Տե՛ս «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ», ՀՀ կառավարության 2014 դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրային որոշում, էջ 1:

¹⁹⁶ Տե՛ս ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թթ. ռազմավարության նախագիծ, էջ 3:

շրջանակ ձևավորելը, որի համաձայն՝ կառավարությունը համապատասխան գերակայություններ կսահմանի առաջիկա տարիների համար.

ա) ծառայությունների բարելավում և տեղեկատվության հասանելիություն,

բ) հասարակական-քաղաքական կյանքին մասնակցություն,

գ) երիտասարդության զբաղվածության ապահովում,

դ) ինստիտուցիոնալ հնարավորությունների ընդլայնում և երիտասարդների մասին իրազեկության աստիճանի բարձրացում¹⁹⁷:

Հարկ է նշել, որ երիտասարդական քաղաքականությունը ՀՀ պետական քաղաքականության բաղկացուցիչն է և ունի ռազմավարական նշանակություն: Երիտասարդական պետական քաղաքականության նորմատիվային փաստաթղթերի մշակման ուղղությամբ աշխատանքներ են տարվում նաև մարզային երիտասարդական ստորաբաժանումների, նրանց կառավարման խորհուրդների փոխգործակցության, ինչպես նաև երիտասարդական հասարակական կազմակերպությունների հետ: Այն միտված է ստեղծելու իրավական, սոցիալ-տնտեսական և կազմակերպչական պայմաններ երիտասարդության համընդգրկուն զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար: Երիտասարդական պետական քաղաքականությունը առաջնահերթությունների, տարաբնույթ ծրագրերի և միջոցառումների համակարգ է, որն ուղղված է նրանց մասնակցության, սոցիալականացման և ինքնաիրացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, երիտասարդության ներուժի ներգրավմանն ու դրա զարգացմանը՝ նպաստելու ՀՀ ազգային անվտանգության ամրապնդմանը, սոցիալ-տնտեսական ու մշակութային ոլորտների

¹⁹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 17:

զարգացմանը¹⁹⁸: Վերջինիս նպատակը երիտասարդի ազգային դիմագծի, քաղաքացիական գիտակցության ձևավորման, սոցիալական կայացման, նրա ստեղծագործ ներուժն ի շահ հասարակության առավել լիարժեք օգտագործելու սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական, կրթական, հոգևոր, մշակութային, կազմակերպչական, մասնակցային պայմաններ և երաշխիքներ ստեղծելն է: Այն միտված է երիտասարդների անհատական կարողությունների զարգացնելուն և երիտասարդներին հասարակության մեջ լիարժեք ինտեգրվելուն¹⁹⁹:

Երիտասարդական պետական քաղաքականությունը պետության գործունեությունն է, որն ուղղված է լուծելու երիտասարդության առանձնահատուկ խնդիրները՝ կախված նրանից, թե տվյալ հասարակության մեջ ինչն է համարվում երիտասարդության հիմնախնդիր, որքանով է հասարակությունը արտացոլում ազգային և մշակութային ավանդույթները և համապատասխանում տվյալ հասարակության մեջ ձևավորված արժեքներին ու նորմերին: Երիտասարդական պետական քաղաքականությունը էականորեն տարբերվում է և՛ ըստ հայեցակարգի, և՛ գործնականում իրականացման մեթոդների կիրառմամբ: Հետագայում երիտասարդների նկատմամբ հոգատարության և վերահսկման գաղափարներն ամբողջացան տարաբնույթ մասնավոր նախաձեռնությունների երիտասարդության օգնության միջոցառումների ծրագրերում, որոնց գործունեությունը կարգավորվում էր բացառապես օրենքի շրջանակներում: Ուստի իրավական կանոնակարգումը գլխավորապես նպաստեց երիտասարդների և անչափահասների շրջանում հանցագործության աճի կանխմանը: XX

¹⁹⁸ Տե՛ս «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ», էջ 2:

¹⁹⁹ Տե՛ս ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թթ. ռազմավարության նախագիծ, էջ 2:

դ. սկզբին մի շարք երկրներում ձևավորվեցին դատարանների հատուկ կազմեր անչափահասների համար (1908 թ.՝ Գերմանիայում, 1910 թ.՝ Ռուսաստանում և այլն), օրենսդրության մեջ հայտնվեցին դրույթներ, որոնք ուղղված էին երիտասարդ քաղաքացիների իրավունքների պաշտպանությանը²⁰⁰:

Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը ոլորտում հիմնարար փաստաթուղթ է, որով սահմանվում են ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, ինչպես նաև երկարաժամկետ կտրվածքով (2015-2025 թթ.) վերջինիս նպատակը, խնդիրները, սկզբունքները և ուղղությունները:

Ըստ այդմ՝ երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտներն են.

1) Երիտասարդ՝ ՀՀ 13-30 տարեկան (ներառյալ) քաղաքացի, ինչպես նաև ՀՀ-ում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 13-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում²⁰¹:

2) Երիտասարդ ընտանիք՝ ամուսինների գումարալին տարիքը չի գերազանցում 70-ը կամ երեխա ունեցող երիտասարդ միայնակ ծնող²⁰²:

3) Երիտասարդական հասարակական կազմակերպություն՝ ՀՀ-ում գրանցված հասարակական այն կազմակերպությունները, որոնք, համաձայն իրենց կանոնադրության, զբաղվում են երիտասարդության հարցերով և իրականացնում են երիտասարդա-

²⁰⁰ Տե՛ս Պետական երիտասարդական քաղաքականություն, http://www.epension.am/am/socialdict_p, հասանելի էր՝ 17.09.18:

²⁰¹ Տե՛ս ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարության նախագիծ, էջ 9-10:

²⁰² Տե՛ս նույն տեղում:

կան աշխատանք: ՀՀ երիտասարդական քաղաքականության ձևավորման առաջին իսկ տարիներից ՀՀ-ում նրանց հարցերով զբաղվող պետական մարմինների առաջնահերթություններից է երիտասարդական հասարակական կազմակերպությունների նախաձեռնությունների խթանումը և նրանց մասնակցությունը երիտասարդական քաղաքականության իրականացման բոլոր փուլերում:

Հարկ է նշել, որ 2009 թ. իրականացված դրամաշնորհային համակարգի աշխատանքների գնահատման գործընթացը վեր է հանել նաև մի շարք խնդիրներ, որոնցից առավել արդիական էր դրամաշնորհների ներկայացման գնահատման և վերահսկման համակարգերի ոչ բավարար թափանցիկությունը և հրապարակայնության թերի ապահովումը: Այդ բացերի վերացման նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը 2009 թ. վերջին ձեռնարկեց առցանց դրամաշնորհային համակարգի մշակման և գործարկման աշխատանքներ: Առցանց համակարգը երիտասարդական կազմակերպություններին հնարավորություն էր տալիս գրանցվել կայքում և հավակնել պետական դրամաշնորհների²⁰³:

4) Երիտասարդական աշխատող` անձ, որն իրականացնում է երիտասարդական աշխատանք (երիտասարդների հետ տարվող աշխատանք, որն ուղղված է վերջիններիս հիմնախնդիրների բացահայտմանը և լուծմանը)` զարգացնելու երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական բաղադրիչները, նրանց ներուժը ուղղելու հասարակական-քաղաքական կյանքին ինտեգրվելուն²⁰⁴:

²⁰³ Տե՛ս <http://cragrer.am/node/55> (առցանց դրամաշնորհային համակարգ), հասանելի էր՝ 16.09.2018:

²⁰⁴ Տե՛ս «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ», էջ 3:

Երիտասարդությունը անհատի կյանքի էական ժամանակահատվածներից մեկն է, եթե ոչ ամենաէականը աշխատանքային կարիերայի հիմքերը դնելու առումով: Այդ ընթացքում երիտասարդները ուրվագծում են իրենց ձգտումներն ու կյանքի նպատակները, իրենց բացառիկ դերն ու պատասխանատվությունն են փնտրում հասարակության մեջ և ձգտում են հասնել տնտեսական անկախության: Սա նշանակում է, որ երիտասարդությունը գտնվում է սոցիալական և հոգեբանական անցումային ժամանակաշրջանում, երբ երիտասարդները պետք է կարևոր որոշումներ կայացնեն և ընտրություններ կատարեն, որոնք էապես ազդում են իրենց կյանքի ընթացքի վրա²⁰⁵:

Երիտասարդական աշխատանքը երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման մեխանիզմ է: Այն իր մեջ ներառում է երիտասարդների կողմից երիտասարդների համար իրականացվող սոցիալ-մշակութային, կրթական, քաղաքացիական, և քաղաքական միջոցառումներ: Սրանք հիմնականում կրթական ոլորտից դուրս իրականացվող ծրագրեր են, որոնք հաճախ կրում են ոչ ֆորմալ բնույթ: Երիտասարդական աշխատանքի հիմնական խնդիրն է երիտասարդների համար իրենց ապագան կերտելու հնարավորությունների ստեղծումը: Այն տարբեր ձևաչափեր ու բովանդակություն կարող է ունենալ՝ սկսած ակումբային գործունեությունից, երիտասարդական կենտրոններից, փողոցում երիտասարդության հետ տարվող աշխատանքից, սպորտային միջո-

²⁰⁵ Տե՛ս **Մերիեր Ն.**, «Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա». Աշխատանքի Միջազգային գրասենյակի «Զբաղվածության քաղաքականության» բաժին, Ժնև, 2014, էջ 3, http://www.un.am/up/library/Labor_Market_Armenia_arm.pdf, հասանելի էր 16.09.2018:

ցառումներից, մինչև սոցիալական ձեռներեցություն, քաղաքացիական ակտիվիզմ, ժամանցի կազմակերպում և այլն²⁰⁶:

Ընդհանուր առմամբ, հաճախ առաջարկվում է ԵԱ-ի (երիտասարդական աշխատանք) հիմնական երկու ընդհանրական սկզբունքային նպատակ, որը նաև արտացոլվում է ոլորտի բնութագրման մեջ: Դրանք են.

1. երիտասարդների անհատական կարողությունների զարգացման, ինքնավստահության, հասարակական կյանքում ակտիվության աջակցումը (facilitating youth agency),

2. կյանքում կողմնորոշվելու և ունակությունների զարգացումը (navigational capacities)²⁰⁷:

Այսպես, ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թթ. ռազմավարությունը մշակվել է՝ հիմնվելով ՀՀ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգի հիմնական դրույթների վրա: Երիտասարդների կարիքների վերլուծության և գերակայությունների սահմանման համար փաստական հենք են ընդունվել 2013-2017 թթ. երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտի և այլ հասարակական ու միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտություններն ու զեկույցները²⁰⁸:

Ըստ այսմ՝ երիտասարդական պետական քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանվել են՝ հիմք ընդունե-

²⁰⁶ Տե՛ս «Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ», Երիտասարդական աշխատանքի միջազգային փորձի ուսումնասիրություն, ավարտուն զեկույց, վերլուծություններ և առաջարկություններ, 2015, էջ 27-28:

²⁰⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

²⁰⁸ Տե՛ս ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թթ. ռազմավարության նախագիծ, էջ 1-2:

լով 2012-2014 թթ. ՀՀ երիտասարդության շրջանում անցկացրած տարբեր հետազոտություններ, մասնավորապես՝ «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույցը»²⁰⁹, «Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները» զեկույցը²¹⁰ և այլն: Նշենք, որ ժողովրդավարացման գործընթացը հաջողությամբ իրականացնելու և ժողովրդավարացման անցումը համախմբման փուլ տանելու առաջնային գործոններից է երիտասարդության ներգրավվածությունը հասարակության տարբեր հարաբերություններում:

Շատ կարևոր է երիտասարդների զբաղվածությունը հասարակական համակարգի տարբեր ոլորտներում համընդգրկուն փոխօգնության միջոցով, քանի որ այդ հիմնահարցի լուծմանը կնպաստի միայն ոլորտային երկխոսությունը:

Այսպես, աշխատատեղերի համաշխարհային ճգնաժամը խորացրել էր երիտասարդների խոցելիությունը հետևյալ առումներով.

1. գործազրկության ավելի բարձր մակարդակ,
2. ցածր որակի աշխատանք նրանց համար, ովքեր աշխատանք են գտնում,
3. աշխատաշուկայի ավելի մեծ անհավասարություն երիտասարդների տարբեր խմբերի միջև,
4. ուսումնական հաստատությունից աշխատանքի անջատվածություն ու ավելի վտանգավոր անցումային ժամանակաշրջան,
5. մասնագիտական աշխատաշուկայից անջատվածության աճ,

²⁰⁹ Տե՛ս «Հայաստանի երիտասարդական ազգային զեկույց», Ե., 2011:

²¹⁰ Տե՛ս “National youth aspirations research report. RA Ministry of Sport and Youth Affairs. United Nations Development Program, Armenia”, Y., 2012, https://www.undp.org/content/dam/armenia/docs/National%20youth%20aspirations%20survey%20report_ENG_edited%20final.pdf, հասանելի էր՝ 03.11.2016:

6. մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի շահերի տարբեր ուղղություններ,

7. մասնագիտությունների ոլորտը դարձել է առավել դինամիկ, բազմագործոն ու դժվար կանխատեսելի,

8. մասնագիտական կողմնորոշման համակարգի ոչ արդյունավետ գործառնությունը²¹¹:

ՄՄԿ-ի (Աշխատանքի միջազգային կազմակերպություն)՝ 2012 թ. հունիսին կայացած կոնֆերանսի ժամանակ որոշում էր կայացվել հրատապ գործողություններ ձեռնարկել՝ երիտասարդների աննախադեպ աշխատանքային ճգնաժամի խնդիրը լուծելու նպատակով: «Երիտասարդների զբաղվածության ճգնաժամ. գործողություններ իրականացնելու կոչ» վերտառությամբ հռչակագիրը ներառել էր եզրակացությունների մի փաթեթ, որոնք ներկայացնում էին երիտասարդների զբաղվածության ազգային ռազմավարությունների ձևավորման նախագիծ²¹²: Այն կոչ էր անում բազմակողմանի գործողությունների միջոցով ավելացնել երիտասարդության զբաղվածության ոլորտում իրականացվող քաղաքականության ուղղությունները: Որպես այդ օրակարգի մի մաս՝ ՄՄԿ-ը մշակել էր համընդգրկուն ձևաչափով ծրագիր, որի նպատակաուղղված առաջնահերթություններից մեկը երիտասարդների զբաղվածությանը ուղղված ծրագրերի ամրապնդումն էր: Այս առումով ՀՀ-ում երիտասարդական քաղաքականության վրա էական ազդեցություն ունեն նաև ՄՄԿ-ի կազմում գործող գործակալությունները՝ ՄՄԿ-ի մանկական հիմնադրամը, ՄՄԿ-ի

²¹¹ Տե՛ս «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն», Ե., 2013, Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն, էջ 14-15, <http://www.minsportyouth.am/files/post/1463655073-2.pdf>, հասանելի էր՝ 03.11.2016:

²¹² Տե՛ս «Երիտասարդների զբաղվածության ճգնաժամ. գործողություններ իրականացնելու կոչ», 2012, http://www.ilo.org/ilc/ILCSessions/101stSession/textsadopted/WCMS_185950/lang--en/index.htm, հասանելի էր՝ 03.11.2016:

բնակչության հիմնադրամը, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը: Ընդունելով ՄԱԿ-ի՝ երիտասարդներին (ներառյալ՝ երեխաներին) նվիրված հատուկ նիստը եզրափակող սույն փաստաթուղթը («Աշխարհը երեխաների համար (ԱԵՀ)» բանաձևը²¹³)՝ պետությունները հանձն են առել երիտասարդների մասնակցությունը ակտիվացնելու ուղղությամբ: Հարկ է նշել, որ բազմաթիվ այլ միջազգային կազմակերպություններ ևս իրենց առաջնահերթություններում մշտապես ներառում են երիտասարդության հարցերի բաղադրիչը, ինչպես, օրինակ, «Ժողովրդավարության ազգային ինստիտուտը» (NDI), «Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը» (OSCE), «Բաց հասարակության ինստիտուտը» (OSI), «Վորլդ Վիժն Հայաստանը», «Գերմանիայի տեխնիկական համագործակցության ընկերությունը» (GTZ), «Եվրասիա համագործակցության հիմնադրամը» և այլն:

Նախկինում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կազմում երիտասարդության հիմնահարցերով զբաղվում էր միայն երիտասարդական քաղաքականության վարչությունը, որի գործունեությունն ուղղված էր երիտասարդական քաղաքականության մշակման աշխատանքների և պետության կողմից երիտասարդական ծրագրերի իրականացմանը: Հետևաբար 2018-2022 թթ. երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության մեջ որպես գերակա խնդիր առանձնացված է երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրը, որի շրջանակում նախատեսվում է լուծել երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և ձեռներեցության խթանման աշխատանքները, կարիերայի կենտրոնների հետ համագործակցություն

²¹³ Տե՛ս "Resolution. A world fit for children", (ընդունվել է ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից՝ 2002 թ. հոկտեմբերի 11-ին), <https://www.unicef.org/publications> , 29.10.2016:

նը, մարգային երիտասարդների զբաղվածության խթանումը և այլն²¹⁴:

Առանձնակի կարևորվում է երիտասարդության շրջանում սպորտի՝ որպես առողջ ապրելակերպի և կենսական կարիքների ապահովմանը նպաստող պայմանների ստեղծումը: Այսինքն՝ առողջ ապրելակերպի խթանման համատեքստում կարևորվում են երիտասարդության շրջանում վտանգավոր սովորությունների և հատկապես թմրամոլության դեմ պայքարը, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և այլ վարակիչ հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև սեռական վարքագծի ձևավորումը: Հետևաբար առողջ ապրելակերպի կարևոր բաղադրիչներից է վերարտադրողական առողջությունը, որին առնչվող հիմնախնդիրներից են սեռական դաստիարակության անբավարար մակարդակը, սեռավարակների տարածվածությունը, անպտղությունը և այլն, որոնք ոչ միայն առողջապահական խնդիրներ են, այլև մեծապես առնչվում են ժողովրդագրական անվտանգությանը, որով էլ կարևորվում է պետական համալիր ծրագրերի և միջոցառումների իրականացումը²¹⁵:

Կարևորելով ընտանիքի դերը պետության և հասարակության զարգացման գործընթացներում և ելնելով այն հանգամանքից, որ ազգային գենոտիպի պահպանումը, նոր սերնդի հոգևոր և ֆիզիկական զարգացումը կախված են երիտասարդ ամուսինների առողջական, սոցիալ-տնտեսական ու կենցաղային պայմաններից, նրանց ընտանիքում համերաշխությունից և շրջապատող հասարակական միջավայրից՝ պետությունը երիտասարդ ընտանիքների համար պետք է նախատեսի բազմաբնույթ օժանդակու-

²¹⁴ Տե՛ս ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թթ. ուղևորության նախագիծ, էջ 7: Ըստ նախագծի պաշտոնապես գրանցված տվյալների՝ ՀՀ-ում երիտասարդների միայն 28%-ն էր զբաղված:

²¹⁵ Տե՛ս նույն տեղում, գրույն 7:

թյուն՝ բնակարանային հիմնախնդրի լուծման (բնակարանային շինարարություն, մատչելի հիպոթեկային վարկերի տրամադրում և այլն²¹⁶), ուսման, բժշկական օգնության և այլ կարիքների համար, ինչպես նաև ծնելիության խթանման ծրագրեր:

Առանձնակի կարևորվում են նաև հոգևոր դաստիարակչական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև երիտասարդների շրջանում ազգային արժեքների պահպանմանն ու հայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումների շարունակական իրականացումը: Ռազմահայրենասիրական դաստիարակությունը՝ որպես երիտասարդների հոգևոր-մշակութային և ազգային արժեքների պահպանման ու զարգացման առանձին ուղղություն, իրականացվում է ՀՀ պաշտպանության նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

Արագ փոփոխվող աշխարհում, որտեղ անընդհատ ի հայտ են գալիս նոր գիտելիքներ և գաղափարներ, գործարկվում են նորագույն տեխնոլոգիաներ, այդ ամենին տիրապետելու և մրցունակ լինելու համար անհրաժեշտություն է դառնում շարունակական կրթությունը, որի ապահովման հիմնական ձևերից է նաև ոչ ֆորմալ կրթությունը: Անկախությունից ի վեր կրթությունը շարունակում է մնալ նորանկախ ՀՀ-ի կարևորագույն ոլորտներից մեկը, որը երիտասարդների համար վեր է հանում մտահորիզոնը ընդլայնելու տարբեր ուղիներ²¹⁷:

Ի հավելումն դրա՝ նշենք, որ անհրաժեշտ է հասարակական-պետական կառավարման համակարգում ձևավորել և ամրա-

²¹⁶ Տե՛ս «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիր: ՀՀ կառավարության 29 հունվարի 2010 թ. № 98-Ն որոշում: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=56403>, հասանելի էր՝ 23.11.2016:

²¹⁷ Տե՛ս **Մկրտիչյան Ա., Վերմիշյան Հ., Բալասանյան Ս.**, «Անկախության սերունդ: Հետազոտություն երիտասարդների շրջանում»: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, Ե., 2016, էջ 12, <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/13148.pdf>, հասանելի էր՝ 27.03.2022:

պնդել այն բոլոր պայմանները, որոնք երիտասարդներին կերաշխավորեն աշխատանք իրենց մասնագիտացման ոլորտում: Չպետք է հովանավորչությունը դեր խաղա աշխատանքի անցնելու և կարիերա կառուցելու հարցում. այն իր հերթին մեծացնում է սոցիալական կախվածությունը և սեփական խնդիրները լուծելու անհնարինության շրջանակը:

Որպես կրթության յուրատեսակ ձև՝ ոչ ֆորմալ կրթությունը թույլ է տալիս սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչներին, հատկապես երիտասարդներին ձեռք բերել և զարգացնել շարունակ փոփոխվող միջավայրի պահանջներին և պայմաններին համապատասխան հմտություններ, կարողություններ և գիտելիքներ: Այդ ոլորտը կանոնակարգող հայեցակարգի կիրարկումը ցույց է տալիս, որ պետությունը ոչ միայն պետք է արժևորի ոչ ֆորմալ կրթության նշանակությունը, չափանիշների մշակման և ներդրման կարևորությունը, այլև աջակցի ոլորտին առնչվող ծրագրերի և նախաձեռնությունների իրականացմանը:

Անհրաժեշտ է, որ պետությունը աջակցի միջազգային երիտասարդական համագործակցության զարգացմանը, երիտասարդական փոխանակման և միջմշակութային երկխոսության հաստատման ծրագրերին, տարածաշրջանային և միջազգային կրթամշակութային, գիտատեխնիկական ծրագրերում ՀՀ երիտասարդության ներգրավմանը²¹⁸: Առանձնակի կարևորություն ունի ՀՀ-Արցախի Հանրապետության-սփյուռքի երիտասարդական եռամիասնության միջև հոգևոր-մշակութային, գիտակրթական, սոցիալ-տնտեսական, հասարակական կապերի հաստատումն ու զարգացումը՝ դրանք համարելով պետական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը:

²¹⁸ Տե՛ս ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարության նախագիծ, էջ 19-20:

2012 թ. ՀՀ երիտասարդական քարտի միջոցով երիտասարդությունը տեղաշարժի մասնակի համաձայնագրի անդամ է, որի շրջանակներում պետությունը հանձն է առել աջակցել երիտասարդական շարժունակության ծրագրերի իրականացմանը: Այսպես, երիտասարդական շարժունակությունը դիտվում է որպես գործիք՝ խթանելու երիտասարդների անձնական և մշակութային զարգացումը՝ նպաստելով երիտասարդների մասնակցությանը և ոչ ֆորմալ կրթությանը: Երիտասարդության շարժունակության առանցքային խնդիրներից մեկն է երիտասարդների տարբեր խմբերի շրջանում հավասար հնարավորությունների ընձեռումը, երիտասարդներին առաջարկվող ծառայությունների մատչելիության ապահովումը²¹⁹:

Հետագոտությունների միջոցով երիտասարդության կարիքների գնահատումը ենթադրում է երիտասարդության խնդիրների վերհանում՝ հիմնված ինովացիոն (նորարարական) մեթոդների և համակարգված մոտեցման վրա: Խնդիրների լուծման առավել արդիական առաջարկներ ներկայացնելու համար մեծ նշանակություն ունի երիտասարդների իրավունքների իրացման ուղղությամբ պարբերաբար մշտադիտարկում և համապարփակ ուսումնասիրություններ իրականացնելը:

ՀՀ կառավարության 2019-2023 թթ. ծրագրի համաձայն՝ երիտասարդության ոլորտում արդյունավետ քաղաքականություն իրականացնելու համար անհրաժեշտ է.

1. Մշակել և իրականացնել փոխկապակցված, համակողմանի և միջոլորտային ռազմավարության:

2. Նախատեսում է ներառական երիտասարդական քաղաքականության մշակման միջոցով ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ լսելի կդառնա բոլոր երիտասարդների ձայնը՝ առանց

²¹⁹ <https://rm.coe.int/pa-on-youth-mobility-through-youth-card-armenian/16809c8d57>, հասանելի էր՝ 26.03.2022:

որևէ խտրականության: Այսինքն՝ երիտասարդության հիմնախնդիրների մասին որոշումներ ընդունելիս պետք է հիմնվել նրանց տեսակետների և մտտեցումների վրա:

3. Ներդնել այնպիսի պայմաններ, որոնց միջոցով երիտասարդները կկարողանան լիարժեք ինքնադրսևորվել և կառուցել սեփական ապագան: Երիտասարդները, հնարավորություն ունենալով ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ, կարող են իրենց ունակությունները ներդնել որոշումների կայացման և տարաբնույթ խնդիրների դիմակայման, ինչպես նաև կոնֆլիկտների լուծման համար:

4. Բարձրացնել երիտասարդների հասարակական-քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային մասնակցության մակարդակը:

5. Մշակել երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմներ²²⁰:

Այսպիսով, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության²²¹ կողմից պետք է մշտապես երաշխավորվի երիտասարդության հիմնախնդիրների վերաբերյալ տարաբնույթ միջոցառումների իրականացումը, որոնց նպատակը առավել փաստարկված և արդյունավետ երիտասարդական պետական քաղաքականության մշակմանը աջակցելն է: Այն իրագործելու համար մեծ կարևորություն ունի երիտասարդական քաղաքականության գործընթացում ներգրավել տարաբնույթ երիտասարդական կազմակերպություններ և այն երիտասարդներին, որոնք

²²⁰ Տե՛ս ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառ. 08.02.2019 № 65-Ս որոշում, էջ 36-37, <http://www.gov.am/files/docs/3133.pdf>, հասանելի էր՝ 23.03.2022:

²²¹ Տե՛ս ՀՀ վարչապետի 01.06.2019 № 661-Լ որոշում, <http://edu.am/index.php/am/-about/view/76>, հասանելի էր՝ 07.07.2019:

իրենց դիտարկումներով և ոլորտում կատարած աշխատանքով կարող են ներդրում ունենալ տվյալ գործում:

ՀՀ երիտասարդական պետական քաղաքականությունը՝ որպես պետության կարևոր ոլորտներից մեկը համակարգող միջոցառումների ամբողջություն, ոչ միայն ուղղված է քաղաքացիների մեջ ձևավորելու ազգային արժեքներն ու ավանդույթները, հայրենիքի նկատմամբ պատասխանատվություն ունենալու գիտակցումը, այլև կրթամշակութային զարգացման և ինտեգրման լայն հնարավորություններ է ընձեռում: Համաշխարհայնացման պայմաններում նրանց համար միջմշակութային պայմանների ապահովումը պետք է գտնվի պետության հոգածության ներքո: Հարկ է նշել, որ աշխարհի գրեթե բոլոր երկրներում ոչ միայն սահմանվում է վերոհիշյալ քաղաքականության հիմնադրույթները, այլև համընդգրկուն քայլեր է տարվում այն իրագործելու ուղղությամբ:

Հարկ է նշել, որ երիտասարդության քաղաքականությունը ՀՀ զարգացման, հասարակության արդիականացման, աշխարհում մրցունակության դրսևորման կարևոր գրավականներից է: Իսկ հայ երիտասարդությունը միշտ եղել է և մնում է նաև մեր անվտանգության, պետական կարգի ու ազգային սահմանների պահպանման հիմնական երաշխավորը: Ասվածի վառ օրինակը Արցախյան ազատամարտի, Ապրիլյան քառօրյա և 44-օրյա պատերազմների երիտասարդներն են, որոնց մի մասն էլ զոհվեց հանուն հայրենիքի պաշտպանության գաղափարի: Ուստի զարգացման տեսլական կարող է ունենալ այն պետությունը, որի երիտասարդությունը ոչ միայն ֆիզիկապես ուժեղ է, այլև աչքի է ընկնում մտավոր բարձր ունակություններով: Առանձնակի կարևորվում է ոչ միայն ֆիզիկական ուժը, այլև հոգևոր կամքը և գիտակցության բարձր նկարագիրը: Միջազգային հարթակներում զարգացման և նորարարական գաղափարների առաջնաշման տեսանկյունից հաջողություն են ունենում այն պետությունները, որոնք առավել

մեծ ուշադրություն են դարձնում երիտասարդ քաղաքացու ինքնադրսևորմանը, այսինքն՝ խրախուսում և կարևորում են հասարակական-քաղաքական համակարգի յուրաքանչյուր ոլորտում նրա լիարժեք ինտեգրմանը:

Երիտասարդության զարգացվածությունը՝ նրա կողմից պետության մեջ տարաբնույթ գործունեություն իրականացնելը պետության նկատմամբ վստահության և հավատի ամենաբարձր գրավականն է, որի համար առանցքային դերակատարում ունի լեզվատիմ քաղաքական էլիտայի գործառնությունը: Հասարակության համախմբվածության և արդյունավետ երկխոսության տեսանկյունից երիտասարդը պետք է դաստիարակվի և կրթվի ոչ թե մտացածին, այլև իրատեսական գաղափարներով, այնպիսի գաղափարներով, որոնք բխում են հասարակական ընկալման տրամաբանությունից: Նախքան «հայրենասիրական» գաղափարներ առաջ քաշելը՝ անհրաժեշտ է, որ պետությունը առաջնահերթ ծրագրերում հանձն առնի և լուծի սոցիալական և նյութական միջաբք խնդիրներ: Ուստի հասարակության զարգացման գրավականներից է պետական ինստիտուտները մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող երիտասարդներով համալրելը, որոնց մասնագիտական ունակությունները և բարոյահոգեբանական բարձր մակարդակը նպաստելու են պետության ամրապնդմանը: Երիտասարդությունը՝ որպես հասարակության զարգացման հետևողական շարունակություն, իր կադրերի ներուժով կխթանի համակարգի հետագա զարգացմանը և կայունության ամրապնդմանը: Հասարակական-քաղաքական կյանքում գոյություն ունեցող երիտասարդության խնդիրների ամբողջությունը, պետության հոգածության ներքո գտնվելով և դրանց պարտադիր լուծումներ տալով, աստիճանաբար կնվազեցնի արտագաղթի ցուցանիշները:

3.1.1. Երիտասարդության քաղաքական ներգրավվածության հիմնական գործոնները ՀՀ-ում

Հասարակության սոցիալ-տնտեսական, մշակութային զարգացումը ապահովող ուժը երիտասարդությունն է, որը պետք է ակտիվ, շահագրգիռ մասնակցություն ունենա պետության առջև ծառայած խնդիրները լուծելու հարցում: Իսկ պետական իշխանությունը անհրաժեշտ է, որ ստեղծի պայմաններ երիտասարդների ինքնաիրացման և հասարակական գործընթացներում նրանց ակտիվ ներգրավվածության համար²²²: Ուստի անհրաժեշտ է համապետական մակարդակով մշակել և իրականացնել ծրագրեր, որոնք կաջակցեն երիտասարդների սոցիալականացմանը հասարակության մեջ, որն էլ աստիճանաբար կհանգեցնի նրանց դերի բարձրացմանը քաղաքական որոշումների կայացման գործընթացին՝ հասարակական, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում:

Քաղաքական սոցիալականացման գործում առանցքային դերակատարում ունի երիտասարդությունը. այդ մասին են փաստում պետությունների կողմից երիտասարդական քաղաքականության հայեցակարգային փաստաթղթերի և ռազմավարության հիմնադրույթների մշակումը և կիրարկումը:

Քաղաքական սոցիալականացումը մի գործընթաց է, որտեղ քաղաքացիական կողմնորոշումների ամբողջությունը պայմանավորված է համայնքային, պետական և միջազգային մակարդակներում քաղաքական, սոցիալական և տնտեսական համատեքստում տեղի ունեցող փոփոխություններով: Բարդությունները, որոնք բնութագրում են քաղաքական սոցիալականացման

²²² St' u **Соколов А.**, Современные институты молодежной политики в Европе: история становления и развития, Вестник международных организаций, 2009, № 1 (23), էջ 84:

գործընթացն ու դրա իրականացրած արդյունքները, ակնհայտորեն դրսևորվում են անցումային ժամանակահատվածներում²²³:

Մասնավորապես ՀՀ-ում երիտասարդական պետական քաղաքականությունը իրականացվում է մի կողմից՝ պետական կառույցների, մյուս կողմից՝ այդ ոլորտին առնչվող հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների միջոցով: Դրանք են.

1. Պետական հատված

ա) կառավարություն՝ առընթեր մարմիններ և վերջինիս կողմից ստեղծված կազմակերպություններ.

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,
- ՀՀ վարչապետին առընթեր երիտասարդության հարցերով խորհուրդ,
- ՀՀ մարզպետարանների, քաղաքապետարանների երիտասարդության հարցերով զբաղվող ստորաբաժանումներ,
- Կառավարության հովանու ներքո գտնվող կազմակերպություններ և հիմնադրամներ:

բ) ՀՀ Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի հանձնաժողով:

2. Հասարակական-քաղաքական հատված

- Երիտասարդական հասարակական կազմակերպություններ,
- Ուսանողական խորհուրդներ,
- Կուսակցությունների երիտասարդական թևեր,
- Երիտասարդական շարժումներ, նախաձեռնություններ:

²²³ Տե՛ս **Almond, G., Coleman J.**, “Introduction: A Functional Approach to Comparative Politics” In: *The Politics of Developing Areas*, Princeton University Press, 2015, էջ 26-33, <https://doi.org/10.1515/9781400866977-003>.

3. Միջազգային կազմակերպությունների համապատասխան ստորաբաժանումներ:

Արդի ժամանակաշրջանում ներպետական և միջպետական մակարդակներում արդյունավետ երիտասարդական քաղաքականություն իրականացնելու դերակատարներից կարելի է առանձնացնել ինչպես տարաբնույթ միջազգային կազմակերպություններ և երիտասարդական հասարակական կառույցներ, այնպես էլ քաղաքացիական հասարակության ինստիտուտներ: Այս առումով առանցքային է Եվրոպայի խորհրդի երիտասարդության և սպորտի տնօրինության և նրա հովանու ներքո գտնվող երիտասարդական տարբեր կենտրոնների, Եվրոպայի երիտասարդական հիմնադրամի և այլնի գործունեությունը, որոնք մշակում են մի շարք ծրագրերի իրավական և գործնական մեխանիզմներ՝ միտված համագործակցային և արդյունավետ երիտասարդական միջոցառումների իրականացմանը՝ ոչ միայն ներկերապական, այլև միջպետական մակարդակներում: Իսկ վերոհիշյալ տնօրինությունը կրթական, ինչպես նաև ֆինանսական աջակցություն է տրամադրում երիտասարդական հիմնախնդիրների լուծմանը ուղղված միջազգային նախաձեռնություններին, որոնք խթանելու են երիտասարդ քաղաքացիների շարժունակության ապահովումը, մարդու իրավունքների և բազմակարծության, ժողովրդավարական այլ արժեքների տարածումը²²⁴: Եվրոպական երկրների երիտասարդական ցանցի բազմաբնույթ առաքելությամբ և իրավական ապահովման տեսանկյունից, գործունեության տարբեր բնագավառներով պայմանավորված՝ կազմակերպությունները հնարավորություն են տալիս տարածաշրջանի երիտասարդությանը լուծել մի շարք խնդիրներ՝ քաղաքական,

²²⁴ St' u The future of work and youth, www.youthforum.org, հասանելի էր՝ 28.03.22:

սոցիալական, զբաղվածության, բնակության վայրի, կրթության, մշակութային կյանքին մասնակցության և այլն:

Երիտասարդության իրավունքներին առնչվող օրենսդրական ամրագրումը 1990-ական թթ. համաշխարհային պրակտիկայում դարձել է համընդհանուր երևույթ (երիտասարդության սոցիալական պաշտպանության մասին օրենքներ ընդունվեցին Ավստրիայում, Հունաստանում, Հնդկաստանում, Իսպանիայում, Իտալիայում, Չինաստանում, Հոլանդիայում, Շվեդիայում և այլուր): Աշխարհի շատ երկրներում ձևավորվել են երիտասարդության հարցերի պետական կառավարման մարմիններ, որոնք էլ իրականացնում են ներպետական և վերազգային բազմաթիվ ծրագրեր: Պետական երիտասարդական քաղաքականությունը դարձել է ՄԱԿ-ի նորմատիվա-իրավական մի շարք ակտերի և միջոցառումների անբաժան մասը (Երիտասարդության միջազգային տարի՝ 1985 թ., Երիտասարդության միջազգային տարվա տասնամյակ՝ 1995 թ. և այլն)²²⁵:

Երիտասարդության մասնակցությունը քաղաքական գործընթացներին առաջինը պատմության մեջ դրսևորվել է ԱՄՆ-ում: Հենց ԱՄՆ-ում է երիտասարդությունն առաջին անգամ գիտակցել իր կարևորությունը հասարակության մեջ: Առաջին երիտասարդական կազմակերպությունը ԱՄՆ-ում ձևավորվել է 1930-ականներին և կոչվել է "American Youth Congress", որն իր գործունեությամբ նպատակ ուներ պաշտպանելու մարդու հիմնարար իրավունքները: Սկզբնական շրջանում մինչև քսանմեկ տարեկան անձանց փորձում էին չթույլատրել զբաղվել հասարակական գործունեությամբ, սակայն Է. Ռուզվելտի աջակցությամբ

²²⁵ Տե՛ս Պետական երիտասարդական քաղաքականություն, http://www.epension.am/am/socialdict_p, հասանելի էր՝ 17.09.18:

այդ հարցը լուծվեց, և երիտասարդությանը ձայն տրվեց Սպիտակ տանը և Կոնգրեսում²²⁶:

Ներկայումս բազմաթիվ երկրներում երիտասարդական պետական քաղաքականությունը առավելապես տարբերվում է երիտասարդության իրավունքների ապահովման մեջ պետության առանձնահատուկ դերակատարման հարցերով: Օրինակ՝ ԱՄՆ-ում իրականացվող հայեցակարգի համաձայն երիտասարդության սոցիալականացումը դիտարկվում է պետական կառույցների նվազագույն մասնակցության վրա: Իսկ պետական երիտասարդական քաղաքականության այն մոդելը, որը բնորոշ է Շվեդիային, Ֆինլանդիային և մի շարք այլ երկրներին, երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների աջակցության միջոցառումները օրենքով կարգավորելը հիմնավորվում է պետության հատուկ դերակատարությամբ²²⁷:

Նշենք, որ նորանկախ ՀՀ-ում ստեղծված երիտասարդական կազմակերպությունները երիտասարդության հարցերի փոքր մասն էին կազմում և միայնց գոյության մասին տեղեկություն անգամ չունեին: Երիտասարդության քաղաքականության իրականացման մի շարք գործառնություններ կազմակերպություններն իրենք էին տարերայնորեն հանձն առել՝ առանց պետական համակարգված, նպատակաուղղված աջակցության: Այդ իսկ պատճառով էլ տեղին է նշել, որ ՀՀ-ում երիտասարդական քաղաքականության աշխուժացման գործում մեծ դեր են խաղում ոչ միայն երիտասարդական կազմակերպությունները, այլև՝ երիտասարդական շարժումներն ու նախաձեռնությունները: Դրանք, հանդիսանալով երիտասարդական գործունեության ամենակազմա-

²²⁶ Տե՛ս American Youth Congress, https://www.conservapedia.com/American_Youth_Congress, հասանելի էր՝ 15.03.2022:

²²⁷ Տե՛ս Պետական երիտասարդական քաղաքականություն, http://www.epension.am/am/socialdict_p, հասանելի էր՝ 17.09.18:

կերպված սուբյեկտը, մշտապես պետք է լինեն երիտասարդական պետական քաղաքականության կրողը և իրականացման հիմնական երաշխավորը՝ հիմնականում միտված լինելով երիտասարդության մասնակցության բարձրացմանը ոչ միայն Երևանում, այլև ՀՀ մարզերում: Մեծ կարևորություն ունի մարզային երիտասարդության մասնակցությունը հասարակական-քաղաքական գործընթացներին. նրանք պետք է ունենան բազմապիսի հմտություններ ձեռք բերելու և դրանք կատարելագործելու լայն հնարավորություններ, կարողանան հետազոտել և լուծել խնդիրներ: Ուստի ՀՀ մարզպետարանների աշխատակազմում երիտասարդական հարցերի մասնագետի հաստիքը գործնականում ստեղծվեց 2004 թ.՝ ՀՀ վարչապետի հանձնառությամբ²²⁸:

Մարզերում, երիտասարդները ավելի պասիվ են և հաճախ իրենց չեն տեսնում պետության կառավարման գործընթացում: Այդ առումով մարզային երիտասարդության ներգրավվածությունը հասարակության տարբեր հարաբերություններում հնարավոր է իրականացնել հետևյալ ուղղություններով.

1. Պետական ճիշտ և հետևողական կադրային քաղաքականության իրականացում, որը երաշխիքներ կապահովի երիտասարդության զբաղվածության և աշխատանքի ապահովման ոլորտում:

2. Տեղական մակարդակում երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական համակարգի ստեղծումը:

3. Երիտասարդ ընտանիքներին պետական օժանդակությունը:

4. Երիտասարդական կազմակերպությունների գործունեության աջակցությունը:

²²⁸ Տե՛ս ՀՀ վարչապետի 1997 թ. դեկտեմբերի 8-ի № 598 որոշում «ՀՀ մարզպետարանների աշխատակազմերում ստեղծել երիտասարդության հարցերով մասնագետի հաստիք»:

5. Այլ երկրների, հատկապես՝ սփյուռքահայ երիտասարդների հետ համագործակցության ապահովում:

6. Երիտասարդների հոգևոր և ֆիզիկական զարգացման, նրանց քաղաքական կրթության և հայրենասիրական դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

Հասարակության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում երիտասարդների իրավունքների և պարտականությունների հավասարակշռված ապահովման համար, բացի պետականից, ձևավորվում են նաև ոչ պետական կառույցներ:

Այսպիսով, երիտասարդական քաղաքականության նպատակը երիտասարդ քաղաքացու սոցիալականացումն է՝ նրա ստեղծագործ ներուժով հասարակության զարգացումը ապահովելը: Ըստ որոշ հեղինակների (օրինակ՝ Դ. Հոդգսոն²²⁹, Դ. Օուեն²³⁰, Ռ. Դալտոն²³¹ և այլք)՝ երիտասարդության քաղաքական սոցիալականացումը կարող է տեղի ունենալ երկու՝ քաղաքական և քաղաքացիական մասնակցություն ճանապարհներով: Ինչպես նշել է Դ. Օուենը, քաղաքական մասնակցության ուղղվածությունը ենթադրում է մասնակցություն քաղաքական ինստիտուտների գործունեությանը, ինչպես, օրինակ, թեկնածության առաջադրում, ընտրարշավ, քվեարկություն, հանրահավաք, կուսակցական անդամակցություն, քաղաքական բանավեճեր և այլն²³²: Ըստ Ռ. Դալթոնի՝ քաղաքական մասնակցությունը՝ որպես քաղաքա-

²²⁹ Տե՛ս **Hodgson D.**, Participation of Children and Young People in Social Work, Journal of Social Work, Vol. 3, 2006:

²³⁰ Տե՛ս **Owen D.**, Political Socialization in the Twenty-first Century. Paper presented for presentation at “The Future of Civic Education in the 21st Century” conference cosponsored by the Center for Civic Education, James Madison’s Montpelier, September 21-26, 2008, էջ 23:

²³¹ Տե՛ս **Dalton J. Russell**, Citizenship Norms and the Expansion of Political Participation, Political Studies 56 (1), (March), 2008, էջ 79, <https://doi.org/10.1111%2Fj.1467-9248.2007.00718.x>:

²³² Տե՛ս **Owen D.**, նշվ. աշխ., էջ 8:

ցի-սուբյեկտ, կապված է պարտավորությունների կատարման, որոշակի նորմերի պահպանման, իրավունքների իրագործման պարտականությունների հետ: Քաղաքական սոցիալականացման այս ձևը ենթադրում է սահմանափակ քաղաքական մասնակցություն՝ հիմնված միայն այն չափորոշիչների վրա, որոնք բնորոշ են գործող քաղաքական կարգին²³³:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում վերջին տարիներին երիտասարդությունը աչքի է ընկնում քաղաքացիական բարձր գիտակցությամբ, սեփական խնդիրները լուծելու միասնական և անկոտրում կամքի դրսևորմամբ: Այդ մասին են վկայում մի շարք քաղաքացիական նախաձեռնություններն ու բողոքի շարժումները, որոնցից են՝ «Մաշտոցի պուրակ» (2012 թ. Մաշտոցի պուրակում կրպակներ կառուցելու դեմ քաղաքացիական պայքար), «Ոչ 150 դրամին» (2013 թ. հանրային տրանսպորտի թանկացման դեմ պայքար), «Դեմ եմ» (2013 թ. քաղաքացիական անհնազանդություն՝ ուղղված կենսաթոշակային նոր համակարգի ներդրմանը, որի հիմնական պահանջը «Կուտակային կենսաթոշակների մասին ՀՀ օրենքում²³⁴» առկա պարտադիր բաղադրիչի վերացումն էր), «Էլեկտրիկ Երևան» (2015 թ. էլեկրաէներգիայի թանկացման դեմ պայքար), «Իմ քայլը» (2018 թ. Ս. Սարգսյանի պաշտոնավարման հնարավոր երրորդ ժամկետի դեմ պայքար):

Ուստի ՀՀ-ում ժողովրդավարացման, քաղաքացիական հասարակության կառուցման ընթացակարգերի հաջողության ամենակարևոր գրավականներից մեկը երիտասարդության մասնակցությունն է: Վերջին տարիներին ստեղծվել են կառավարման համակարգի գործուն կառույցներ և մեխանիզմներ՝ ՀՀ վարչապե-

²³³ Տե՛ս **Dalton, R.**, նշվ. աշխ., էջ 91-95:

²³⁴ Տե՛ս «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=106148>, (օրենքը իսբ. 21.06.14 ՇՕ-67-Ն), հասանելի էր՝ 24.02.2022:

տին կից երիտասարդական հարցերով խորհուրդ, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ստեղծված դրամաշնորհային ծրագրերի փորձագիտական հանձնաժողով, ՀՀ մարզերում գործում են մարզային երիտասարդական կենտրոններ՝ դրանց կառավարման համակարգում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավմամբ, որոնք ԶԼՄ-ների միջոցով ապահովվում են բնագավառի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ստացումը և տարածումը:

ՀՀ քաղաքական դաշտ նոր սերունդների մուտքն ապահովում է քաղաքական սոցիալականացումը՝ կարևորելով հասարակության քաղաքական զարգացման ընթացքը: Դա երկխոսության բազմամակարդակ հնարավորություն է ստեղծում պետության ինստիտուտի և քաղաքացու միջև, որն էլ, քաղաքական կայունություն երաշխավորելով, հնարավորություն է տալիս կառավարող ընտրանուն հանդես գալու որպես ժողովրդավարական քաղաքական մշակույթի կրող: Այդ առումով ՀՀ-ում խորհրդարանական կառավարման գործընթացում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում անձի սոցիալականացման բազմաչափությունը: Եթե այս կառուցակարգը հաջողությամբ է գործում, ապա անհատը ձեռք է բերում ոչ միայն անհրաժեշտ կրթական և մասնագիտական պատրաստվածություն, այլև շահագրգռող նպատակներ, ասոցիատիվ կապեր և արժեքներ, որոնք նույնականություն են ապահովում այս կամ այն սոցիալական խմբի հետ²³⁵:

Այժմ անդրադառնանք ՀՀ երիտասարդության քաղաքական և քաղաքացիական մասնակցության դրսևորումներին: Դեռևս 1988 թ. սկսած հայ ազգային շարժումը, 1991 թ. Խորհրդային

²³⁵ Տե՛ս **Մարգարյան Մ.**, ՀՀ քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրը խորհրդարանական կառավարման պայմաններում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2017, (2), էջ 120:

Միության փլուզումը, հայկական անկախ պետականության ստեղծումը ուղեկցվեցին հասարակական կենսաձևի արմատական փոփոխությամբ: Ժամանակակից հայ հասարակությունը գտնվում էր «անցումային փուլում»՝ միաժամանակ ձևավորելով ինքնուրույն անկախ պետություն: ՀՀ-ում ժողովրդավարացման գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ վերջինս ազգային-ազատագրական պայքարից էր բխել: Այսպես, նորանկախ ՀՀ-ում սկիզբ առավ գաղափարական միասնությունը, և ժողովրդավարացման առաջընթացը արմատավորեց լիբերտարիզմի գաղափարները. վերջինս չէր ընդունում ազգային-պահպանողական սահմանափակումները և ժխտում էր պետության ցանկացած նշանակալի ազդեցություն հասարակական կյանքում: Ըստ այդմ՝ հասարակական գործընթացները պետությունից տարանջատվել էին՝ առաջացնելով դյուրահավատություն, ինչպես նաև հասարակական հարաբերությունների անկայունություն: Թեկուզ այդ շարժումն համազգային էր և ուներ ընդգծված գաղափարական հիմքեր, որոնք արտահայտվում էին անկախության, ազատության, ազգային ինքնորոշման արժեքային կողմնորոշումներով, բայց և այնպես, այն ուղեկցվում էր ազատական-պահպանողական գաղափարական հակասություններով, քանի որ դրանում ընդգրկված էին տարբեր գաղափարների, արժեքային կողմնորոշումների կրողներ և քաղաքական տարբեր ուղղություններ ներկայացնող ուժեր²³⁶:

Հատկանշական է, որ այդ շարժման շրջանակներում առանցքային դեր խաղացին երիտասարդները: Առանձնապես ընդգծված էր երիտասարդության ազատության և անկախ երկրում ապրելու ձգտումը: Մրանք այն կարևոր որակներն էին, որոնք վճռորոշ նշանակություն ունեցան 1990-1994 թթ. ազգային-ազատագրա-

²³⁶ Տե՛ս **Енгоян А.**, Идеологические парадигмы переходного периода в Армении, Вестник ЕГУ, Международные отношения, Политология, 2013, էջ 35:

կան պայքարում, որի ակտիվ մասնակիցներից էր երիտասարդությունը:

Երիտասարդության քաղաքական մասնակցության հետխորհրդային փուլը հիմնվում էր մասնակցության ազատական և պլուրալիստական մոդելների վրա: Տվյալ դեպքում երիտասարդության քաղաքական մասնակցությունը ուղղված էր քաղաքական, սոցիալ-տնտեսական համակարգի զարգացմանը, սոցիալական արդարության սկզբունքի արմատավորմանը, համագործակցությանը և այլն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, թե երիտասարդությունը որքանով է ներգրավված տեղական և համապետական մակարդակներում որոշումների կայացման գործընթացին, կարող ենք որոշակի պատկերացում ստանալ երիտասարդության քաղաքական և քաղաքացիական մասնակցության մասին: Առաջին դեպքում՝ կուսակցական-քաղաքական մասնակցությունն էր, մասնակցությունը ընտրական գործընթացներին, մասնակցությունը տարբեր զանգվածային ակցիաներին (հանրահավաքներին, երթերին և այլ զանգվածային ակցիաներին): Իսկ երկրորդում՝ քաղաքացիական մասնակցության առանցքում, ՀԿ-ները, արհմիությունները, ուսանողական կառույցներն են, ինչպես նաև ՋԼՄ-ներն են:

Քաղաքական կուսակցությունը հասարակական-քաղաքական կյանքին մասնակցող քաղաքացիների կազմակերպություն է, որը ձևավորվում է քաղաքական շահի և նպատակների ընդհանրության հիման վրա²³⁷: Ցանկանալով մասնակցել քաղաքականությանը մարդիկ ստեղծում կամ ընդգրկվում են կուսակցությունների մեջ: Իշխանության նվաճումից հետո նրա գործունեությունը միտված է հետևյալ նպատակների իրականացմանը. ա)

²³⁷ Տե՛ս **Քեոյան Գ.**, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Ե., 2002, էջ 55-56:

պահպանել նվաճված իշխանությունը, ք) գործադրել իշխանությունը կուսակցության շահերին և ծրագրային դրույթներին համապատասխան: Կուսակցության՝ որպես քաղաքական ինստիտուտի առանձնահատուկ ոլորտի նպատակը իշխանության նվաճման և տիրապետման համար բացահայտ պայքարն է: Դրանով էլ այն տարբերվում է հասարակական կազմակերպություններից, որոնք, իրականացնելով մի շարք քաղաքացիական նախաձեռնություններ և շարժումներ, մասնակցում են քաղաքական կյանքին, բայց ոչ իշխանության անմիջական իրականացմանը²³⁸: Հետևաբար քաղաքական կուսակցությունները կազմակերպված քաղաքական մասնակցությունն ապահովող առանցքային ինստիտուտներ են, թեպետ ոչ բոլոր կուսակցություններն են արդյունավետ կատարում իրենց գործառույթները: Այդ իսկ պատճառով էլ ՀՀ-ում քաղաքական կուսակցությունների նկատմամբ հասարակության մեջ նույնպես առկա են հիմնականում ոչ բարյացակամ ու անհանդուրժողական տրամադրություններ, որոնք պայմանավորված են մի շարք գործոններով: Նախ՝ որոշ կուսակցություններ կարծես կտրված են հասարակությունից, անտեղյակ են նրա անդամների ինտիրներից և գործունեություն չեն ծավալում նրանց շահերի պաշտպանության ուղղությամբ: Երկրորդ տեսակետը այն էր, որ կուսակցությունների գաղափարական-ծրագրային դրույթների և իրական գործելակերպի միջև կա լուրջ անհամապատասխանություն:

Տարբեր քաղաքական կուսակցություններ ունենում են իրենց երիտասարդության թևերը և կառույցները, որոնց համար մեծ կարևորություն պետք է ունենա վերջիններիս կազմակերպված և նպատակամիտված գործունեությունը, որն էլ աստիճանաբար կնպաստի կուսակցությունը համալրել ոչ միայն մասնագիտա-

²³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 53:

կան բարձր պատրաստվածություն ունեցող, այլև կուսակցական գաղափարահենք կադրերով:

Երիտասարդների քաղաքական մասնակցության կարևոր ցուցիչներից է նաև ընտրություններին նրանց մասնակցությունը: Հարկ է նշել, որ նախկինում երիտասարդությունը, որպես կանոն, ակտիվ մասնակցություն չի ունեցել թե՛ տեղական, թե՛ համապետական ընտրական գործընթացներին: Երիտասարդների շրջանում խիստ մեծ էր աբսենտիստների (ընտրություններին չմասնակցողների) տեսակարար կշիռը: Նրանք իրենց չմասնակցելը բացատրում էին տարբեր պատճառներով.

- ունեն այլ հետաքրքրություններ,
- անտարբեր են քաղաքական գործընթացների նկատմամբ,
- իրենց ձայնը որոշիչ չէին համարում,
- չեն հավատում իշխանության համար պայքարողների խոստումներին,
- չեն վստահում ընտրությունների արդարությանն ու թափանցիկությանը:

Ընտրական գործընթացներին երիտասարդության մասնակցությունը մի կողմից կրում էր պասիվ բնույթ, իսկ մյուս կողմից բավականին ցածր էր գիտակցված ընտրություն կատարելու մակարդակը: Ակնհայտ է, որ ընտրությունները չեն սահմանափակվում միայն քվեարկություն իրականացնելով: Այն ենթադրում է մի շարք գործողությունների ու նախաձեռնությունների իրականացում, որոնք առավելապես գտնվում են ընտրությունների կազմակերպման ու վերահսկման տիրույթում:

Ըստ այդմ՝ կարող է հարց առաջանալ, թե ինչպես պետք է բարձրացնել ընտրական գործընթացներին երիտասարդության մասնակցության մակարդակը և քաղաքական մշակույթի առանցքային բաղկացուցիչ համարվող ընտրական մշակույթը:

Նշենք մի շարք գործոններ, որոնք կարող են նպաստել երիտասարդության ընտրական ակտիվության բարձրացմանը.

- բարելավել ընտրությունների կազմակերպման ու անցկացման որակը,
- համապետական մակարդակով մերժել և դատապարտել ընտրախախտումներն ու կեղծիքները,
- երիտասարդներին ակտիվորեն ներգրավել տարաբնույթ դիտորդական առաքելությունների ու exit-poll-երի²³⁹ աշխատանքներին:

Ակնհայտ է, որ նախկինում երիտասարդությունը, քաղաքական մասնակցության առումով, հստակ խնդիրներ ուներ: Այդ խնդիրների լուծման առաջնային պայմաններից մեկը կուսակցությունների դերի բարձրացումն էր և բանիմաց երիտասարդներին համամասնական ցուցակներում ընդգրկելը, ընտրական գործընթացներում երիտասարդների դերի բարձրացումը (հանձնաժողովի անդամներ, դիտորդական առաքելությունների անդամներ) և այլն:

Հասարակական-քաղաքական մասնակցության առավել կազմակերպված ու գիտակցված ձևերից է զանգվածային ակցիաներին (հանրահավաքներ, երթեր, ցույցեր և այլն) մասնակցությունը:

Չանգվածային ակցիաների կազմակերպումը դիտարկվում է որպես ծայրահեղ միջոց, և նախաձեռնող կողմը, որպես կանոն, նման գործողության գնում է այն պարագայում, երբ սպառվում են օրինական պայքարի ձևերը: Հատկանշական է, որ զանգվածային ակցիաներին հանրության և մասնավորապես երիտասարդու-

²³⁹ **exit-poll**-էքսպրես հարցումներ, որոնք իրականացվում են ընտրությունների օրը ընտրատեղամասերի մոտ: Այդ հարցման միջոցով կանխատեսվում են ոչ միայն ընտրությունների արդյունքները, այլև գնահատվում են ընտրությունների թափանցիկությունը և ընտրազանգվածի տրամադրությունները:

թյան մասնակցության դրդապատճառները և՛ օբյեկտիվ են, և՛ սուբյեկտիվ, ունեն և՛ ռացիոնալ, և՛ իռացիոնալ բնույթ: Մակայն պետք է նշել, որ երիտասարդության մասնակցությունը զանգվածային բողոքի ակցիաներին, հանրահավաքներին ու երթերին նախկինում բավականին ցածր էր: Ըստ այսմ՝ կարող ենք փաստել, որ երիտասարդությունը նախկինում չէր կարևորում քաղաքական մասնակցության տվյալ ձևը: Երիտասարդները չէին պատկերացնում, որ հանրահավաքներով, երթերով ու բողոքի այլ ակցիաներով հնարավոր է խնդիրներ լուծել: Այնինչ դրանք ժողովրդավարական հասարակարգի և քաղաքակիրթ պայքարի առավել արդյունավետ ձևերից են, որոնք ոչ միայն կարևոր են, այլև առանձնահատուկ ներգործություն ունեն որոշումներ կայացնողների և այլ պատասխանատու կառույցների հետագա գործունեության վրա:

Երիտասարդության քաղաքացիական մասնակցության առանցքում մեծ դերակատարում ունեն ՀԿ-ները, արհմիությունները, ուսանողական միություններն ու կառույցները, ինչ-որ իմաստով նաև ՋԼՄ-ները: Երիտասարդության քաղաքացիական մասնակցությունն ապահովում են ինչպես ֆորմալ (ՀԿ-ներ, արհմիություններ, ուսանողական միություններ, ՋԼՄ-ներ), այնպես էլ ոչ ֆորմալ կառույցները (երիտասարդական խմբերը, շարժումները, նախաձեռնությունները):

ՀՀ-ում վերոհիշյալ կառույցները գտնվում են կայացվածության տարբեր մակարդակներում: Դա հիմնականում պայմանավորված էր նախկինում երիտասարդության պասիվ մասնակցությամբ: Քաղաքացիական մասնակցությունն ապահովող օրենքների շարքում առանձնահատուկ տեղ ունի «Հանրաքվեի մասին»²⁴⁰, «Կուսակցությունների մասին»²⁴¹ և «Հասարակական կազ-

²⁴⁰ Տե՛ս «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75488>, հասանելի էր՝ 20.03.2022:

մակերպությունների մասին»²⁴² ՀՀ օրենքները, որոնք սահմանում են կուսակցություններ ու հասարակական կազմակերպություններ ձևավորելու, ինչպես նաև հանրաքվեի մասնակցելու կարգը, դրանց գործառնության իրավակազմակերպական առանձնահատկությունները:

Ի հավելումն դրան՝ նշենք, որ ներկայումս երիտասարդական քաղաքականության իրականացման գործում մեծ դեր են խաղում երիտասարդական հասարակական կազմակերպությունները: Երիտասարդական ՀԿ-ները, լինելով երիտասարդական պետական քաղաքականության իրականացման կազմակերպված սուբյեկտ, մշտապես պետք է լինեն երիտասարդական պետական քաղաքականության կրողը և իրականացման գլխավոր միջոցը:

ՀԿ-ները հանդիսանում են քաղաքացիական հասարակության առանցքային ինստիտուտներից մեկը: Ա. Պանարինի բնորոշմամբ «քաղաքացիական հասարակությունը քաղաքացիների և նրանց միավորումների ոչ քաղաքական (տնտեսական, բարոյահոգեբանական, կրոնական, մշակութային) հարաբերությունների ամբողջությունն է՝ հիմնված պետության հանդեպ ինքնագործունեության և ինքնավարության սկզբունքների վրա»²⁴³:

ՀԿ-ները կարևոր դերակատարություն ունեն հետևյալ ոլորտներում.

²⁴¹ Տե՛ս «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, ընդ. 16.12.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=110534>, հասանելի էր՝ 07.01.2022:

²⁴² Տե՛ս «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, ընդ. 16.12.2016, https://www.gov.am/u_files/file/kron/hasarakakan%20kazm_.pdf, հասանելի էր՝ 07.01.2022:

²⁴³ Տե՛ս **Панарин А.**, Политология. Западная и Восточная традиции, Учебник для вузов. М., 2000, էջ 2: <https://pravo33.wordpress.com/2012/03/12/a-c-панарин-политология-западная-и-во>, հասանելի էր՝ 25.10.18:

- հանրությանը իրազեկելու և այլընտրանքային տեղակատվություն մատուցելու գործում. հասարակական տարբեր հարաբերություններում առկա հիմնախնդիրների վերաբերյալ անաչառ տեղեկատվություն ձեռք բերելու և այն տարածելու գործառույթ են իրականացնում,
- հասարակության խոցելի և կարիքավոր խմբերի պաշտպանության ոլորտում,
- մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բնագավառում,
- կոռուպցիայի դեմ պայքարի գործում,
- կրթության և ժողովրդավարական արժեքներ տարածելու գործում:

Ըստ տարբեր ուսումնասիրությունների՝ մեծաթիվ են բարեգործական, մշակութային ուղղվածությամբ գործող ՀԿ-ները: Փոքր չէ նաև երիտասարդական կամ երիտասարդական հիմնախնդիրներով զբաղվող, իրավապաշտպան, մարզական, հայրենակցական, տնտեսական, կանանց, երեխաների հիմնախնդիրներով զբաղվող քաղաքացիական հասարակության ձևավորմանը ու ժողովրդավարությանն աջակցող, նաև միջազգային և գործունեության այլ ուղղվածություն ունեցող ՀԿ-ների թիվը: Այնուամենայնիվ, ՀՀ-ում պաշտոնապես գրանցված ՀԿ-ների ցուցանիշը չի կարելի դիտարկել որպես հասարակության մեջ «Երրորդ սեկտորի» զարգացվածության դրսևորում²⁴⁴: Նախ նշենք, որ ՀՀ-ում պաշտոնապես գրանցված ՀԿ-ների մեծ մասը միայն դեյուրե գոյություն ունի: Միաժամանակ քիչ չեն այնպիսի կազմակերպությունները, որոնց գործունեությունը սահմանափակվել է

²⁴⁴ Առաջին սեկտոր՝ պետություն և իշխանություն, Երկրորդ սեկտոր՝ ձեռներեցություն-մասնավոր հատված, Երրորդ սեկտոր՝ հասարակական շարժումներ և ՀԿ-ներ:

ստացված դրամաշնորհների արդյունքում իրականացված մեկ կամ երկու ծրագրով:

Այսպես, պայմանականորեն առանձնացրել ենք ներքոհիշյալ շարժառիթները, որոնք նպաստել և դեռևս շարունակում են խթանել ՀՀ-ում ՀԿ-ների ստեղծման գործընթացը.

1. հասարակական պահանջ արտահայտելուն միտված ՀԿ-ներ,

2. դրամաշնորհի ստանալու նպատակով ձևավորված ՀԿ-ներ,

3. ՀԿ-ներ, որոնք հանդիսանում են միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և ուղղակիորեն ձևավորվել են նրանց կողմից,

4. պետության կողմից ստեղծված ՀԿ-ներ²⁴⁵:

Հարկ է նշել, որ հայրենասիրական, ազգային ավանդույթների և մշակութային արժեքների պահպանման, տարածման և նմանատիպ երիտասարդական ՀԿ-ների թիվն անհամեմատ քիչ է: Այն զիջում է այլ ծրագրային նպատակներ հետապնդող երիտասարդական ՀԿ-ների թվին: Այդ իրողությունը կարելի է բացատրել թերևս նրանով, որ նման նպատակներով և հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների՝ միջազգային կազմակերպություններից դրամաշնորհներ ստանալու ակնկալիքները խիստ սահմանափակ են: Հետևաբար այդ դաշտում հայտնված ՀԿ-ները իրենց գործունեության ծավալման համար ֆինանսավորում ակնկալում են հիմնականում պետական կառույցներից և պետության ներսում գործող հիմնադրամներից:

ՀՀ երիտասարդական ՀԿ-ների մեծ մասը կարևորում է հայ հասարակության ինտեգրումը արևմտյան արժեհամակարգին²⁴⁶:

²⁴⁵ Տե՛ս **Վարդանյան Թ., Ավետիսյան Գ.**, Երիտասարդական ՀԿ-ների դերը Հայաստանում, «Նորավանք», Ե., 2005, էջ 10:

Այդպիսի ՀԿ-ները նյութական ակնկալիքներ չունեն պետական կառույցներից: Նրանց գործունեությունը հիմնականում միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներով է իրականացվում և, ի տարբերություն հայրենասիրական ու ներպետական մակարդակում գործունեություն իրականացնողների, դրանք ֆինանսապես կայուն վիճակում են: Այսպես, նրանց գործառնելով մի երկրում, բայց ֆինանսավորվելով մեկ այլ՝ երկրի կողմից ձգտում են նրանց պահանջները մոտեցնել մեր հասարակության պահանջներին: Դրանք հիմնականում ուղղված են համայնքային զարգացման ծրագրերի իրականացմանը (տարբեր կենցաղային խնդիրների լուծում, նյութական և սոցիալական օգնություն, բարեգործական միջոցառումների, ուսուցողական և ոչ ֆորմալ դասընթացների կազմակերպում, կրթական փոխանակման ծրագրերի և սոցիալական շարժունակության ապահովում, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների ապահովում, ներառյալ փոքր և միջին ձեռներեցության զարգացում, միջազգային երիտասարդական համագործակցություն և միջմշակութային երկխոսության զարգացում և այլն): Այսինքն՝ այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք բխում են բնակչության տեղական կարիքների և հիմնականում սոցիալական-տնտեսական հիմնախնդիրների տրամաբանությունից: Ըստ ՀԿ-ների ձևավորման դրդապատճառների՝ երրորդ խմբին պատկանող (այսինքն՝ միջազգային ցանցային կառույցների ներկայացուցիչներ հանդիսացող) ՀԿ-ները բավականին ուշագրավ գործառույթ են իրականացնում այդ խնդիրների ուսումնասիրման տեսանկյունից: Նախ նշենք, որ այդպիսի կառույցներն առա-

²⁴⁶ ՀՀ երիտասարդական ՀԿ-ների գերակշռող հատվածը ունի հետևյալ ուղղվածությունը՝ մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության, իրավապաշտպան-խորհրդատվական, երիտասարդների ակտիվության և ներգրավվածության խթանման և այլն:

վել քան արդյունավետ են գործում, քանի որ հիմնականում ունեն մշտական ֆինանսավորում, մտահոգված չեն դրամաշնորհ հայթայթելու խնդրով, որը չի կարելի ասել առաջին, երկրորդ և չորրորդ խմբերին պատկանող ՀԿ-ների մասին: Այդ խմբերին պատկանող հայաստանյան ՀԿ-ները հիմնականում չունեն գործունեության սեփական (այսինքն՝ ՀՀ-ում մշակված) ռազմավարություն, հաճախ հանդես են գալիս որպես ուղղակի միջնորդ հայ հասարակության և միջազգային ցանցային կառույցների միջև: Վերջիններս հատկապես գործում են և ողջ աշխարհում հայտնի են որպես մարդու իրավունքների պաշտպանության կարևոր օղակներ: Հաճախ նրանք կարող են ինչպես քննարկել, գնահատել, այնպես էլ որոշակի ազդեցություն ունենալ տարբեր երկրների ներսում ընթացող իրադարձությունների վրա²⁴⁷:

Ուստի նկատելի է, որ դրանց գործունեությունը հիմնականում պայմանավորված է միջազգային դրամաշնորհների գերակայություններով և նրանց հայտարարած թեմատիկայով: Այդ մասին փաստում են հետևյալ կետերը.

- ՀԿ-ներն ավելի մոտ են միջազգային կազմակերպություններին, քան պետությանը:

- ՀԿ-ները փորձում են հարմարվել դրամաշնորհային ծրագրերին՝ համոզելով, որ իրենք այդ ծրագրի համար էլ ստեղծվել են, օրինակ, հանուն մարդու իրավունքների պաշտպանության, ժողովրդավարական արժեքների տարածման և այլն:

- ՀԿ-ներն աշխատում են համադրել ֆինանսավորողների և շահառուների պահանջները, որը բավականին դժվար է:

- Տեղի է ունենում մշակութային ներհոսք. այսինքն՝ առավել քան երբևէ, կարևոր է հաշվի առնել ազգային նկարագիրն ու մշակութային առանձնահատկությունները: Կան ՀԿ-ներ, որոնք

²⁴⁷ Տե՛ս Վարդանյան Թ., Ավետիսյան Կ., նշվ. աշխ., էջ 30-31:

ծրագրեր են իրականացնում անկախ իրենց սկզբունքներից ու նպատակներից՝ ըստ դրամաշնորհի հայտարարած ուղղվածության, որն էլ, անկասկած, երբեմն բացասական ազդեցություն է թողնում՝ հեռացնելով ՀԿ-ներին հայ հասարակության հիմնախնդիրներից²⁴⁸:

ՀՀ-ում ՀԿ-ներից շատերը առանցքային դերակատարում ունեն երիտասարդության սոցիալականացման, քաղաքական կյանքին մասնակցության և հասարակական տարբեր հարաբերություններում ինտեգրման համար: Նշենք, որ մի շարք ՀԿ-ների արդյունավետությունը նրանում է, որ վերջիններս հնարավորություն են տալիս երիտասարդությանը ինքնադրսևորվել, համախմբվել և միասնական գործունեություն ծավալել՝ միտված լինելով հասարակության հետևողական զարգացմանը:

Հարվարդի Ջ. Քենեդիի անվան կառավարման դպրոցի և Միրակուզի համալսարանի հետազոտող Ա. Օհանյանը իր հոդվածներից մեկում նույնպես անդրադարձել է ՀՀ հասարակական ոլորտի հիմնախնդիրներին: Հեղինակը ոչ միայն շեշտադրել է ՀԿ-ների նշանակալից դերակատարությանը քաղաքացիական հասարակության կայացման գործում և ՀՀ-ում «Երրորդ սեկտորի» զարգացման առանձնահատկությունները, այլև ներկայացրել է իր մտեցումներն ու առաջարկները նշված ոլորտում արդյունավետ քաղաքականություն իրականացնելու վերաբերյալ: Այսպես, ՀՀ-ում հասարակություն-իշխանություն կապը ամրապնդելու նպատակով, նշել է Ա. Օհանյանը, անհրաժեշտ է ստեղծել ՀԿ-ների համար ներքին ռեսուրսների հնարավորություն՝ որոշակի

²⁴⁸ «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում. 2004 թ. համեմատական հետազոտություն», Ե., 2004, էջ 82, (հղումը տե՛ս **Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 26-27):

հարկային արտոնություններ սահմանելով այն անհատների և ձեռներեցների համար, ովքեր կաջակցեն ՀԿ սեկտորին²⁴⁹:

Ուշագրավ է, որ ՀԿ-ների գործունեությանը անդրադարձել է նաև ՌԴ նախագահ Վ. Պուտինը Դաշնային ժողովի իր ելույթում՝ կարևորելով ՀԿ սեկտորի ստանձնած հասարակական գործառույթը: Նա նշել է, որ առանց կայացած քաղաքացիական հասարակության՝ մարդկանց հրատապ խնդիրների արդյունավետ լուծումը անհնար է²⁵⁰: Միաժամանակ, ՌԴ նախագահը, արտահայտելով իր դիտարկումները և գնահատականը երկրում «Երրորդ սեկտորի» գործունեության վերաբերյալ, նշել է, որ մի շարք ՀԿ-ների համար գերակա է միջազգային հեղինակավոր հիմնադրամներից ֆինանսական օժանդակություն ստանալը, մյուսների համար՝ կասկածելի խմբային և առևտրային շահերին ծառայելը, այն ժամանակ, երբ պետության և քաղաքացիների առջև ծառայած սուր խնդիրները նրանց կողմից մնում են անտեսված²⁵¹:

Այսինքն՝ կարելի է նշել, որ գործող երիտասարդական ՀԿ-ների զգալի մասը կարևոր գործառույթ է իրականացնում երիտասարդ կադրերի որոշակի կազմակերպչական ունակությունների, հմտությունների, մտավոր ներուժի, կարողունակության, մասնագիտական աճի, զբաղվածության, ռեսուրսների համախմբման ու կենտրոնացման ուղղությամբ:

Ներկայումս ՀՀ-ում բավական արդյունավետ գործում են այն երիտասարդական ՀԿ-ները, որոնց հաջողվել է մեկ կամ մի քանի ծրագրերի շրջանակներում երկխոսության դաշտ ձևավորել անգամ տարբեր կուսակցությունների անդամ և գաղափարական հակադիր կողմնորոշումներ ունեցող երիտասարդների միջև: Ան-

²⁴⁹ Տե՛ս **Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 38-39:

²⁵⁰ Տե՛ս Паслание президента РФ федеральному собранию, 26.05.2004, <http://krem-lin.ru/events/president/transcripts/22494>, հասանելի էր՝ 14.04.2019:

²⁵¹ Տե՛ս նույն տեղում:

կասկած, սա կարևոր քայլ է կառուցողական մթնոլորտի ձևավորման տեսանկյունից: Մասնավորապես, եթե հաշվի առնենք, որ այսօրվա երիտասարդները կերտելու են ՀՀ-ի ապագան, ապա նրանց շփման, համատեղ գործունեության ծավալման նպատակով որոշակի քայլերի ձեռնարկումը բխում է նաև ազգային ընդհանուր շահերից:

1988 թ. ՀՀ-ում շարժման սկզբնավորման մեջ ամենասակտիվ մասնակցություն ունեցավ ազգային գաղափարներով տոգորված երիտասարդությունը: Ուսանող և ակտիվ մի շարք երիտասարդներ ընդգրկվեցին գործող կուսակցությունների երիտասարդական կառույցներում՝ համագործակցելով միմյանց հետ: Քաղաքական ակտիվություն ցուցաբերած երիտասարդների մի մասը հետագայում ընդգրկվեց պետական և քաղաքական կառույցներում կամ մեկնեց սահմանները պաշտպանելու: Ձևավորված ՀՈՒՄ համալսարանական կորիզը 1993 թ. ակտիվ մասնակցություն ունեցավ ներքուհական ուսանողական ինքնակառավարման մարմինների (արհմիություններ, ուսխորհուրդներ) ձևավորման աշխատանքներին:

ՀՀ-ում անկախության ձեռքբերումը հանգեցրեց երիտասարդական շարժման ակտիվացմանը, սկսեցին ձևավորվել հասարակական-քաղաքական մի շարք կազմակերպություններ, որոնք ժողովրդավարական հասարակարգի զարգացման, քաղաքական ինստիտուտների կայացման ուղենիշներն էին: Ըստ այդմ՝ առաջիններից հարկ է նշել 1997 թ.՝ ՀՀ երիտասարդության ազգային խորհրդի (ՀԵԱՄ) հիմնադրումը: ՀԵԱՄ-ն հանդիսացել էր ներառող կազմակերպություն, որին անդամակցել են մի շարք երիտասարդական ՀԿ-ներ, ՀՀ բուհերի ուսանողական խորհուրդներ և քաղաքական կուսակցությունների երիտասարդական թևեր:

ՀՀ բուհական համակարգում ուսանողական կազմակերպությունների գործունեությունը սկսվել է 1990-ականների առաջին

կեսից: Ուսանողը, ընդունվելով բուհ, հնարավորություն է ստանում ներգրավվել իր բուհի ՈՒԳԸ-ում²⁵²: Իսկ անդամությունն ՈՒԳԸ-ներում կատարվում է առավել բարձր կուրսերում: Ուսանողությունը համարվում է երիտասարդության առավել կազմակերպված և հասարակության մեջ մտավոր բարձր ներուժով օժտված հատվածը: Այս առումով պատահական չէ, որ հատկապես ուսանողությունն է միջտ ակտիվ մասնակցություն ունենում հասարակական-քաղաքական գործընթացներին: Ուսանողական խորհուրդները հիմնականում դրսևորվում են ներքոհիշյալ գործառույթների շրջանակներում (բերված է ԵՊՀ-ի օրինակը)։

- ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
- նպաստել նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյաև հոգեբանական զարգացմանը,
- հանդես գալ ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանությամբ,
- կազմակերպել ուսանողների ժամանցն ու հանգիստը²⁵³:

Ուսանողների մասնակցության բարձրացման գործում մեծ դեր ունեն նաև ՈՒԳԸ-ները, որոնց առաքելությունն է աջակցել ուսանողների գիտական աշխատանքների իրականացմանը²⁵⁴: ՈՒԳԸ-ները իրականացնում են հետևյալ գործառույթները.

²⁵² Ուսանողական խորհուրդները ապահովում են ուսանողների մասնակցությունը բուհի կառավարմանը: Այն ներկայացուցչական, ինքնակառավարման բարձրագույն ընտրովի մարմին է. ֆակուլտետից ընտրում է տարբեր կուրսերի ուսանողներից ներկայացուցիչներ, որոնք բուհի ուսանողների ընդհանուր ժողովում ընտրում են ղեկավար մարմիններ:

²⁵³ Տե՛ս Ուսանողական խորհրդի նկարագրությունը, <http://ysu.am/sc/hy/140032-1483>, հասանելի էր՝ 04.03.2022:

²⁵⁴ ՈՒԳԸ-ները բուհերում ուսանողների և ասպիրանտների կամավոր, ինքնակառավարվող և ընտրովի մարմիններ են: ՀՀ առաջին ՈՒԳԸ-ն հիմնադրվել է Մայր բուհում՝ ԵՊՀ-ում, 1947 թ.: ՀՀ անկախացումից հետո այն կրկին առաջինը վերահիմնադրվեց ԵՊՀ-ում՝ 1996 թ.:

- նպաստում է ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը՝ կազմակերպելով գիտաժողովներ, սեմինարներ և դասախոսություններ,
- հրատարակում է ուսանողների և ասպիրանտների գիտական աշխատանքներ,
- ՈԻԳԸ-ն՝ որպես ուսանողներին միավորող կառույց, խթանում է նրանց մասնակցությունը թե՛ ներպետական, թե՛ միջպետական ձևաչափով անցկացվող միջոցառումներին²⁵⁵:

Սակայն ՀՀ-ի մի շարք բուհերում ուսանողները այնքան էլ տեղեկացված չեն իրենց ուսանողական կառույցների մասին: Դա մի կողմից պայմանավորված է նրանով, որ դրանք չեն ապահովում ուսանողների մասնակցությունը իրենց ծրագրերին, իսկ մյուս կողմից ուսանողների մեծ մասը չի մասնակցում ուսանողական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին՝ այդ կառույցները չհամարելով իր շահերը ներկայացնող: Բացի այդ, ներգրավվելով երիտասարդները ձեռք կրերեն հասարակական գործունեության որոշակի փորձ, որը հետագայում կնպաստի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում իրենց հնարավորությունները առավելագույնս դրսևորելուն: Հարկ է նշել, որ, համեմատած պետական բուհերի, ոչ պետականներում ուսանողական կազմակերպությունները ձևավորվել են ավելի ուշ, իսկ դրանցից շատերում նման կառույցներ մինչև օրս գոյություն չունեն կամ եղածներն էլ ձևական են, երբ խնդիրը վերաբերում է ուսանողների մասնակցությանը բուհի կառավարմանը²⁵⁶:

Երիտասարդության քաղաքացիական և քաղաքական մասնակցությունը ապահովող հիմնական գործոններից են համար-

²⁵⁵ Տե՛ս Ուսանողական գիտական ընկերության պատմությունը, <http://ysu.am/sss-hy/about-us>, հասանելի էր՝ 04.03.2022:

²⁵⁶ Տե՛ս Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց, Ե., 2007, էջ 151-152:

վում նաև թվային տեխնոլոգիաները: Ներկայումս ՀՀ երիտասարդությունը տեղեկատվական ռեսուրսներին տիրապետելու բարձր հմտություններ ունի: Սոցիալական ցանցերում երիտասարդության ընդգրկվածության մակարդակից և այդ ցանցերում նրանց տեղեկատվական վարքի բնույթով տեղեկատվական հաղորդակցությունն անհրաժեշտ է դիտարկել որպես սոցիալական վարքի կառավարման չափանիշ:

Այսպիսով, ՀՀ-ում քաղաքացիական մասնակցության դրսևորումն արդեն վկայում է քաղաքացիական հասարակության զարգացման մասին, ինչը ընկալվում է որպես հայ հասարակության ժողովրդավարացման ցուցիչ: Հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտների զարգացվածության աստիճանով է պայմանավորված ինչպես տվյալ հասարակության ժողովրդավարացման մակարդակը, այնպես էլ հասարակության մեջ մրցակցությունն ու համագործակցությունը, որոնց գործարկելիության պայմաններում միայն հնարավոր կլինի իրականացնել արդյունավետ պետական քաղաքականություն:

Պետական քաղաքականության արդյունավետության կարևոր չափանիշներից է նաև կադրային հետևողական քաղաքականություն վարելը՝ հիմնվելով մասնագիտական բարձր պատրաստվածության և հմտությունների վրա: Քաղաքական ընտրանու հավաքագրումը առանցքային նշանակություն ունի համակարգի կայուն գործառնության և զարգացման տեսանկյունից, քանի որ ինչպիսին ընտրանու որակն է, այնպիսին նրա կառավարումն է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական մասնակցությունը ժողովրդավարական պետության կայացման և քաղաքականության իրականացման ինստիտուցիոնալ մեխանիզմն է և քաղաքականության սուբյեկտների գործունեությունը՝ վարքագծի տարբեր դրսևորումներով: Քաղաքական մասնակցության մշակույթը դիտարկվում է որպես ժողովրդավարական համախմբման կարևոր գործոն: Հետևաբար քաղաքական մասնակցությունը քաղաքագիտության ուսումնասիրության հիմնական հասկացություններից է, և տարբեր ժամանակներում մի շարք տեսաբաններ այն մեկնաբանել են այլ մոտեցմամբ: Այսպես, ժամանակակից հասարակական-քաղաքական փոխակերպումների արդյունքում մասնակցության հիմնախնդրի տեսական վերլուծությունը ցույց է տալիս, որ համաշխարհայնացման պայմաններում քաղաքական կյանքին մարդկանց ներգրավվածության ձևերն ու սկզբունքները աստիճանաբար փոփոխության են ենթարկվում, վերանայվում են իշխանության իրականացման ավանդական գործիքակազմն ու պատկերացումները:

Ի հավելումն դրան՝ նշենք, որ քաղաքական մասնակցության մշակույթը տեղեկատվական հասարակության ձևավորմանը գուգահեռ հետզհետե ավելի է արդիականացվում. խիստ հրատապ են դառնում հասարակական-քաղաքական կյանքում մասնակցային նոր կառուցակարգերի ներդնումը, դրանց ինստիտուցիոնալ ամրագրումն ու հասարակության քաղաքացիական գիտակցության մեջ մասնակցային մշակույթի ձևավորումը՝ որպես համախմբված ժողովրդավարական հասարակարգի կայացման առանցքային նախապայման: Արդի դարաշրջանում ոչ կոնվենցիոնալ մասնակցային գործողությունները ժողովրդավարական քաղաքական համակարգերի կայուն գործառնության հիմքն են,

քանի որ վերջիններին միջոցով է ապահովվում քաղաքացիների ազատ կամարտահայտման սկզբունքները: Ինչպես կոնվենցիոնալ, այնպես էլ ոչ կոնվենցիոնալ գործողությունները միայն ինստիտուցիոնալ օրենսդրական նորմերի ամրագրման և կիրառման միջոցով կարող են արդյունավետ գործառնել՝ զերծ ամեն տեսակ ոչ իրավաչափ, բռնի արարքներից:

Այսպիսով, ամփոփելով մենագրության շրջանակներում իրականացված հիմնական արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ՝

- քաղաքացիների ակտիվ մասնակցությունը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին ժողովրդավարական կառավարման և քաղաքացիական հասարակության կայացման հիմնական սկզբունքներից մեկն է: Վերոհիշյալով քաղաքացիները ոչ միայն իրենց քաղաքացիական և քաղաքական իրավունքների կրողն են, այլև վերահսկում են պետական կառավարման համակարգի հաշվետվողականությունն ու թափանցիկությունը:

- Քաղաքական գործընթացներում քաղաքացիների ներգրավվածությունը հիմնականում դրսևորվում է ընտրական մասնակցությամբ. ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս, քվեարկությունը քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու միջոց է:

- Ընտրություններին քաղաքացիների մասնակցությունը պայմանավորված է ոչ միայն իրավական և կառուցվածքային ընթացակարգերով, այլև ընտրողների իրազեկությամբ, ընտրության տեսակից և քարոզարշավի ընթացքում նրանց գիտակցությամբ: Այդ իսկ պատճառով էլ ընտրական գործընթացի կազմակերպումը, հիմնվելով ընտրական իրավունքի սահմանադրական սկզբունքների ընդունման և կիրառելիության վրա, ժողովրդավարական հասարակարգի կայացման կարևոր նախադրյալներից մեկն է: Առանց ընտրության արդարացի կազմակերպման՝ հնա-

րավոր չէ իրականացնել պետական արդյունավետ քաղաքականություն:

- Ասվածից պարզ է, որ ազատ և արդար ընտրություններ անցկացնելու միջոցով ոչ միայն քաղաքական և քաղաքացիական իրավունքի սկզբունքներն անխախտ կիրագործվեն, այլև երկրում տեղի կունենա կառավարող ընտրանու փոփոխություն՝ քաղաքական համակարգը համալրելով մասնագիտական մեծ ներուժ և մտավոր բարձր կարողություններ ունեցող անհատներով, որոնց մասնագիտական պատրաստվածությունը, ունակություններն ու բարոյահոգեբանական բարձր նկարագիրը նպաստելու են հանրային ինստիտուտների ամրապնդմանը, որը վճռորոշ է համախմբվածության և մոբիլության տեսանկյունից:

- Հասարակարգերի արդիականացման փուլում ավանդական մոդելները մեծ նշանակություն են ձեռք բերում քաղաքական մասնակցության նոր ձևեր ներդնելով: Մասնավորապես, քաղաքական մասնակցության տեսակներից լայնորեն տարածված և ներկայումս էլ կիրառելի են քաղաքացիական անհնազանդությունները, բողոքները, հավաքների, ցույցերի կազմակերպումը և կամավոր այլ գործողություններ, որոնցում ներգրավված քաղաքացիներից պահանջվում են հմտություններ և ռեսուրսներ:

- Ժողովրդավարությունը՝ ժողովրդաիշխանությունը, անհրաժեշտ է, որ խթանի հասարակության յուրաքանչյուր անդամի ակտիվ մասնակցությունը և ներգրավվածությունը հասարակական-քաղաքական կյանքին, քանի որ միայն ակտիվ մասնակցությամբ է հնարավոր ժողովրդի և իշխանության միջև գոյություն ունեցող սահմանագծի հաղթահարումը և ժողովրդավարական երկրների կայացումը: Այն իրագործելու համար անհրաժեշտ է վերականգնել ժողովրդի հավատը և վստահությունը կառավարության գործունեության հանդեպ, ինչը մեծապես պայմանավորված է պետական այրերի անձնական օրինակով: Հետևաբար հա-

սարակական-քաղաքական կյանքին քաղաքացիների ակտիվ մասնակցությունը հանգեցնում է ոչ միայն լեզվատիմ օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորմանը, այլև նրանց գործունեության վերահսկողության և հաշվետվողականության սկզբունքի ապահովմանը, ինչը կերաշխավորի պատվիրակված ներկայացուցչին պահանջներ ներկայացնելը և նրա գործունեությանը հետևողական լինելը: Միայն այդ դեպքում է հնարավոր «իշխանությունը պատկանում է ժողովրդին» սահմանադրաիրավական դրույթի ամբողջովին գործառնումը:

- Ժողովրդավարական հասարակության մեջ, որտեղ գերակա են իրավունքի և օրենքի հավասարակշռության սկզբունքները, կարևոր է, որ յուրաքանչյուր քաղաքացու մեջ արմատավորվի այն համոզմունքը, որ ինքն է դրանք կրողն ու իրացնողը: Առավել քան կարևոր է յուրաքանչյուրի մասնակցության կշռադատված կամքի գործադրումը՝ առանց ուրիշների կողմից ճնշման և պարտադրման միջոցների:

- Արդի դարաշրջանի մասնակցային գործողությունների շարքում իր ուրույն տեղն ունի նաև ցանցային մասնակցությունը, առանց որի մասնակցային գործընթացը լիակատար գործառնել չի կարող: 20-րդ դարավերջին տեղեկատվական հեղափոխությանը ցանցային և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների ի հայտ գալով սկիզբ դրվեց տեղեկատվական դարաշրջանի մեկնարկին: Ներկայիս տեղեկատվական դարաշրջանում ցանցային տեխնոլոգիաների կիրառումը ոչ միայն թույլ է տալիս որոշակի գործողություններ ավելի հեշտ և արագ իրականացնել, այլև նպաստում քաղաքացիների ձեռնհասության մակարդակի բարձրացմանը:

- Հասարակական-քաղաքական համակարգի մյուս դերակատարների հետ քաղաքացիական հասարակության ինստիտուտների լիակատար գործակցությունը աստիճանաբար հան-

գեցնում է մասնակցության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրների իրագործմանը: Այսինքն՝ ինստիտուտներից յուրաքանչյուրը, համագործակցելով հասարակական համակարգի (հրավական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն) մյուս տարրերի հետ, կկարողանա ապահովել քաղաքակիրթ քաղաքացիական հասարակության հատուկ որակներ: Ըստ այդմ՝ պետության և քաղաքացիական հասարակության հետագա զարգացումն ու հասարակարգի կայունությունը պայմանավորված են իշխանություն-քաղաքացիական հասարակություն-մասնավոր հատված եռամիասնության համընդգրկուն գործակցությամբ, որի միջոցով հնարավոր կլինի իրական հիմքերի վրա դնել քաղաքացիական մասնակցության կառուցակարգերը:

- Համախմբված ժողովրդավարությունը ժամանակակից հասարակության կայացման նախադրյալն է: Ժողովրդավարական հասարակարգը ապահովում է հասարակության մեջ մրցակցությունն ու համագործակցությունը, որոնց առկայության և գործարկելիության պայմաններում միայն հնարավոր կլինի ձևավորել կայուն և զարգացած հասարակություն:

- Ժողովրդավարական քաղաքական կառավարման համակարգի կայացման և ամրապնդման գործում առանցքային դերակատարություն ունի մասնակցային մշակույթը: Այս առումով քաղաքական մասնակցային մշակույթը ժողովրդավարության համախմբման կարևոր նախադրյալ է հանդիսանում:

- Քաղաքական սոցիալականացման գործում առանցքային դերակատարում ունի երիտասարդությունը. այդ մասին են փաստում պետությունների կողմից երիտասարդական քաղաքականության հայեցակարգային փաստաթղթերի և ռազմավարության հիմնադրույթների մշակումը և կիրարկումը:

- Համակարգի համալրումը նոր կադրերով պետական ապարատի արդյունավետության բարձրացման գործոններից է:

Քաղաքական ընտրանու երիտասարդացումը վկայում է այն մասին, որ քաղաքական էլիտայի հավաքագրման մոդելը փոփոխության է ենթարկվել՝ համապատասխանեցնելով ժողովրդավարական կառավարման համակարգի սկզբունքներին: Բայց մինևույն ժամանակ երիտասարդ նոր կադրերը, չանցնելով քաղաքական սոցիալականացման բնականոն գործընթացը, որոշակի ռիսկայնություն են առաջ բերում քաղաքական որոշումների կայացման տեսանկյունից: Ուստի ինչպես անհրաժեշտ է համակարգը համարել պետական մտածողություն ունեցող, հանրային շահը անհատականից վեր դասող անհատներով, այնպես էլ պատասխանատու և բարձր պաշտոնների նշանակել քաղաքական սոցիալականացման որոշակի փուլ անցածներին:

Այսպիսով, քաղաքացիական և քաղաքական մասնակցության դրսևորումներն արդեն վկայում են մեզանում ձևավորվող և զարգացող քաղաքացիական հասարակության մասին, ինչը ընկալվում է որպես հասարակության ժողովրդավարացման ցուցիչ: Հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայացվածության աստիճանով է պայմանավորված տվյալ հասարակության ժողովրդավարացման մակարդակը: Քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում արմատավորվելու են ժողովրդավարական համախմբման ընթացակարգերը, որոնց գործարկման արդյունավետությամբ էլ պայմանավորված են լինելու հասարակության հետագա քաղաքական զարգացումները, քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացը, քաղաքացի-պետություն-հասարակություն փոխհարաբերությունների ամբողջությունը:

Вопросы политического участия на этапе демократической консолидации (РЕЗЮМЕ)

Цель исследования – раскрыть концептуальные основы понятия «политическое участие», чтобы направить вопросы политического участия в процессе демократической консолидации и исследовать особенности проявления политического участия. Анализ этих вопросов позволит сформировать культуру политического участия в Армении и выявить его формы на этапе демократической консолидации политической системы Армении.

В первой главе – "**Особенности политического участия в условиях демократической консолидации**" - обсуждаются теоретические основы исследования проблемы политического участия и развития эволюционных закономерностей в контексте общественно-политической мысли, анализируя политическое участие на этапе демократической консолидации. Делается вывод о том, что в связи с трансформацией общества все более распространяются нетрадиционные формы участия, в значительной степени, свидетельствующие о высоком уровне гражданского сознания общества. Обосновывается тот факт, что участие в политической жизни является институциональным механизмом для создания демократического государства и реализации политики, а также изучения деятельности политических деятелей в различных проявлениях поведения.

Во второй главе – "**Участие в политической жизни как фактор демократической консолидации в Армении**" – обсуждаются вопросы, связанные с процессом политического участия в Армении, и механизмы участия в контексте перехода к демократии и консолидации, обсуждаются вопросы влияния процесса участия

на этапе демократической консолидации. Проанализирован уровень вовлеченности граждан в избирательные процессы.

В третьей главе – **"Участие в политической жизни молодежи как необходимое условие социализации в демократическом обществе"** - Представлены механизмы вовлечения молодежи, а также особенности вовлечения в контексте политического участия. Обосновано, что участие молодежи является необходимым условием институционального развития процесса демократизации в общественных отношениях. В контексте развития молодежи необходимо улучшить условия жизни молодежи, повысить уровень ее вовлеченности в общественно-политическую жизнь, обеспечить их занятость и реализацию программ, направленных на решение различных проблем.

Основные выводы исследования:

1. Активное участие граждан в процессе принятия политических решений является одним из основных принципов демократического управления и гражданского общества.

2. Избирательный процесс, основанный на принятии и применении конституционных принципов избирательного права, является одной из важных предпосылок становления демократического общества.

3. На этапе модернизации систем, традиционные модели приобретают большое значение, внедряя новые формы политического участия. В частности, гражданское неповиновение, протесты, митинги и другие добровольные действия требуют от граждан навыков и ресурсов.

4. Граждане также участвуют в различных гражданских инициативах, направленных на решение социальных, общественных и других вопросов. Принимая во внимание, что эти действия могут в дальнейшем привести к активному участию граждан в

общественной и политической жизни, многие из них превращаются в политические проекты.

5. В демократическом обществе, где преобладают принципы и верховенство права, важно, чтобы каждый гражданин был убежден в том, что он несет их и передает. Более важно использовать взвешенную волю каждого участника без давления со стороны других.

6. В связи с этим, исключая элементы политического абсентизма из общественно-политической жизни, мы также уменьшаем доминирующую апатию, отчуждающую граждан от политической жизни общества, что приводит их к разочарованию и недоверию к политическим институтам и власти.

7. Следует отметить, что консолидированная демократия является предпосылкой современного общества. Важность и значение культуры участия подчеркивается ключевой ролью в эффективности процесса демократизации и укреплении демократической системы политического управления.

8. Одним из ключевых вопросов успешной реализации процесса демократизации и доведения его до стадии консолидации является вовлечение молодежи в общественные отношения.

**Issues of political participation in the phase of democratic
consolidation
(SUMMARY)**

The **primary purpose** of the study is to make a comprehensive analysis of the concept of "political participation", to highlight the issues of political participation in the process of democratic consolidation and to explore the peculiarities of the manifestation of the political participation. The analysis of these issues will allow to form the culture of the political participation in Armenia and reveal the forms of the political participation at the stage of democratic consolidation of the political system of Armenia.

The first chapter, "**Peculiarities of political participation in the conditions of democratic consolidation**", touches upon the theoretical bases for the study of the political participation issue, development of evolutionary patterns in the context of public-political thought, and analysis of the political participation in the stage of democratic consolidation. We have concluded that due to the transformation of the society, non-conventional participatory activities are increasingly spreading, largely attesting to the high level of civic consciousness of the society. Political participation is an institutional mechanism for establishing a democratic state and implementing policy, studying the activities of policy actors in different manifestations of behavior.

The second chapter, "**Political participation as a factor of democratic consolidation in Armenia**", presents the evaluation of the issues generating from the process of political participation in Armenia and the mechanisms of participation in the context of transition to democracy and consolidation, discusses the issues of the impact of the participatory process at the stage of democratic consolidation, and analyzes the degree of citizens' involvement in electoral processes.

The third chapter of the study, "**Political participation of youth as a necessary precondition for socialization in a democratic society**", presents the youth engagement mechanisms, as well as the peculiarities of enrollment as a key issue for political participation. It justifies that youth involvement is a necessary condition for institutional development of the democratization process in public relations. In the context of youth development, it is necessary to improve youth's quality of life, to increase the level of their involvement in the social and political life, and to ensure their employment and implementation of programs aimed at solving various problems.

The main points of **Conclusion** are as follows:

1. Active citizen participation in political decision-making is one of the basic principles of the democratic governance and civil society.
2. The electoral process, based on the adoption and application of the constitutional principles of the electoral right, is one of the important preconditions for the establishment of a democratic society.
3. In the modernization phase of the systems, the traditional models gain great importance by introducing new forms of political participation. In particular, civil disobedience, protests, rallies and other voluntary actions require skills and resources from citizens.
4. Citizens are also involved in various civic initiatives aimed at social, public and other issues. Whereas, these support actions may further lead to the active participation of citizens in public and political life, and many of them turn into political projects.
5. In a democratic society, where the principles and laws are predominant, it is important for every citizen to be convinced, that he carries and transmits them. It is more important to use the weighted will of each participant without pressure from others.

6. In this regard, by excluding elements of political absenteeism from social and political life, we also reduce the dominant apathy, alienating citizens from the political life of society, which leads them to frustration and distrust to political institutions and power.

7. It should be noted that consolidated democracy is a prerequisite for a modern society. The importance and significance of participatory culture is highlighted by the key role in the effectiveness of the process of democratization and strengthening of democratic political management system.

8. One of the important issues of successfully implementing the democratization process and bringing it to the consolidation stage is the involvement of youth in public relations.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական ակտեր

1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, ընդ. 26.12.2008:

2. «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիր, ՀՀ կառավարության 29 հունվարի 2010 № 98-Ն որոշում:

3. Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուսումնական ձեռնարկ, էջ 1-43, <https://res.elections.am/images/doc/TEC-guide2016.pdf> հասանելի էր՝ 20.11.2017:

4. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, ընդ. 22.12.2010:

5. «Կուսակցությունների մասին» ՀՀ սահմանադրական օրենք, ընդ. 16.12.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=-110534>, հասանելի էր՝ 07.01.2022:

6. «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց», Ե., 2007:

7. «Հայաստանի երիտասարդության ազգային զեկույց», Ե., 2011:

8. «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 ռազմավարություն», ՀՀ կառավարության 2012 դեկտեմբերի 27-ի № 1693-Ն որոշում:

9. «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ», ՀՀ կառավարության 2014 դեկտեմբերի 25-ի նիստի № 54 արձանագրային որոշում:

10. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 ռազմավարության նախագիծ:

11. ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025 թթ. ռազմավարության նախագիծ:

12. ՀՀ կառավարության ծրագիր, ՀՀ կառ. 08.02.2019 № 65-Ս որոշում:

13. ՀՀ վարչապետի 01.06.2019 № 661-Լ որոշում, <http://edu.am/index.php/am/about/view/76>, հասանելի էր՝ 07.07.2019:

14. «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները. սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն», Ե., 2013:

15. ՀՀ ընտրական օրենսգիրք, 25.05.2016:

16. «ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի № 98-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ՀՀ կառ. որոշման 2018 նախագիծ:

17. «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, ընդ. 22.10.1996:

18. «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, ընդ. 16.12.2016, https://www.gov.am/u_files/file/kron/hasarakakan%20kazm_.pdf, հասանելի էր՝ 07.01.2022:

19. «ՀԽ մասին» ՀՀ օրենք, ընդ. 07.03.2018, <http://publiccouncil.am/hy/legal-acts/>, հասանելի էր՝ 01.04.18:

20. Հանրաքվեի մասին» ՀՀ օրենք, ընդ. 23.03.2018, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=75488>, հասանելի էր՝ 20.03.2022:

21. ՀՀ Սահմանադրություն, Ե., ընդ. 06.12.2005:

22. ՀՀ Սահմանադրություն, Ե., ընդ. 06.12.2016:

23. ՀՀ վարչապետի 1997 դեկտեմբերի 8-ի № 598 որոշում «ՀՀ մարզպետարանների աշխատակազմերում ստեղծել երիտասարդության հարցերով մասնագետի հաստիք»:

24. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդ. 10.12.1948:

25. «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ», ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 25-ի նիստի №40 արձանագրային որոշում, հավելված 1:

Մենագրություններ

26. **Ալեքսանյան Ա.**, Ցիվիլիարխիկ դեմոկրատիա, Ե., ԵՊՀ, 2005, 128 էջ:

27. **Ենգոյան Ա.**, «Գաղափարախոսություն» հասկացության քաղաքագիտական մեկնաբանությունը, Ե., 2014, 56 էջ:

28. **Թաղևոսյան Գ., Չալոյան Ա., Ղազարյան Դ.**, Քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության ինստիտուցիոնալացման հեռանկարները զարգացման ծրագրերի համատեքստում, Հայաստանյան փորձի վերլուծություն, Ե., 2008, 95 էջ:

29. **Մկրտիչյան Ա., Վերմիշյան Հ., Բալասանյան Ս.**, «Անկախության սերունդ», հետազոտություն երիտասարդների շրջանում: Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, Ե., 2016, 232 էջ, <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/13148.pdf>, հասանելի էր՝ 27.03.2022:

30. **Շափաղաթյան Հ.**, Քաղաքական սոցիալականացում, ԵՊՀ հրատ., 2016, 129 էջ:

31. **Մերիեր Ն.**, Հայաստանում երիտասարդ կանանց և տղամարդկանց անցումն աշխատաշուկա, Աշխատանքի Միջազգային գրասենյակի «Զբաղվածության քաղաքականության» բաժին, Ժնև, 2014, 87 էջ:

32. **Վարդանյան Թ., Ավետիսյան Կ.**, Երիտասարդական ՀԿ-ների դերը Հայաստանում, «Նորավանք», Ե., 2005, 92 էջ:

33. **Քեոյան Գ.**, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Ե., 2002, 290 էջ:

34. **Аристотель**, Сочинения, т. 4, М., 1983, 830 с.

35. **Вятр Е.**, Социология политических отношений, М., Прогресс, 1979, 456 с.

36. **Гегель Г.**, Философия права, М., 1990, 524 с.

37. **Даль Р.**, Демократия и ее критики, “Российская политическая энциклопедия” (РОССПЭН), М., 2003, 564 с.

38. **Жиро Т.**, Политология, пер. с полского, Харьков, изд. Гуманитарного центра, 2006, 425 с.

52. **Huntington S., Nelson J.**, No easy choice: Political participation in developing countries, Harvard University press, 1976, 336 p.

53. **Linz J., Stephan A.**, Problems of democratic transitions and consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe, Johns Hopkins University Press, 1996, 504 p.

54. **McClosky H.**, Political Participation, in David L. Sills (ed), International Encyclopedia of the Social Sciences, Vol. 12, New York, Macmillan Co. & Free Press, 1968, 252 p.

55. **Milbrath L., Goel M.**, Political Participation: How and why do people get involved in politics?, 2nd edition, Washington, D.C., University Press of America, 1977, 223 p.

56. **O'Donnell G., Schmitter Ph.**, Transitions from authoritarian rule: Tentative conclusions about uncertain democracies, John Hopkins University Press, 1986, 208 p.

57. **Schmitter Ph.**, Interest systems and the consolidation of democracies: Reexamining democracy, essays in honor of Seymour Martin Lipset / Ed. by L. Diamond, Newbury Park, London, 1992, 384 p.

58. **Verba S., Nie N.**, Participation in America: Political democracy and Social equality, New York, Harper & Row, 1972, 452 p.

<https://www.press.uchicago.edu/ucp/books/book/chicago/P/bo3637096.html> հասանելի էր՝ 10.12.2018:

59. **Valehzuela A.**, The move to a socialist society // The breakdown of democratic regimes. Baltimore: The Johns Hopkins University Press, 1978, 135 p.

Ուսումնամեթոդական ձեռնարկ

60. **Միրումյան Կ.**, Քաղաքական ուսմունքների պատմություն, ուս. ձեռնարկ բուհերի համար, Ե., 2006, 544 էջ:

61. **Սարգսյան Ա.**, Քաղաքական մասնակցության հայեցակարգերը քաղաքական ուսմունքների պատմության շրջանակներում, ուսումնամեթոդական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., 2020, 78 էջ:

62. «Քաղաքագիտություն», ուս. ձեռնարկ ՀՀ բուհերի համար, ԵՊՀ, 2006, 586 էջ:

63. **Сморгунов Л.**, Сравнительная политология: Учебник для вузов, стандарт третьего поколения, СПб., Питер, 2012, 448 с.

Գիտական հոդվածներ

64. **Ալեքսանյան Ա.**, Դեմոկրատիայի ցիվիլիզարիսիկ չափման մասին, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019 № 2 (29), էջ 52-60:

65. **Գալստյան Խ.**, Քաղաքական երկխոսության հիմնախնդիրը ժողովրդավարության անցման համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», Ե., 2016, № 1 (19), էջ 32-48:

66. **Գալստյան Խ.**, Քաղաքական երկխոսության ինստիտուցիոնալացման հիմնախնդիրները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», Ե., 2016, № 3 (21), էջ 57-67:

67. **Մարգարով Ա.**, Ժողովրդավարություն և ժողովրդավարացում, «Քաղաքագիտություն» ուս. ձեռնարկ, ԵՊՀ, 2006, էջ 383-404:

68. **Մարգարյան Մ.**, ՀՀ քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրը խորհրդարանական կառավարման պայմաններում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2017, թիվ (2), էջ 115-124:

69. **Սարգսյան Ա.**, «Ընտրական գործընթացին ներգրավվումը որպես քաղաքական մասնակցության տարատեսակ (ՀՀ օրինակով)», Լրատու, Մեսրոպ Մաշտոց համալսարան, 2018, ISSN 1829-4227, էջ 243-252:

70. **Սարգսյան Ա.**, Քաղաքական մասնակցության արդի մեկնաբանության խնդրի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2019 № 2 (29), էջ 61-66:

71. **Даймонд Л.**, Прошла ли “третья волна” демократизации? “Политические исследования” (“Полис”), 1999, № 1, с. 1-13.

72. **Доган М.**, Легитимность режимов и кризис доверия, “Социологические исследования”, 1994, № 6, с. 147-156.
<http://ecsocman.hse.ru/socis/msg/17241454.html>, հասանելի էր՝ 14.02.2019:

73. **Енгоян А.**, Идеологические парадигмы переходного периода в Армении, Вестник ЕГУ, Международные отношения, Политология, 2013, 14 (1.6), с. 35-41.

74. **Карл Т., Шмиттер Ф.**, Демократизация: концепты, постулаты, гипотезы: (Размышления по поводу применимости транзитологической парадигмы при изучении посткоммунистических трансформаций, Полис, 2004, № 4, с. 1-26.

75. **Карл Т., Шмиттер Ф.**, Что есть демократия? <http://www.politnauka.org/library/dem/karl-shmitter.php>, հասանելի էր՝ 10.02.2018:

76. **Расрой Д.**, Переходы к демократии: попытка динамической модели, Полис, 1996, № 5.

77. **Соколов А.**, Современные институты молодежной политики в Европе: история становления и развития, Вестник международных организаций, 2009. № 1 (23), с. 84-99.

78. **Шмиттер Ф.**, Угрозы и дилеммы демократии, <http://www.politnauka.org/library/dem/schmitter.php>, հասանելի էր՝ 12.02.2018:

79. **Aleksanyan A.**, “Trade Unions as an actor of regional citizenship and European social integration of the South Caucasus.” EUCACIS Online Paper 5, 2019, pp. 1-13.

80. **Adler R., Goggin J.**, What do we mean by “Civic engagement”? Journal of Transformative Education 3 (3), 2005, pp. 236-253.

81. **Birch S.**, “Post-Soviet Electoral Practices in Comparative Perspective.” Europe-Asia Studies 63 (4), 2011, pp. 703-725, <http://www.jstor.org/stable/27975573>.

82. **Dalton J. Russell**, Citizenship Norms and the Expansion of Political Participation, *Political Studies* 56 (1), (March), 2008, pp. 76-98, <https://doi.org/10.1111%2Fj.1467-9248.2007.00718.x>.

83. **Ekman J., Amna E.**, “Political participation and civic engagement: Towards a new typology”, *Human Affairs* 22 (3), January 2009, pp. 283-300, <https://doi.org/10.2478/s13374-012-0024-1>.

84. **Freeman H.**, The Right of Protest and Civil Disobedience, *Indiana Law Journal*: Vol. 41: Iss. 2, Article 3, 1966, pp. 228-254, <https://www.repository.law.indiana.edu/cgi/viewcontent.cgi?article=3628&context=ilj>, հասանելի էր՝ 21.03.2019:

85. **Huntington S.**, by **Handayani M.**, On political participation and democracy, Department of Political Science Kulliyah of Islamic Revealed Knowledge and Human Science International University Malaysia, Semester 3, 2008-2009, pp. 1-15, <https://ru.scribd.com/doc/21326185/Samuel-P-Huntington-on-political-participation-and-democracy>, հասանելի էր՝ 13.09.18:

86. **Herz J.**, “Legitimacy, can we retrieve it?” *Comparative Politics* 10 (3), 1978, pp. 317-343, <https://doi.org/10.2307/421707>.

87. **Hudson M.**, Arab politics, “The Search for legitimacy”, New Haven: Yale University press, 1977, pp. 11.

88. **Ishkanian A.**, Reclaiming the emancipatory potential of civil society: a critical examination of civil society and democracy building programs in Armenia since 1991, *Armenian review*, 51 (1-4), 2009, pp. 9-34, ISSN 0004-2366.

89. **Lam W.**, An alternative understanding of political participation: challenging of the myth of political indifference in Hong Kong, *International journal of Public Administration*, 2003, vol. 26, pp. 473-496, <https://www.tandfonline.com/doi/abs/10.1081/PAD-120019232>, հասանելի էր՝ 13.12.2018:

90. **Linz J., Stepan A.**, “Toward consolidated democracies”, *Journal of democracy* 7 (2) (April), 1996, pp. 14-33, <http://adpm.pbworks.com/f/>

Democratic+Consolidation Linz+and+Stepan-1996.pdf , huuuũũtĩh tĩ` 18.09.18:

91. **Micheletti M.**, Individualized collective action, Department of political science, Stockholm University, Aalborg, Denmark, August 14-17, 2002, pp. 1-20.

92. **Mathews D., Prothro J.**, Negroes and the New Southern Politics, New York: Harcourt, Brace & World, 1966, pp. 16-551.

93. **Milbrath L. W.**, "Political participation." In the handbook of political behavior ed. by Samuel L.Long, Springer, Boston, MA, 1981, pp. 197-240, https://doi.org/10.1007/978-1-4684-3878-9_4 .

94. **Merrifield J.**, "The institutional and political factors that influence voter turnout." *Public Choice* 77, 1993, pp. 657-667, <https://doi.org/10.1007/BF01047865>.

95. **Najam A.**, The four Cs of Government-Third Sector Relations: Cooperation, Confrontation, Complementarity, Cooptation, Sustainable Development Policy Institute (SDPI), Research report series N^o 25, Pakistan, 2000, pp. 1-22:

96. **Norris P.**, Democratic phoenix: Reinventing political activism, Cambridge University Press, 2002, pp. 1-16, https://www.researchgate.net/publication/245862430_Democratic_Phoenix_Reinventing_Political_Activism , huuuũũtĩh tĩ` 24.03.2019:

97. **Nevitte. N., Canton S.**, The Role of domestic observers, Journal of Democracy, 8 (3), 1997, pp. 47- 61:

98. **Nekola M.**, Political participation and governance effectiveness: does participation matter?, January 2006, Charles University in Prague, pp. 1-12:

99. **Owen D.**, Political Socialization in the Twenty-first Century. Paper presented for presentation at "The Future of Civic Education in the 21st Century" conference cosponsored by the Center for Civic Education, James Madison's Montpelier, September 21-26, 2008, pp. 1-23.

100. **Przeworski A.**, Democracy and the Market: Political and Economic Reforms in Eastern Europe and Latin America (Cambridge, Cambridge University Press), 1991, <https://doi.org/10.1017/CBO9781139-172493>.

101. **Sorensen G.**, Democracy and Democratization: Processes and prospects in a changing world, San Francisco, Oxford: Westview Press, 1993.

102. **Siber I.**, Interest in elections and electoral participation, Faculty of Political Science, University of Zegreb, Vol. XLI, 2004, № 5, pp. 3-27.

103. **Saikkonen I. A-L.** “Electoral Mobilization and Authoritarian Elections: Evidence from Post-Soviet Russia.” Government and Opposition, 52(1), 2017, pp. 51-74. <https://doi:10.1017/gov.2015.20>.

104. **Scammon R. M.**, “Electoral Participation.” The ANNALS of the American Academy of Political and Social Science 371, (1) (May), 1967, pp. 59-71.

105. **Teorell J., Torcal M., Montero J.**, Political Participation: Mapping the Terrain. In J. W. van Deth, J. R. Montero, A. Westholm (Eds.), Citizenship and involvement in European democracies: A comparative analysis, London & New York, 2007, pp. 334-357.

106. **Talo C., Mannarini T.**, Measuring participation: Development and validation the participatory behaviors scale, Social indicators research 123 (3), September 2015, pp. 799-816.

Ջեկույցներ

107. «Երիտասարդների զբաղվածության ճգնաժամ. գործողություններ իրականացնելու կոչ», 2012, http://www.ilo.org/ilc/ILCSessions/101stSession/textsadopted/WCMS_185950/lang--en/index.htm, հասանելի էր՝ 03.11.2016:

108. «Երիտասարդական աշխատանքը Հայաստանում. մարտահրավերներ և հնարավորություններ», Երիտասարդական աշխատանքի

տանքի միջազգային փորձի ուսումնասիրություն, ավարտուն զեկույց, վերլուծություններ և առաջարկություններ, 2015, 122 էջ:

109. «Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը», Ե., 2011, https://transparency.am/files/publications/NED_publication_arm_3.pdf, հասանելի էր՝ 10.09.18:

110. "CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report", Y., 2014, pp. 1-36, https://www.civicus.org/images/-Civicus-Report_August-2014_FFfinal.pdf հասանելի էր՝ 03.06.18:

111. Enabling environments for Civic Engagement in PSRP countries (ARVIN). Social development notes, № 82, March 2003, pp. 1-5:

<https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/11319/279920PAPER0sdn82.pdf?sequence=1&isAllowed=y>, հասանելի էր՝ 03.04.2018:

112. “National youth aspirations research report”, RA Ministry of Sport and Youth Affairs. United Nations Development Program, Armenia, Y., 2012, 128 p.

Համացանցային ռեսուրսներ

113. Առցանց դրամաշնորհային համակարգ, <http://cragrer.am/-node/55>, հասանելի էր՝ 16.09.2018:

114. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=106148>, (օրենքը խմբ. 21.06.14 ՀՕ-67-Ն), հասանելի էր՝ 24.02.2022:

115. Կանանց ընտրական իրավունքի հայկական բանաձևը, [https:// https://chai-khana.org/hy/kanants-entrakan-iravownki-haykakan-banadzewe](https://chai-khana.org/hy/kanants-entrakan-iravownki-haykakan-banadzewe), հասանելի էր՝ 16.12.2018:

116. «ՀՀ երիտասարդների զբաղվածության հիմնախնդիրները: Սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերլուծություն», <http://www.minsportyouth.am/files/post/1463655073-2.pdf>, հասանելի էր՝ 03.11.2016:

117. Պետական երիտասարդական քաղաքականություն, http://www.epension.am/am/socialdict_p, հասանելի էր՝ 17.09.18:
118. Ուսանողական խորհրդի նկարագրությունը, <http://ysu.am/sc/hy/1400321483>, հասանելի էր՝ 04.03.2022:
119. Ուսանողական գիտական ընկերության պատմությունը, <http://ysu.am/sss/hy/about-us>, հասանելի էր՝ 04.03.2022:
120. Понятия "Гражданского общества", <http://kulturoznanie.ru/politology/ponyatiegrazhdanskogoobshhest/> հասանելի էր՝ 03.06.18:
121. Паслание президента РФ федеральному собранию, 26.05.2004, <http://kremlin.ru/events/president/transcripts/22494> հասանելի էր՝ 14.04.2019:
122. Цитаты о демократии, <http://www.democracy.ru/quotes.php>, հասանելի էր՝ 23.12.18 թ.:
123. American Youth Congress, https://www.conservapedia.com/-American_Youth_Congress, հասանելի էր՝ 15.03.2022:
124. “ Defining civil society”, <http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/TOPICS/CSO/0,,contentMDK:20101499~menuPK:244752~pagePK:220503~piPK:220476~theSitePK:228717,00.html>, հասանելի էր՝ 04.04.2018:
125. “Freedom House 2022, Nations in Transit Methodology”, <https://freedomhouse.org/report/nations-transit-methodology>, հասանելի էր՝ 23.03.22:
126. The future of work and youth, www.youthforum.org, հասանելի էր՝ 28.03.2022:
127. <http://www.powercube.net/other-forms-of-power/gramsci-anhegemony/> հասանելի էր՝ 10.06.2018:
128. “Resolution. A world fit for children”, <https://www.unicef.org/-publications29.10.2016>
129. <https://rm.coe.int/pa-on-youth-mobility-through-youth-card-armenian/16809c8d57>, հասանելի էր՝ 26.03.2022:

ԱՌՆԱԿ ԳԵՈՐԳԻԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՀԱՄԱԽՄԲՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ

АРНАК САРГСЯН

ВОПРОСЫ ПОЛИТИЧЕСКОГО УЧАСТИЯ НА ЭТАПЕ
ДЕМОКРАТИЧЕСКОЙ КОНСОЛИДАЦИИ

ARNAK SARGSYAN

ISSUES OF POLITICAL PARTICIPATION IN THE PHASE OF
DEMOCRATIC CONSOLIDATION

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումճյանի

Ստորագրված է տպագրության՝ 12.07.2022:
Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 12.125:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am